



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



**OSCE**  
Երևանի գրասենյակ

Շուշան Դոյլոյան  
Գոռ Աբրահամյան

## Տեղեկատվության ազատություն և հանրային կապեր

Մեղանի գիրք

Տեղեկատվության և հասարակայնության հետ  
կապերի բաժինների աշխատակիցների համար

Երևան 2009



Հեղինակներ՝

**Ծուշան Դոյլոյան (1-ին գլուխ)**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ  
ք.գ.թ., դոցենտ,

**Գոռ Աբրահամյան (2-րդ գլուխ)**

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի  
նախագահի մամուլի քարտուղար:

Խմբագիր՝

**Անահիտ Խուդավերդյան**

ՀՊԱՀ լրատվության եւ հասարակայնության  
հետ կապերի բաժնի վարիչ, ք.գ.թ.:

Ուղեցույցը պատրաստվել է ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի աջակցությամբ 2008 թվականին:

Ուղեցույցը վերատպվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Ուղեցույցում արտահայտված կարծիքներն ու հետեւությունները հեղինակներին են եւ պարտադիր չեն, որ արտահայտեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԵԱՀԿ-ի եւ կամ ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի տեսակետները:



---

## Բովանդակություն

<b>ԲԱԺԻՆ Ա. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ</b>	4
Ա.1 Տեղեկատվության ազատություն հասկացությունը և առանձնահատկությունները	4
Ա.2 Տեղեկատվության ազատության օրենսդրությունը, միջազգային սկզբունքները և հիմնական տարրերը	10
Ա.3 Տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը. ո՞ր մարմիններն են պարտավոր տրամադրել տեղեկատվություն	22
Ա.4 Տեղեկատվության ազատության սուբյեկտները. ովքե՞ր ունեն տեղեկատվություն ստանալու իրավունք	27
Ա.5 Տեղեկատվություն տրամադրելու կարգը և ձևերը	29
Ա.6 Տեղեկատվության ազատության սահմանափակումները	42
Ա.7 Տեղեկատվության ազատության օրենսդրության խախտման վարչական և քրեական պատասխանատվություն	49
<b>ԲԱԺԻՆ Բ. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ</b>	54
Բ.1 Հանրային կապերի կոմունիկացիոն տեսությունը	55
Բ.2 Լսարանների տեսակները, առանձնահատկությունները	67
Բ.3 Հանրության հետ ուղղակի շփումների միջոցները	70
Բ.4 Հանրության հետ անուղղակի կապեր	80
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	102



# ԳԼՈՒԽ Ա. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

## Ա.1 Տեղեկատվության ազատություն հասկացությունը և առանձնահատկությունները

**S**եղեկատվության ազատությունն այսօր դիտվում է որպես քաղաքացիական հասարակությունում մարդու իրավունքների պաշտպանության հիմնական երաշխիքներից մեկը: Իրազեկ եւ ակտիվ քաղաքացիական հասարակության ծեսափորման, իշխանության գործունեության վերահսկողության, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն եւ արդյունավետ միջոցը տեղեկատվության ազատությունն է: Ինչպես նշվում է Եվրոպական խորհրդարանական ասամբլեայի դեռեւ 1979թ. փետրվարի 1-ի որոշման մեջ. «Ժողովրդավարությունը կարող է պատշաճ կերպով գործել միայն, եթե ողջ ժողովուրդը եւ նրա կողմից ընտրված ներկայացուցիչները լիովին իրազեկված են»<sup>1</sup>: Ասամբլեան այն կարծիքն է հայտնել, որ «որոշ անհրաժեշտ քացառություններով, հասարակությունն իրավունք ունի ստանալ պաշտոնական տեղեկատվություն: Տեղեկատվության ազատությունը կօգնի հաղթահարել կոռուպցիան եւ պետական միջոցների վատնումը»<sup>2</sup>:

Անժխտելի է այն իրողությունը, որ տեղեկատվության վերահսկողությունը յուրաքանչյուր կառավարության համար սեփական սխալները եւ ձախողությունները քարքա՞նելու լավագույն միջոց է: Չե՞ որ իրազեկ հասարակությունում տեղ չի մնում կոռուպցիայի զարգացման համար: Այս իսկ հիմնավորմանը իրազեկ եւ բանիմաց հասարակության հայեցակարգը դրվում է ժողովրդավարության հիմքում: Չի կարող լինել ժողովրդավարություն առանց իրազեկ եւ բանիմաց քաղաքացիների առկայության:

Կառավարությանը հսկելու եւ երկրի կառավարմանն ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիներն անհրաժեշտ տեղեկատվության կարիք ունեն: Նրանք իրավունք ունեն ստանալ հասարակական հետաքրք-

1. Civil Liberties: Legal Principles of Individual Freedom, Edwin Shorts & Claire de Than, Sweet & Maxwell, էջ 243:

2. Նույն տեղում:

բուրյուն ներկայացնող կամ իրենց անձնական շահերը շոշափող տեղեկություններ, պետական մարմինների գործողությունների մասին տեղեկություններ, ինչպես նաև տեղեկացվել նախատեսվող կամ ընդունված որոշումների մասին: Միայն այս կերպ քաղաքացիները կարող են պատշաճ վերահսկողություն իրականացնել պետական իշխանության գործունեության վրա: Այս իսկ հիմնավորմանը արտահայտվելու ազատության միջազգային հասարակական կազմակերպություն ԱՐՏԻԿԼ 19-ը տեղեկատվությունը բնութագրել է որպես «Ժողովրդավարության թթվածին»<sup>3</sup>:

Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 2002թ. ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշվում է, որ տեղեկատվության ազատությունը՝

- **հնարավորություն է ընթեռում ճիշտ ընկալել եւ առանցքային կարծիք կազմել այն հասարակության մասին, որում ապրում է անհատը, եւ այն իշխանությունների վերաբերյալ, որոնք դեկավարում են իրեն: Միեւնույն ժամանակ խթանում է հասարակության շահերին առնչվող խնդիրների լուծմանը քաղաքացիների մասնակցությունը:**
- **Խրանում է պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը եւ նրանց օգնում է պահպանել իրենց ամբողջականությունը՝ խուսափելով կորուպցիայի վտանգից:**
- **Նպաստում է պետական կառավարման մարմինների օրինականության հաստատմանը՝ իրեւ հանրային ծառայություններ մատուցողների, եւ պետական իշխանության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը<sup>4</sup>:**

Տեղեկատվության ազատության մասին առաջին իրավական ակտն ընդունվել է Շվեյչարյում դեռևս 1766 թվականին: Սակայն տեղեկատվության ազատության հաստատմանը՝ իրեւ հանրային ծառայությունների ժամանակակից կոնստեքստով հիմնադրվում է Մարդու իրավունքների մասին համընդհանուր հոչակագրում: 1946 թվականին ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի որոշմամբ ընդունվում է՝ «Տեղեկատվության ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է եւ մյուս բոլոր ազատությունների անկյունաքարը: Այն կենսական նշանակություն ունի աշխարհում խա-

3. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003 p. 3: Թորի Մենդել ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության իրավական ծրագրերի դեկավարն է:

4. Զանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում, Երեւան, 2003, էջ 210:

դադություն եւ առաջընթաց ապահովելու համար: Պետությունների միջև փոխմբունումը եւ համագործակցությունն անհնար է առանց արրուն եւ առողջ հասարակական կարծիքի, որն էլ, իր հերթին, անբողոքին կախված է տեղեկատվության մատչելիությունից: Տեղեկատվության ազատությունը ներառում է անարգել կերպով տեղեկատվություն հավաքելու, ամենուր փոխանցելու եւ տարածելու իրավունքը»<sup>5</sup>:

Դիտարկելով մարդու իրավունքների ժառանգությունը՝ պարզ է դառնում, որ տեղեկություն ստանալը մարդու իմնարար իրավունքներից է եւ պատկանում է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների թվին: Դրա իրավական պաշտպանությունը քաղաքացիներին ոչ միայն հնարավորություն է տալիս ազատորեն փնտրել եւ ստանալ տեղեկություն, այլև լիարժեք գործադրել իրենց քաղաքական մյուս իրավունքներն ու ազատությունները: Այսինքն, առանց այս իրավունքի անհնար է իրականացնել ընտրելու եւ ընտրվելու, միավորվելու, պետության կառավարմանը մասնակցելու եւ մյուս քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական եւ ճշակութային իրավունքները (բնակարանի, սոցիալական ապահովության, առողջության պահպանման, կրթության իրավունքներ եւ այլն): Այն ծառայում է նաև սոցիալական, քաղաքական եւ տնտեսական հավասարության հասնելու համընդհանուր ձգտումին:

Տեղեկատվության ազատության օրենսդրությունը կարող է վերահսկողության ճիշտ մեխանիզմ սահմանել (օրինակ՝ օմբուլսմենի՝ մարդու իրավունքների պաշտպանի միջոցով), այն կարող է նաև ձեւավորել պրակտիկա բոլորի համար, նույնիսկ նրանց, ովքեր քիչ են հակված հետեւել դրան: Կարող է շրջադարձել սովորական դարձած գաղտնիության կանխավարկածը: Այն քաղաքացիներին օրինական իրավունք է տալիս ծանոքանալ պաշտոնական փաստաթղթերին, առանց հիմնավորելու, թե ինչու են հետաքրքրված դրանցով, իսկ մերժումն արդարացնելու քեզը դրվում է պետական փարչակարգի վիճ: SU օրենսդրությունները սահմանում են կոնկրետ ժամկետներ, որոնց ընթացքում փարչակարգը պարտավոր է պատասխանել տեղեկատվության տրամադրման դիմումներին, ինչպես նաև տեղեկատվության որոշակի կատեգորիաների ծանոքանալու իրավունք է նախատեսում: Շատ երկներում արտահայտման ազատության եւ տեղեկատվության ազատ փոխանակության սկզբունքները ամրագրված են սահմանադրության մեջ: Բայց եւ այնպես քաղաքացիների կողմից այդ իրավունքները իրականացնելու համար պա-

5. International Law Governing Communications and Information (A Collection of Basic Documents), Edward W. Ploman, Greenwood Press, 1982, p. 127.

հանջում է տեղեկատվության ազատության մասին հատուկ օրենսդրություն: Օրինակ՝ Հարավաֆրիկյան Հանրապետության 1996 թվականի սահմանադրությունը պարունակում է տեղեկատվության ազատության իրավունքին վերաբերող դրույթներ, ըստ որոնց այդ իրավունքները պետք է ամրագրվեն առանձին օրենքով: Տեղեկատվության ազատության պաշտպանության մասին օրենքը այնտեղ ընդունվեց 2000 թ.-ի փետրվարին: Մեզանում գործընթացը հակառակ ուղղությամբ ընթացավ: Նախ, ընդունվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, հետագայում՝ 2 տարի անց, 2005թ. նոյեմբերին այս իրավունքն ամրագրվեց նաև ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածում:

Ներկայումս տեղեկատվության ազատությունը հատկապես կարեւորվում է իրեն կոռուպցիայի դեմ հաջող պայքար իրականացնելու լավագույն միջոց: ԱՄՆ-ի Գերագույն դատարանի դատավոր Լուիս Բրանդես հայտնի արտահայտությունը հիմնավորում է այս միտքը. «Մի փոքր արեւի լույսը լավագույն ախտահանումն է»<sup>6</sup>:

Սա է քերենս պատճառը, որ ԱՄՆ-ի որոշ նահանգներում տեղեկատվության ազատության օրենքները պարզապես անվանվում են արեւի լույսի օրենքներ, դրանք բափանցում են իշխանական մուր միջանցքներ եւ կանխում կառավարության «մուր» գործողությունները: Պետական կառավարման համակարգի զարգացումը պահանջում է ընդլայնել պետական մարմինների գործունեության հրապարակայնությունը, բափանցիկությունը, հաշվետու լինելը եւ քաղաքացիական հասարակության ներգրավումը եւ մասնակցության ապահովումը որոշումների ընդունման գործընթացում<sup>7</sup>: Տեղեկատվության մատչելիության ապահովման առու-

6. Freedom of Information: A Comparative Legal Study by Toby Mendel, UNESCO 2003,  
7. Մանուկի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ պարոն Միկլոշ Յարաշտի կողմից 2006թ. օգոստոսին հրապարակած Հայաստանում լրատվամիջոցների ազատության վիճակի վերաբերյալ հաշվետվության մեջ, որում նա անդրադարձել է Հայաստանում տեղեկատվության նաև ներկայացուցիչ պարոն Միկլոշ Յարաշտի կողմից 2006թ. ներկայատական օրենքներից մեկը: (Աղյուղը՝ [www.ocse.org/fom](http://www.ocse.org/fom)): Տես, նաև Վրտիկլ 19 միջազգային կազմակերպության կողմից 2006թ. սեպտեմբերին արված հայտարարությունը, որում նաև նաև պահպանության մասին օրենքի ընդունումը կարևոր քայլ էր Հայաստանում տեղեկատվության ազատությունը բոլորի համար իրականություն դարձնելու եւ այս ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: (Աղյուղը՝ [www.article19.org/pdfs/analysis/armenia-foi.pdf](http://www.article19.org/pdfs/analysis/armenia-foi.pdf)):

---

մով էական առաջընթաց գրանցվեց, երբ 2003թ. ընդունվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը: Սա կարենոր քայլ էր տեղեկատվության ազատության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Օրենքը միջազգային փորձագետների կողմից ճանաչվել է որպես լիրերալ եւ առաջընթաց ապահովող իրավական ակտ:

Ըստ միջազգային կառույցների գնահատականների եւ անցկացրած մոնիթորինգային ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետությունում բավականին բարձր է տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության մակարդակը: Տեղեկություն ստանալու հարցումներին պետական մարմինների կողմից պատասխան տալու 64 տոկոսը ցուցանիշով Հայաստանը զերազանցել է մոնիթորինգում ընդգրկված բոլոր 13 երկրներին: Իսկ որքանո՞վ են քաղաքացիների հարցումների պատասխանները լիարժեք: Պետք է նշել, որ այստեղ Հայաստանը զբաղեցրել է երրորդ տեղը՝ 56 տոկոս ցուցանիշով<sup>8</sup>:

---

8. Տես՝ 2005թ. Բաց հասարակության հիմնադրամի արդարադատության նախաձեռնություն (OSI Justice Initiative) ծրագրի կողմից աֆրիկյան, լատին-ամերիկյան եւ եվրոպական 14 երկրներում իրականացված մոնիթորինգային ծրագրի հաշվետվությունը [www.justiceinitiative.org](http://www.justiceinitiative.org) ինտերնետային կայքում:



Այսպիսով, ինչո՞վ է բարելավում մեր կյանքը տեղեկատվության ազատության ապահովումը:

Այն օգնում է՝

- կոռուպցիայի նվազեցմանը,
- աղքատության մակարդակի կրծատմանը,
- առողջ հասարակության պահպանմանը,
- շրջակա միջավայրի պահպանության ապահովմանը,
- մարդու իիմնարար իրավունքների պահպանմանը,
- անձնական կյանքի անձեռնմխելիության ապահովմանը,
- երկրի անվտանգության ապահովմանը,
- քաղաքական համակարգի ժողովրդավարացմանը,
- երկրի կառավարման արդյունավետության բարձրացմանը,
- որոշումներ ընդունելու արդյունավետության բարձրացմանը,
- տնտեսության մակարդակի բարձրացմանը:



Ո՞ւմ է պատկանում տեղեկատվությունը:

- Այն գաղափարը, թե պետությունը տեղեկատվությունը փակ է պահում հանրային շահի պաշտպանության նպատակով, ինչ եւ հակաժողովրդավարական տեսակետ է: Որպես պարզ օրինակ կարելի է ներկայացնել հետևյալը. եթե քաղաքացին պետությանը տրամադրում է իր մասին տեղեկատվություն, օրինակ՝ անուն, ազգանուն, բնակության վայրի հասցեն, ծննդյան տարեթիվը, ապա այդ տեղեկատվությունը չի դառնում պետության սեփականությունը:

Այսպիսով,

տեղեկատվությունը պատկանում է մարդկանց,  
ոչ թե պետությանը:

---

## Ա.2 Տեղեկատվության ազատության օրենսդրությունը, միջազգային սկզբունքները եւ հիմնական տարրերը

### 2.1 Տեղեկատվության ազատության սկզբունքները

Սկզբունքներն այն ելակետայինն եւ հիմնարար դրույթներն են, որոնք արտահայտում են տեղեկատվության ազատության առավել ընդհանուր հատկանիշները եւ օրինաչափությունները: Սկզբունքները, որպես համընդհանուր գաղափարներ, ձեւավորվում եւ գարգանում են հասարակական հարաբերություններին գուցընթաց եւ ստանում են իրենց օրենս-դրական ամրագրումն, որի արդյունքում դառնում են ազդեցիկ եւ պարտադիր: Նշենք, որ գլխավորը ոչ միայն սկզբունքների օրենսդրական ամրագրումն է, այլ նաև դրանց իրականացնան համար հասարակական, քաղաքական համապատասխան նախադրյալների առկայությունը: Կարենոր է նաև, որ սկզբունքները կրեն ոչ թե հոչակագրային բնույթ, այլ կենսագործվեն կյանքում:

**ԱՐՏԻՎԼ 19 միջազգային կազմակերպությունը մշակել է Տեղեկատվության ազատության օրենսդրության հիմնական սկզբունքները, որոնք են.**

1. Տեղեկատվության ազատության օրենսդրությունը պետք է ապահովի առավելագույն հրապարակայնություն:
2. Պետական մարմինները պարտավոր են հրապարակել առանցքային տեղեկությունները:
3. Հանրային մարմինները պետք է ակտիվորեն խթանեն բաց կառավարումը:
4. Բացառությունները պետք է հստակ եւ սպառչ սահմանված լինեն:
5. Տեղեկատվություն ստանալու հարցումներին պետք է հնարավորինս արագ եւ արդարացի ընթացք տրվի: Դրանք պետք է անկախ քննության առարկա լինեն:
6. Սահմանված բարձր վճարների պատճառով մարդիկ չպետք է խուսափեն տեղեկատվություն ստանալու հարցումով դիմելու:

- 
7. Պետական մարմինների նիստերը պետք է բաց լինեն հանրության համար:
  8. Առավելագույն հրապարակայնության սկզբունքին հակասող օրենքները պետք է փոփոխվեն:
  9. Ապօրինի գործողությունների մասին տեղեկատվություն տրամադրած պաշտոնյաները պետք է պաշտպանված լինեն:

Այս սկզբունքները բխում են նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1981թ. Պետական իշխանությունների կողմից պահպող տեղեկատվության հանրային մատչելիության մասին եւ 2002թ. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին հանձնարարականների սկզբունքներից:

*Քաղաքածք՝*

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2002թ. ընդունած «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» հանձնարարականից

### **III. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հիմնական սկզբունքները**

Անդամ պետությունները պետք է երաշխավորեն բոլորի իրավունքը՝ հարցումին համապատասխան, ստանալու պետական իշխանությունների նույնականության պահպանի առանց որեւէ, ներառյալ ազգային, խորականության:

### **IV. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հնարակոր սահմանափակումները**

Անդամ պետությունները կարող են սահմանափակել պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը: Սահմանափակումները պետք է ճշգրտորեն սահմանվեն օրենքում, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությանը եւ համապատասխանեն պաշտպանությունն ապահովելու խնդրին:

1. Ազգային անվտանգություն, պաշտպանություն եւ միջազգային հարաբերություններ,
2. հասարակական անվտանգություն,

3. հանցավոր գործունեության կանխում, հետաքննություն եւ հետախուզություն,
4. մասնավոր կյանքի եւ այլ օրինական շահերը,
5. առեւտրային եւ այլ տնտեսական շահերը, լինեն մասնավոր կամ հանրային,
6. դատավարության ընթացքում մասնակիցների հավասարությունը,
7. շրջակա միջավայրը,
8. ստուգումը, վերահսկումը եւ հսկողությունը հանրային իշխանությունների կողմից,
9. տնտեսական, դրամային եւ տարադրամի փոխանակման պետական քաղաքականությունը,
10. իշխանության ներքին՝ մշակման փուլում գտնվող նյութերի գաղտնիությունը:
- Տեղեկատվության մատչելիությունը կարող է մերժվել, եթե պաշտոնական փաստաթղթում առկա է 1-ին կետում նշված որեւէ պարագա եւ եթե հանրային շահերը ավելի առաջնահերթ չեն, քան տեղեկատվության բացահայտումը:
  - Անդամ պետությունները պետք է սահմանեն այն առավելագույն ժամկետը, որից հետո 1-ին կետի սահմանափակումները չեն գործի:
- Տեղեկատվության ազատության վերաբերյալ գործում են նաև միջազգային այլ փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության եւ բնապահպանական խնդիրների արդարացի լուծումների մատչելիության մասին Օրիուսի կոնվենցիան<sup>9</sup>, որը պարունակում է մի շարք կարեւոր սկզբունքներ:
- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ պետական իշխանության համակարգի ստորաբաժանումներում պահպող բնապահպանական տեղեկատվություն: Սա կարող է լինել տեղեկատվություն բնապահպանական իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև կիրառվող միջոցառումների կամ մարդու առողջության եւ անվտանգության վրա բնապահպանության կոնկրետ վիճակի ազդեցության վերաբերյալ: Քաղաքացիներն իրավունք ունեն այդ տե-

9. Ընդունվել է 1998թ. հունիսի 25-ին Դանիայի Օրիուս քաղաքում:

դեկատվությունը ստանալ մեկ ամսվա ընթացքում եւ չիմնավորել, թէ ինչ նպատակով է իրենց հարկավոր: Բացի այդ, հանրային իշխանությունները պարտավոր են իրապարակել բնապահպանության վերաբերյալ տեղեկատվությունը:

- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցելու բնապահպանությանը վերաբերող որոշումների ընդունման՝ սկսած նախնական փուլից: Հանրային իշխանությունները պետք է հնարավորություն տան քաղաքացիներին եւ բնապահպանական կազմակերպություններին մեկնարաններու այն ծրագրերը, որոնք կարող են ազդել շրջակա միջավայրի վրա, եւ այդ մեկնարանությունները պետք է հաշվի առնվեն որոշում կայացնելիս:
- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական կարգով պահանջելու կասեցնել այն որոշումները, որոնք ընդունվել են՝ հակասելով վերոնշյալ դրույթներին:

Տեղեկություն փնտրելու եւ ստանալու իրավունքը հոչակվում է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 19-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի ինֆրամացիա եւ գաղափարներ վնասին, ստանալու եւ հաղորդելու իրավունք՝ տեղեկատվության ցանկացած միջոցներով եւ անկախ պետական սահմաններից: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածը եւս ամրագրում է այս սկզբունքը: Այս իրավունքը սահմանվում է նաև տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության նաև կատարելու մասին օրենսդրությունը, 1982թ. ապրիլի 29-ին ընդունված խոսքի եւ տեղեկատվության ազատության մասին հոչակագրով, ինչպես նաև իշխանության մարմինների տնօրինած տեղեկատվության մատչելիության վերաբերյալ N/R (81)19 Հանձնարարականով, Արխիվների մատչելիության վերաբերյալ եվրոպական քաղաքանության մասին N/R (2000) 13 Հանձնարարականով<sup>10</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 10-րդ հոդվածը երաշխավորում է տեղեկատվության ազատությունը: Այն արձանագրում է, որ այդ իրավունքը չի կարող սահմանափակվել իշխանության մարմինների կողմից: 1981 թվականին Եվրահանձնաժողովն այն կարծիքն է հայտնել, որ չնայած 10-րդ հոդվածով տեղեկատվություն ստանալու իրավունքը «հիմնականում երաշխավորում է տեղեկատվության ընդհա-

նուր աղբյուրների մատչելիությունը, չի կարելի բացառել, որ որոշակի հանգանանքներում այն ներառում է այնպիսի փաստարդեր ձեռք բերելու իրավունքը, որոնք մատչելի չեն բոլորին»<sup>10</sup>: Այսպիսով, հանձնաժողովը ծայրահեղ դեպքում «in abstracto» ընդունել է, որ պաշտոնական տեղեկատվության մատչելիության իրավունքը որոշակի հանգանանքներում կամ որոշակի տեղեկատվության դեպքում պաշտպանվում է 10-րդ հոդվածով:

### **Տեղեկատվության ազատության սկզբունքները ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի**

ՏԱ մասին օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է հետևյալ սկզբունքները.

1. տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանումը,
2. տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանունը,
3. տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը,
4. իրավաբարակայնությունը:

Այս սկզբունքներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն տեղը եւ կոչված է ապահովելու տեղեկատվության ազատության խնդիրների իրականացումը: Սրանք գործում են միասնական համակարգում եւ իրենց Էռույթում ու նշանակությամբ միասնական են: ՏԱ բոլոր սկզբունքները բխում են միմյանցից, պայմանավորված են մեկը մյուսով, եւ ցանկացած սկզբունքի խախտում հանգեցնում է մեկ այլ սկզբունքի խարարմանը: Սա նշանակում է, որ ամեն սկզբունք երաշխիք է մյուսի իրականացման համար, եւ այն միջոցները, որոնք ապահովում են որեւէ կոնկրետ սկզբունքի կիրառումը, միաժամանակ երաշխիք են ամբողջ համակարգի համար: Անդրադարձանը ՏԱ սկզբունքներից երեքին՝ իրավաբարակայնությանը, տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովմանը եւ տեղեկատվության ազատության սահմանափակումների սպառիչ ցանկի սահմանմանը:

10. [www.coe.int](http://www.coe.int).

11. Законодательство о СМИ, Учебно-практические материалы, 1999, стр. 33-35.

---

Հրապարակայնության սկզբունքն ապահովում է իշխանության բոլոր թերթի թափանցիկ գործունեությունը եւ մարդկանց մասնակցությունը երկրի կառավարմանը: Խոչ առանց բավարար տեղեկատվության մարդկան շեն կարող հսկել պետական մարմինների գործողությունները, ազդել որոշումների կայացման գործընթացի վրա:

**ՏԱ ԻՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿՂԲՈՒՆՔԻ ԷԿՐՅՈՒՆՔ ԻՆՏԵԼԵԿՈՒՐՅԱՆ Է.** հաստատում է այն կանխավարկածը, որ պաշտոնական փաստարդերը հասարակական բնույթ ունեն եւ պետք է մատչելի լինեն հանրությանը, եթե միայն չկա առավել կարեւոր հանրային կամ պետական շահ՝ տեղեկությունը չիրապարակելու համար: Անգամ, եթե քաղաքացին դիմում է գաղտնիք հանարվող տեղեկություններ ստանալու համար, իշխանությունները պետք է նժարի վրա դնեն մի կողմից հասարակության հետաքրքրությունը, տեղյակ լինելու իրավունքը, մյուս կողմից՝ գաղտնիքը պահպանելու անհրաժեշտությունը: Քաղաքացիների առջեւ պետք է բաց լինեն ոչ միայն պաշտոնական փաստարդերը, այլև օրենսդիրը, գործադիրը եւ դատական մարմինների գործունեությունը: Որոշ երկրները ընդունել են նաև բաց նիստերի մասին հատուկ օրենքներ, որոնք ապահովում են օրենսդիր եւ դատական մարմինների նիստերի թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

- Օրենսդիր եւ դատական իշխանությունների թափանցիկության, հրապարակայնության եւ հասարակության առջեւ բաց լինելու սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածով. «Ազգային ժողովի նիստերը դրնբաց են»;
- 19-րդ հոդվածով. «Յուրաքանչյուր ոք ունի ....անկախ եւ անկողմնապահ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:
- Սահմանադրական այս նորմը ամրագրվել է նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում: Օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Գործերի դատական քննությունը դրնբաց է»:
- Սրան հավելում է նաև «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը. «Դատարանների վճիռներն ու դատավճիռները բոլոր դեպքերում հրապարակվում են դրնբաց նիստում»:
- Նմանապես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածում նշվում է. «Դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դրնբաց է»:

- 
- Սահմանադրական դատարանի գործունեության հրապարակայնության սկզբունքն ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 6-րդ հոդվածում: Նույն օրենքի 2-րդ հոդվածը նշում է, որ Սահմանադրական դատարանի նիստերը դրնիքաց են, իսկ ՍԴ որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն:

Այս ամենը կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի հասարակական խնդիրները բոլորի կողմից քննարկման առարկա դառնան, նվազագույնի հասնեն իշխանությունների անօրինական գործողությունները թաքցնելու հնարավորությունները, որպեսզի պետական մարմինները հաշվետու լինեն հասարակության առջեւ՝ յուրաքանչյուր որոշման ու գործողության համար, իսկ մարդկան հասկանան, որ կարող են ազդեցություն ունենալ պետական մարմինների ընդունած որոշումների վրա, եւ վերջապիս, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ ակտիվորեն մասնակցի երկրի կառավարմանը:

Նկատելի է նաև, որ չափից ավելի հրապարակայնությունը կարող է խանգարել պետական պաշտոնյաների միջև կարծիքների ազատ եւ անկեղծ փոխանակմանը, եւ որ պաշտոնյաները չեն կարող արդյունավետ գործել թափանցիկ «ակվարիումում»: Այս փաստարկը կարեւոր է, սակայն այն պեսք է հաշվեկշռել գաղտնապահության եւ հաշվետվության բացակայության հետ: Կարո՞՞ղ է արդյոք որեւէ մեկը լրջորեն պնդել, որ որոշումները ընդունելն առավել արդյունավետ է, երբ հաշվետու չես: Մի քանի ակնհայտ է, որ հրապարակայնությունն իրական կարող է լինել միայն, քաղաքական եւ սոցիալական կայունության պայմաններում, քանի որ այս պարագայում կառավարությունն ավելի հեշտ է վստահում ինքն իրեն եւ իր ժողովրդին:

## Տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը

Այս սկզբունքից բխում է, որ պետական իշխանության մարմինները պարտավոր են հանրությանն ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ: Այս սկզբունքի իրականացմանն աջակցող միջոցներն են պետական մարմինների կողմից տեղեկությունների պարտադիր հրապարակումը, ՏՏ համար պատասխանատու անձի նշանակումը, փաստաթղթերի՝ մեկ միասնական կարգով հավաքումը և պահպանումը, պաշտոնատար անձանց իրազեկումը, կրթումը և այլն:

### Այսպիսով,

պետական մարմինները պարտավոր են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվության մատչելիությունը հեշտացնելու ուղղությամբ:

Այս նպատակով ՏՏ մասին ՀՀ օրենքը սահմանում է, որ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է պարբերաբար, սակայն առնվազն տարին մեկ անգամ պարտադիր հրապարակել որոշակի խումբ տեղեկություններ: Հրապարակում ասելով՝ օրենսդիրը հասկանում է տեղեկությունը մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, Ինտերնետով, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը մատուցելը և մատչելի դարձնելը:

Սովորաբար իշխանությունները տարածում են այնպիսի տեղեկատվություն, որն իրենց կարծիքով է կարեւոր, որ հասարակությունն իմանա: Որոշակի տեղեկատվություն տարածելու կառավարության պարտականությունը չպետք է շփոթել հասարակության կամ լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու կառավարության պարտավորության հետ, մի բան, որ շատ հաճախ է պատահում պրակտիկայում:

**Եվրախորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» հանձնարարականում նշվում է.**

«Պետական իշխանությունը պետք է սեփական նախաձեռնությամբ իրականացնի անհրաժեշտ միջոցառումներ իր ունեցած պետական տեղեկատվության հրապարակման ուղղությամբ, երբ նշված տեղեկությունների տրամադրումը հանրային կառավարման բափանցիկությանը կամ վարչակարգերի ներսում արդյունավետությանը

նպաստելու համար կարենոր նշանակություն ունի, կամ կիսթանի հանրային նշանակության խնդիրների լուծմանը հասարակության գիտակցված մասնակցությունը», որը ժողովրդավարության եւ արդյունավետ կառավարման համար կարենոր գործոն է:

Ավելին, տեղեկատվության հրապարակումը, նախքան դրա տրամադրման վերաբերյալ դիմում-խնդրանքի ստացումը, ունի այն առավելությունը, որ պետական իշխանության մարմինը ստիպված չի լինի արձագանքել լրացուցիչ դիմումների, քանի որ այն արդեն մատչելի կլինի բոլորին: Ի դեպ, պետական իշխանության մարմինն ազատ է ընտրելու տեղեկատվության հրապարակման առավել հարմար տարրերակը (ցուցատախտակներ, պաշտոնական հրատարակություններ, ինտերնետային էջեր կամ այլ հանրամատչելի միջոցներ):

Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով: SU մասին

ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով՝ տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեության առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ կատարված փոփոխությունները.

- հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները,
- բյուջեները,
- հաստիքացուցակները,
- պաշտոնատար անձանց անուն-ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
- մարմնի/կազմակերպության կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տրամադրման կարգը,
- տվյալ մարմնի՝ շրջակա միջավայրի վրա ներգործությունը,
- հասարակական միջոցառումների ծրագրերը,
- քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
- աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները),
- տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,

- 
- ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը եւ այլն:

Ի դեպ, պարտադիր եւ անհապաղ հրապարակման են ենթակա նաև կատարվող փոփոխությունները:

Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է նաև տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է աշխատավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

### Օրենքի նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հանրությանը ներկայացնում է իր ունեցած այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Տարբեր երկրներում օրենսդրությունը պետական մարմիններին պարտավորեցնում է հրապարակել նաև այլ տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ ԱՄՆ-ում Տեղեկատվության ազատության մասին ակտով ԱՄՆ-ի պետական մարմինները պարտավոր են «Federal Register»-ում հրապարակել իրենց ընդունած կամ պատրաստած յուրաքանչյուր փաստաթուր՝ քաղաքացիներին հնարավորություն տալով ծանրանալ դրանց, անհրաժեշտության դեպքում պատճենել: Բացի այդ ԱՄՆ պետական հաստատությունները պետք է կանոնավոր կերպով հրապարակեն տեղեկատուներ՝ անհրաժեշտ փաստաթրերը հեշտությամբ գտնելու համար: Այս պահանջները մեր օրենսդրության մեջ ներառելը բխում է ՏՏ ապահովման շահերից:

Բացի անհրաժեշտ տեղեկատվություն հրապարակելու պահանջից, օրենսդրությունը մատչելիությունն ապահովելու եւս մեկ միջոց է նախատեսում: Տեղեկատվություն տրամադրելու գործընթացն արդյունավետ իրականացնելու համար յուրաքանչյուր պետական մարմնում պետք է նշանակվի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ: Վերջինս տեղեկություն փնտրողին մատչելի ձեռվլ բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը, անհրաժեշտության դեպքում օգնում է նաև դիմում գրել: Պատասխանատու անձը նաև նշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ անփոփ տվյալները:

## Սահմանափակումների սպառիչ ցանկի սահմանումը

Ինչպես սահմանում եմ ՏՏ միջազգային չափանիշները՝ տեղեկատվության մատչելիությունը պետք է լինի կանոն, իսկ գաղտնիությունը՝ բացառություն այն դեպքերում, երբ գերակայում են այլ օրինական շահեր: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրվեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակարգում եւ ուղղված լինեն օրինական շահ(եր)ի պաշտպանությանը:

**Խոսքի եւ տեղեկատվության ազատությունը հոչակող Մարդու իրավունքների եւրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում բերվում են այս իրավունքների սահմանափակումնան հիմքերը, որոնք են.**

1. Հասարակական շահերի պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (ազգային անվտանգության, տարածքային ամրողականության, հասարակական անվտանգության, առողջության կամ բարոյականության պաշտպանության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու նպատակով):
2. Այլոց իրավունքների պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ:
3. Դատական իշխանության հետինակության եւ անկողմնակալության համար անհրաժեշտ սահմանափակումներ:

Ինչպես արդեն նշվեց, տեղեկատվության ազատության ցանկացած սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով: Այն պետք է անհրաժեշտ լինի հոդվածում տեղ գտած նպատակներից որևէ մեկի պաշտպանության համար, այսինքն լինի արդարացված: Եվ, վերջապես, սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավար հասարակության համար: Բացարձակ սահմանափակումն անընդունելի է:

Որպեսզի ճիշտ կիրառվեն վերը նշված սահմանափակումների հիմքերը, ԱՐՏԻԿԼ 19 միջազգային կազմակերպությունն իր մշակած ՏՏ մոդելային օրենքում<sup>12</sup> առաջարկում է երեք մասից բաղկացած ստուգում, որը պետք է կատարի պետական մարմինը տեղեկատվության տրամադրումը մերժելուց առաջ: Ըստ այդ ստուգման թեսրի՝ տեղեկատվությունը կարող է դասվել սահմանափակումների շարքը, եթե՝

- տեղեկատվությունը վերաբերում է օրենքում շարադրված նպատակներին,

- 
- բացահայտումը կարող է զգալի վնաս հասցնել այդ նպատակին,
  - նպատակին հասցված վնասը կարող է շատ ավելի մեծ լինել, քան հասարակության հետաքրքրվածությունն այդ տեղեկատվության նկատմամբ:

Երկրի պաշտպանությունը, ազգային անվտանգությունը, արտաքին հարաբերությունները, օրինականությունը եւ անձնական կյանքի անձունմխելությունը եւ, ինչ-որ չափով, պետական մարմնի ներքին գործնքացները կարող են ՏՍ օրենսդրության բացառություն լինել: Օրինակ՝ Ըվերիայի Գաղտնիության մասին օրենքում նախատեսված են 250-ի հասնող բացառություններ, որոնց մի մասն առնչվում է օրենքով պաշտպանվող շահերին, իսկ մյուսները՝ փաստաթղթերի որոշակի խմբերի: Բացառությունների մեծ մասը սահմանվում է որոշակի ժամկետով՝ 70-ից մինչեւ 2 տարի: Որոշ այլ բացառություններ իրենց ուժը պահպանում են մինչեւ որոշակի դեպքի երեսան գալը: Տարբերակները շատ են եւ բազմազան, սակայն խնդրի կարեւորությունը աստիճանաբար մեծանում է քաղաքացիական հասարակություններում եւ տարածվում աշխարհով մեկ:

### ՀԱՅ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի<sup>13</sup>

տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը «կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարբերի, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Սահմանափակումների սահմանադրական իհմքերն իրենց կարգավորումն են ստացել առանձին օրենքներում, ինչպես, օրինակ՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում<sup>13</sup>:

### ՏՍ Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են բոլոր սահմանափակումները: Այն տեղեկությունն է, որը՝

1. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,
2. խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

---

13. [www.laws.am](http://www.laws.am)

- 
3. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,
  4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
  5. խախտում է հեղինակային եւ (կամ) հարակից իրավունքները:

Օրենքը նաև նշում է, որ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ: Ըստ վերը նշված հանձնարարականի՝ եթե սահմանափակումը վերաբերում է միայն տվյալ փաստաբարում պարունակող տեղեկատվության մի հատվածին, ապա մնացած հատվածը պետք է տրամադրվի սովորական կարգով: Անհրաժեշտ է պարզ մատնանշել, թե որ հատվածում եւ որքան տեղեկատվություն է զննվել: Եթե փաստաբությունը տպագիր է, ապա պատճենինի՝ սահմանափակման ենթակա հատվածը հարկ է ծածկել սպիտակ թղթով: Էլեկտրոնային փաստաբարությունը պատճենի վրա պետք է հստակ նշվի, թե փաստաբարությունը որ հատվածներն են զննվել, օրինակ՝ այդ հատվածները բաց (չգրված) թղթներով: Փաստաբարությունը տրամադրման ժամանակ չպետք է ընտրել այնպիսի ձեռ, որը կբացահայտի գաղտնի տեղեկատվությունը<sup>14</sup>:

## Ա. 3 Տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը. ո՞ր մարմիններն են պարտավոր տրամադրել տեղեկատվություն

ՀՀ ՏԱ Օրենքի գործողությունը, ըստ 3-րդ հոդվածի, տարածվում է հետեւյալ մարմինների եւ կազմակերպությունների վրա, որոնք եւ դիտվում են որպես տեղեկատվություն տնօրինողներ: Դրանք են՝

- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական իշխնարկները,

---

14. Սահմանափակումների կիրառման տեղական դատական պրակտիկային ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ Շուշան Դոյդոյանի «Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը եւ «ՀՀԸ ընդդեմ Մաքսային պետական կոմիտեի» դատական նախադպրոց» հոդվածում, Ժունալիստիկա, պրակ Գ, ԵՊՀ, 2002, 21-26 էջեր:

- 
- բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները,
  - հանրային նշանակության կազմակերպությունները,
  - պաշտոնատար անձինք:

Ինչո՞ւ է հատկապես կարենություն հանրային նշանակության մարմինները սույն օրենքում ներառելը: Ավանդաբար տեղեկություն ստանալու իրավունքը կապվում է վերը նշված առաջին 4 կետերում ընդգրկված մարմիններից տեղեկություն ստանալու խնդրի հետ, քանի որ տեղեկատվության ազատությունը կոչված է ապահովելու պիտական իշխանության թափանցիկությունը: Սակայն աստիճանաբար պետությունը հասարակական մի շարք կարեւոր ոլորտների (էներգետիկա, տրանսպորտ, կապ, ջրամատակարարում եւ այլն) շահագործումն ու կառավարումը փոխանցում է մասնավոր սեկտորին: Մրանով այս ոլորտներին առնչվող տեղեկատվությունն ամենեւին չի կորցնում իր կարենությունն ու անհրաժեշտությունը մարդկանց համար: Այդ իսկ պատճառով օրենքի հեղինակները գնացել են համարձակ ճանապարհով՝ օրենքը տարածելով նաև հանրային նշանակության մասնավոր ընկերությունների վրա:

Ըստ օրենքի՝ դրանք բաժանվում են 2 խմբի:

1. Հանրային նշանակության մասնավոր՝ շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերությունները:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող, եթե նա որպես մատակարար կամ սպառող՝

- չունի մրցակից կամ չի հանդիպում որեւէ էական մրցակցության,
- իրացման ծավալներով գրավում է տվյալ ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը»:

Այսպիսի ընկերություններից են, օրինակ, «Երեւան ջուր», «Հայաստանի էլեկտրացանցեր», «Հայուսազարդ» եւ նմանօրինակ մյուս մասնավոր ընկերությունները:

---

### Սիածազգային փորձ

Իռլանդիայի կառավարությունը տեղեկատվության հարցերով հանձնակատարի պաշտոնական կայրում պարբերաբար իրավաբակում է այն մարմինների ցանկը, որոնք իրականացնում են հանրային գործառույթներ եւ ըստ օրենքի պարտավոր են քաղաքացիներին տրամադրել տեղեկատվություն: (առբյուրը՝ Արտիկլ 19 միջազգային կազմակերպություն - [www.article19.org](http://www.article19.org)):

2. Երկրորդ խումբն են կազմում առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, առեւտրի, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայությունները, օրինակ, մասնավոր բուհերը, դպրոցները, հիվանդանոցները, որոնք եւս պարտավոր են տեղեկատվություն տրամադրել մարդկանց:

Տեղեկությունը ստանալու համար կարելի է դիմել վերոնշյալ մարմիններին/կազմակերպություններին: Վերջիններս պարտավոր են օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Յուրաքանչյուր մարմնում տեղեկություն տալու պարտավորությունը դրվում է տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի վրա, որն էլ եւ պարտավոր է հարցումներին ժամանակին եւ արդարացի ընթացք տալ: Տեղեկատվության ազատության ապահով-

### Միաջազգային փորձ

- «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն բոլոր մարմիններում ստեղծվել են հանրության հետ հաղորդակցության հասուն քայլիններ (uniidades de enlace), ինչպես նաև տեղեկատվության հարցերով համանական մարմիններում գործող այդ բաժինները.
- հավաքում եւ հրապարակում են պետական մարմնի աշխատանքի մասին տեղեկատվություն,
  - ընդունում են հարցումներ եւ պատասխանում,
  - աջակցում են տեղեկատվական հարցումների ձեւակերպմանը,
  - տեղեկատվական հարցումներին պատասխանելու ներքին ընթացակարգը բարելավելու նոր ուղիներ են նշակում,
  - վերապատրաստում են տեղեկատվական հարցումներին ընթացք տվող պաշտոնատար անձանց,
  - վարում են ստացված հարցումների գրանցամատյան:
- Յուրաքանչյուր պետական մարմնում առկա է նաև տեղեկատվության հարցերով հանձնաժողով, որի գործառույթների մեջ են մտնում.
- տեղեկատվական հարցումներին ընթացք տալու կարգի մշակումը,
  - գաղտնագրված տեղեկատվության պարբերաբար վերանայումը,
  - գործունեության վերաբերյալ տարեկան գեկույցի համար տեղեկատվության հավաքագրումը:

ման համար պատասխանատու կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի դեկավարը: Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի՝ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձի հիմնական պարտականություններն են:

**«Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով»**

1. ապահովում է տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը:
2. Տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է դրա տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը:
3. Մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները»:

2007թ. ՀՀ Կառավարության 2007թ. սեպտեմբերի 20-ի N1083 որոշմամբ՝ պետական կառավարման մարմիններում ստեղծվեցին տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումներ, ինչը հանգեցրեց դրանց գործառույթների եւ հանրության հետ կապերի քաղաքականության միասնականացմանը: Բարեկավել են այս ստորաբաժանումների աշխատակիցների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, մշակվել են աշխատանքի կազմակերպման ուղղույցներ, իրականացվել են վերապատրաստման մի շարք դասընթացներ:

### Վերապատրաստումներ

«Տեղեկատվության մատչելիության ծրագիր» բուլղարական հայտնի ՀԿ-ներից մեկը հաճախ վերապատրաստման դասընթացներ եւ սեմինարներ է կազմակերպում Բուլղարիայում եւ Հարավարեւելյան Եվրոպայում՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը կիրառելու վերաբերյալ: Դասընթացներին մասնակցում են տեղական եւ պետական կառավարման մարմինների, ԶԼՍ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ եւ քաղաքացիներ: Դասընթացները կազմակերպվում են բուլղարական եւ միջազգային գործընկերների աջակցությամբ: Դասընթացների նյութերի մի նասը տեղադրված է կազմակերպության կայքում՝ [www.aip-bg.org](http://www.aip-bg.org):

Մասնավորապես, 2008թ. մայիսին Քաղաքացիական ծառայության խորհուրդը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի աջակցությամբ իրականացրին պետական կառավարման համակարգի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինների 77 աշխատակիցների ուսուցում՝ նախապես մշակված և հաստատված ուսումնական դասընթացի համաձայն։ Առաջիկա երկու տարիներին (2008-2010թ.թ.) Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախատեսում է իրականացնել 48 ուսուցում մոտ 1,500 մասնակցի համար։

2008թ. հունիսին Քաղաքացիական ծառայության խորհրդի եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից կազմվել է հարցաշար՝ հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր, առաջատար եւ կրտսեր պաշտոնների համար։ Այսուհետ, այս պաշտոնները հանալիքու, ինչպես նաև ատեսատվորման համար պետք է թեկնածուները եւ քաղծառայողները հանձնեն թեսք՝ համաձայն տեղեկատվության ազատության և հասարակայնության հետ կապերի ոլորտի օրենսդրության և պրակտիկայի մասին հարցաշարի։

### Վերապատրաստումներ

**Ուսումնական համապատասխան պարունակությունում տեղեկատվության ազատության խնդիրներին վերաբերող դասընթացները մտնում են Սահմանադրական հարցերի դեպարտամենտի (ՈՀԴ) պարտականությունների մեջ։ Դեպարտամենտը պարբերաբար բազմաթիվ դասընթացներ է անցկացնում պաշտոնատար անձանց համար։ Այն մշակել է նյութերի համապարփակ մի հավաքածու, որի նպատակն է ուղղություն ցույց տալ պետական սեկտորի ամենատարբեր ներկայացուցիչներին, որոնք առնչվում են SU-ի հետ։ ՈՀԴ-ն կազմակերպում է նաև տեղեկատվության հետ կապված իրավունքի մասին հետքուհական դասընթացներ, որոնք որոշում կայացնողներին ոլորտի բարդ օրենսդրությունը և անընդհատ զարգացող նախադասապահության իրավունքը ուսումնասիրելու հնարավորություն են ընձեռում։ Դասընթացի ավարտին մասնակիցներն ստանում են համապատասխան որակավորում, որի շնորհիվ պետական ծառայության ոլորտում ստեղծվում է փորձառու և բամիմաց պաշտոնյաների մի բանակ։**

Պետության և կառավարման ոլորտի համատեքստում տեղեկատվության հետ կապված իրավունքների մասին ամբողջական և համապարփակ գիտելիքներ տրամադրելու նպատակով մշակվել է պաշտոնական ուսուցման դասընթաց։ Այն մշակվել է ՈՀԴ-ի և Նորթումբրիայի համալսարանի կողմից և ուսուցանվում է հիմնականում հետակա կարգով, ինտերնետի օգնությամբ։ Դասընթացի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ծեռքբերել Նորթումբրիայի համալսարանի կայքում՝ [www.northumbria.ac.uk](http://www.northumbria.ac.uk)։

## Ա.4 Տեղեկատվության ազատության սուբյեկտները. ովքե՞ր ունեն տեղեկություն ստանալու իրավունք

Առանցքային է այն հարցը, թե ովքեր ունեն տեղեկություն ստանալու եւ տեղեկություն ստանալու հարցում ներկայացնելու իրավունք: Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությամբ տեղեկություն ստանալը յուրաքանչյուրի՝ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց իրավունքն է, անկախ նրանից տվյալ երկրի քաղաքացի է, օտարերկրացի, թե քաղաքացիություն չունեցող անձ:

ՀՀ-ում յուրաքանչյուր ոք իրավունք ունի դիմելու եւ տեղեկություն տնօրինողներից պահանջելու տեղեկություններ:

«ՏԱ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, ոք

յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմանը դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

Հոդվածից պարզ է դառնում, ոք մարդիկ ունեն ոչ միայն տվյալ տեղեկատվությանը ծանոթանալու կամ տվյալ փաստաթղթում առկա տեղեկությունը ստանալու, այլև տվյալ պաշտոնական փաստաթղթի պատճենը ստանալու իրավունքը:

 Կա՞ն արդյոք որոշակի խմբեր, որոնք ունեն տեղեկատվություն ստանալու որոշակի արտոնություններ, օրինակ՝ լրագրողները, իրավաբանները, գիտնականները եւ այլք:

- Ոչ, տեղեկություն ստանալու գործընթացում խորականության դրսեւորումն արգելվում է: Այն յուրաքանչյուրի հավասար իրավունքն է: Ընդ որում, տեղեկություն ստանալու իրավունքը պայմանավորված չէ նաև բնակության վայրով, մարզերի բնակիչները Երեւանում գտնվող մարմիններից նույնպիսի իրավունք ունեն տեղեկություն ստանալու, ինչպես մայրաքաղաքի բնակիչները, եւ հակառակ:

Այսպիսով,

տեղեկություն ստանալու իրավունք ունի յուրաքանչյուրը:

Հայաստանի Հանրապետությունում այս իրավունքը սահմանվում է Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներով:  
Հոդված 27. ....

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ վնատքելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Հոդված 27.1.

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողաճի ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը:

Հոդված 23.

Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունքը:

### Միաջազգային փորձ

#### Լատինա

Ըստ տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքի՝ նրանք պետք է հրապարակեն տարեկան գեկույցներ, ներառելով հետեւյալ տեղեկությունները.

1. նախորդ երկու տարիների ընթացքում բյուջեի կատարման հաշվետվությունը եւ ընթացիկ տարվա բյուջեն,
2. տվյալ մարմնին պատկանող անշարժ գույքի գնահատումը (ընթացիկ տարի),
3. տարածքային խորհրդի կայացրած որոշումը նախորդ տարվա տնտեսական հաշվետվության մասին,
4. պետական առողջապահության մասին,
5. հասարակության իրազեկելուն եւ ընդունվող որոշումներին հասարակության բյան մասնակցությունն ապահովելուն ուղղված միջոցառումները:  
(աղյուրը՝ Արտիկլ 19 միջազգային կազմակերպություն՝ [www.article19.org](http://www.article19.org))

## **Ա.5 Տեղեկատվություն տրամադրելու կարգը եւ ձեւերը**

### **5.1 «Տեղեկություն» հասկացությունը**

Տարբեր օրենքներ տարբեր կերպ են սահմանում «հանրային տեղեկատվություն» հասկացությունը: Ներկայացնենք երկու միջազգային կազմակերպությունների կողմից մշակված սահմանումները:

#### **Արտիկլ 19-ի սահմանումը.**

տեղեկատվությունը ներառում է բոլոր տվյալները, որոնք տնօրինվում են պետական մարմնի կողմից՝ անկախ դրանց պահպանման ձեւից (փաստաթուղթ, ձայնագրություն, էլեկտրոնային ձայնագրություն եւ այլն), տեղեկատվության ստեղծման տարերվից, աղբյուրից, կարգավիճակից, եւ անկախ նրանից՝ գաղտնագրված է, թե ոչ:

#### **Եվրոպայի խորհրդի սահմանումը.**

առանձնացնում է «պաշտոնական փաստաթուղթ» հասկացությունը. «Պաշտոնական փաստաթուղթ» նշանակում է ցանկացած ձեւով գրառված այն տեղեկատվությունը, որը կազմվել կամ ստացվել է պետական իշխանությունների կողմից, պահպան է նրանց մոտ եւ առնչվում է այս կամ այն պետական կամ վարչական գործառություն՝ բացառությամբ նախապատրաստման փուլում գտնվող փաստաթորթերի:

#### **«Տեղեկատվության ազատության մասին»ՀՀ օրենքի սահմանումը (3-րդ հոդված).**

Տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեսույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տպագիր, էլեկտ-

#### **Սլաջազգային փորձ**

#### **Ճամայկա**

2002թ. կեսերին Շամայկայի պառլամենտն ընդունեց տեղեկատվության ազատության մասին օրենք: Մեկ ամիս անց կառավարության կազմում ստեղծվեց հասուլ բաժին, որը պետք է ապահովեր օրենքի կիրառումը: Պետությունը նախաձեռնեց հանրային լայն քարոզարշավի իրականացում, որը նաև ենթադրում էր բոլոր պետական կառույցների իրազեկում նոր օրենքի դրույթների մասին եւ պահանջում էր բարելավել փաստաթորթերի հետ աշխատելու փորձը: Էշխանության բոլոր մարմինները ստացան բյուջեի, կադրերի եւ գնումների հետ առնչվող փաստաթորթերի օրինակներ:

րոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

Կարենոր է, որ Օրենքը տեղեկություն է դիտում ոչ միայն ավանդական կրիչի վրա առևտ տվյալները, այլև չի դնում կրիչի որեւէ սահմանափակում՝ ելեկտրոնային, թե ֆիզիկական:

Գոյություն ունեն տեղեկատվությունը պրոակտիվ հրապարակելու մի շարք եղանակներ: Դրանցից մասնավորապես կցանկանայինք առանձնացնել հետեւյալները.

## Սեխանիզմ 1. Տեղեկատվական ցուցատախտակներ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2008թ. ընթացքում ՀՀ 37 քաղաքային եւ գյուղական համայնքներում տեղադրել է 170 ցուցատախտակ՝ նպատակ ունենալով հանրային նշանակության տեղեկություններն ինձնալու հնարավորություն ստեղծել եւ ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բափանցիկությունը: Տեղեկատվական ցուցատախտակները տեղադրված են քաղաքապետարանի կամ գյուղապետարանի տարածքում, ինչպես նաև առավել մարդաշատ վայրերում (շուկայի, ավտոկայանի, համալսարանի, բանկի, գրուսայգիների հարևանությամբ): Սակայն խնդիրն այն է, որ ոչ բոլոր համայնքներում են այդ տեղեկությունները պարբերաբար բարձացվում: Դրանք բարձացնելու պարտականությունը պետք է դրվի կոնկրետ աշխատակցի վրա:

## Սեխանիզմ 2. Պաշտոնական ինտերնետային կայքեր

Տեղեկատվության մատչելիության ապահովման տեխնիկական ռեսուրսներից պետք է առանձնացնել պաշտոնական ինտերնետային կայքերը: Այսօր արդեն ՀՀ բոլոր նախարարություններն ունեն իրենց պաշտոնական կայքերը: Սակայն դրանցից միայն մի քանիս են պարունա-

### Միաջազգային փորձ

Բոլորիայի Առողջապահության նախարարության շենք մտնող յուրաքանչյուր ոք դեռ անվտանգության աշխատակիցներին շնասած անմիջապես տեսնում է ցուցանակ, որին փակցված են պարտադիր հրապարակնան ենթակա բազմաթիվ տեղեկություններ: Ամեն օր նախարարության աշխատակիցներից մեկը երկու ժամ հերքապահությամբ ընդունում է քաղաքացիների տեղեկատվություն ստանալու բանավոր հարցումները:

---

կում օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները (որոշումներ, բյուջեներ, հաշվետվություններ և այլն): Այս առումով հատկապես հարուստ տեղեկատվություն են պարունակում ՀՀ կրթության և գիտության՝ [www.edu.am](http://www.edu.am) և Աշխատանքի և սոցիալական ապահովության՝ [www.mss.am](http://www.mss.am) նախարարությունների կայքերը:

17.04.2008թ. ՀՀ վարչական Տիգրան Սարգսյանի հանձնարարականով պետական մարմինների վրա պարտադիր պայման դրվեց ապահովել որոշումների կայացման գործընթացում հասարակության անդամների մասնակցության ռեալ հնարավորությունները, հատկապես նախազգերի մշակման, քննարկման և ընդունման գործընթացներին: Այդուհետեւ կառավարության և նախարարությունների համար իրենց ինտերնետային կայքերում բոլոր նախազգերի տեղադրումը պարտադիր նորմ է լինելու:

Իրավական ակտերի մատչելիության ապահովմանն ուղղված դրական նախաձեռնությունն էր Համաշխարհային բանկի ֆինանսավորմանը ստեղծված և գործարկված Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգը (ՀԻՏՀ) (Armenian Legal Information System (ARLIS)): Այն գետեղված է [www.laws.am](http://www.laws.am), [www.arlis.am](http://www.arlis.am) կայքերում, որտեղ իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային հրապարակումը:

Տեղեկատվության հրապարակման մեխանիզմներ են նաև տեղեկատվությունը գտնվելու վայրում փակցնելը, բրոշյուրներ, տեղեկագրեր տպագրելը, հեռուստառադիմո-հաղորդումներ պատրաստելը և այլն: Միայնալ Թագավորության Սիջազգային զարգացման նախարարության (ՄԶՆ) հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրով (ՀՀՈԲԾ) (2003-2007թ.թ.) որոշ պետական կառավարման մարմիններում, օրինակ, Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարաններում, կրթության և գիտության նախարարությունում գրքույկների տեսքով հրապարակվել են ամբողջական ուղեցույցներ՝ քաղաքացիներին նատուցվող ծառայությունների վերաբերյալ:

## 5.2 Տեղեկատվության տրամադրումը քաղաքացու պահանջով

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2002թ.-ին ընդունված «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» համաձարականում բերվում են տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու նվազագույն պայմանները: Դրանք են.

- Պաշտոնական փաստաթղթին ծանոթանալու դիմումով պետք է գրադարձ տվյալ փաստաթուղթը տնօրինող ցանկացած պետական մարմին:
- Պաշտոնական փաստաթղթեր ստանալու մասին դիմումներին պետք է արձագանքել հավասարության սկզբունքով:
- Պաշտոնական փաստաթղթին ծանոթանալու մասին դիմումը պետք է արագ արձագանք ստանա: Որոշումը պետք է կայացվի, դրա մասին տեղյակ պահիվ ել այն իրականացվի նախապես սահմանված ժամանակացուցությունում:
- Պետական իշխանությունը պետք է հնարավորության դեպքում օժանդակի դիմումին պաշտոնական փաստաթուղթը գտնելու հարցում, սակայն պետական իշխանության պարտականությունների մեջ չի մտնում պատասխանել այն փաստաթղթի հարցմանը, որը հնարավոր չէ գտնել:

Տեղեկությունը ստանալու համար նախ պետք է հարցումն պիմել այն տնօրինողին: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը հարցումը սահմանում է որպես տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նապատակով տույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում:

**Տեղեկություն ստանալու համար կարելի է դիմել եւ գրավոր, եւ բանավոր:**

Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը: Բանավոր հարցումն պիմելիս նախ պետք է պարզել, թե որ պաշտոնյան է պատասխանատու տվյալ տեղեկությունը տրամադրելու համար: Պարզելուց հետո կարող եք անմիջապես դիմել նրան՝ նշելով, թե ինչ տեսքով կամ կրիչի վրա եք ուզում ստանալ տեղեկությունը՝ տեսնել կամ կարդալ փաստաթուղթը, ստանալ դրա պատճենը, բոթի կամ դիսկեսի վրա ամրագրված:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (հոդված 9) սահմանված են հարցմանը ներկայացվող պահանջները.

Գրավոր հարցումը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին, հակառակ դեպքում այն կարող են չըննարկել:

**Գրավոր հարցման մեջ դիմողը պարտադիր պետք է նշի.**

- իր անունը, ազգանունը,
- քաղաքացիությունը,
- բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):
- գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի:

Նշված պահանջները չբավարարելու դեպքում հարցումը կարող է վերացվել կամ դրան ընդհանրապես ընթացք չի տրվի: Անստորագիր հարցումը ենթակա է ոչնչացման:

Բոլոր դեպքերում դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը, թե իրեն ինչու է անհրաժեշտ տվյալ տեղեկատվությունը կամ ինչպես է պատրաստվում օգտագործել այն:

Գրավոր հարցման մեջ նախընտրելի է նշել, թե ինչ կրիչի վրա եք ուզում ստանալ տեղեկությունը, քանի որ Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով (քուրք, դիսկետ, էլեկտրոնային նամակ եւ այլն): Եթե նյութական կրիչը նշված չէ, ապա այն տրամադրվում է պաշտոնյայի համար նախընտրելի կրիչով:

### Միաջազգային փորձ

**Կիարոսի Հանրապետության կառավարման համակարգում հատկապես կարենություն է տեղեկությունների դասակարգման, պահպանման եւ տրամադրման էլեկտրոնային համակարգը: Էլեկտրոնային տեղեկատվական համակարգը քաղաքացիների կողմից տեղեկություններ ստանալը առավել դյուրին է դարձնում: «Մեկ պատուհան» էլեկտրոնային համակարգի միջոցով քաղաքացիները կարող են ծանոթանալ կառավարությունում պահպող տեղեկություններին եւ փաստաթղթերին՝ առանց ծամանակ կամ դրամ վատնելու: Վիճակագրական տվյալների համաձայն, տեղեկություններ պահանջող քաղաքացիների հարցումների 89.9 տոկոսը բավարարվում է 10 րոպեում:**

Գործնականում նախընտրելի է հարցումի գրավոր տարբերակը, որի դեպքում խախտված իրավունքի վերականգնման հնարավորությունները մեծանում են: Տեղեկություն ստանալու հարցման մեջ անհրաժեշտ է հնարավորինս հատակ ձեռակերպել անհրաժեշտ տեղեկությունը, հատկապես, եթե դիմողը պահանջում է կոնկրետ փաստաբուղը, ապա պետք է նշել բոլոր տվյալները, որ ունի դրա վերաբերյալ: Հատակ ձեռակերպումն անհրաժեշտ է, որպեսզի մարմինը/կազմակերպությունը հեշտությամբ կարողանա գտնել եւ կարճ ժամկետում տրամադրի պահանջած տեղեկությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը պահանջում է գրանցել տեղեկություն ստանալու յուրաքանչյուր հարցում: Հարցումները գրանցվում են ե՛ւ գրանցամատյանում, ե՞ւ համակարգչում: Հարցումով դիմողին անպայման պետք է տրվի ստացական եւ գրանցման համարը: Նոյնիսկ, եթե տեղեկատվությունը տրամադրվել է անմիջապես, եւ հարցումն ուրիշ այլ գործողության կատարում չի պահանջում, յուրաքանչյուր հարցման գրանցումը պետական մարմինի բոլոր է տալիս ստուգել, թե քանի հարցում է եղել եւ ինչի մասին: Դա նաև օգտակար կլինի բողոքարկման դեպքում:

**Տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանում են հետևյալ ժամկետներում եւ կարգով.**

- **Բանավոր հարցման պատասխանը** տրվում է բանավոր՝ հարցումը լսելոց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Բանավոր հարցման պատասխանը տրվում է այն դեպքում, եթե
  1. պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը,
  2. անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվության տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը,
  3. անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվության տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

● **Գրավոր հարցման պատասխանը** տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական՝ բղրի, տեսաձայնամապավենի, դիմումի կամ այլ կրիչի վրա: Եթե նշված չէ նյութական կրիչը, եւ դա անհնար է պարզել, ապա պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1. Եթե նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա պատճենը դիմուղին է տրվում հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում,
2. Եթե հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին դիմուղին տեղեկացվում է հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում,
3. Եթե տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմուղին է տրվում դիմումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Սակայն հետաձգման մասին 5-օրյա ժամկետում անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել դիմուղին՝ նշելով պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը: Հետաձգումը հիմնավորելը կարեւոր պայման է, քանի որ բացառում է պատասխանի կամայական ուշացումը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2007թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարած հարցումները վկայում են, որ օրենքով սահմանված ժամկետներում՝ մինչեւ 5 օր, ինֆորմացիան ստացել է լրազրողների 27 տոկոսը: Այս ցուցանիշը բավականին ցածր կարելի է համարել, փաստորեն միայն 27 տոկոսի համար է գործում օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը: Հարցված լրազրողների 16 տոկոսը նշել է, որ ինֆորմացիան ստացել է 1-ից 3 ամիս ուշացումով: Անհրաժեշտ տեղեկություններն ընդհանրապես չի ստացել հարցված լրազրողների 10 տոկոսը:

Վերոնշյալ հաճճարարականում նշվում է, որ եթե մարմինը չունի անհրաժեշտ պաշտոնական փաստաթուղթը, ապա պետք է հնարավորության դեպքում դիմուղին ուղղություն ցույց տալ, մատնանշել այն կառույցը, որը տիրապետում է տեղեկատվությունը:

ՀՀ օրենքը նշում է, որ այն դեպքերում, երբ տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը կամ դրա տրամադրումը իր լիազրությունների շրջանակից դրւս է, ապա նա 5-օրյա ժամկետում պարտավոր է այդ մասին գրավոր իրազեկել դիմուղին, իսկ հնարավորության

դեպքում տրամադրել նաեւ այն տնօրինողի, այդ թվում՝ արխիվի գտնվելու վայրը:

Եթե տեղեկատվություն տնօրինողն ունի փնտրվող տեղեկատվության միայն մի մասը, ապա նա այն տալիս է դիմողին, միաժամանակ հնարավորության դեպքում նշում է այն վայրը, որտեղ դիմողը կարող է գտնել իր փնտրած տվյալների մյուս մասը:

## Տեղական փորձ

Զաղաքացի-պետական մարմին երկխոսությունը, տեղեկատվության փոխանակումը եւ քաղաքացիների սպասարկման որակը բարելավելու նպատակով պետական մարմիններում ընթանում է քաղաքացիների սպասարկման էլեկտրոնային կառավարման արդյունավետ համակարգեր ներդնելու գործընթաց: Օրինակ, 2006թ. հովիսից Երեւանի քաղաքապետարանում եւ ստորաբաժնումներում, իսկ 2007թ. ապրիլից նաեւ մայրաքաղաքի թաղապետարաններում ներդրվել եւ արդյունավետ գործում է «Սեկ պատուհան» աշխատակարգը եւ «ԷԼՓԱՍ» էլեկտրոնային փաստարդարչանառության ավտոմատացված համակարգը: Այսօր այս ցանցին ավելի քան 300 համակարգիչ է միացված: Կարենոր է նաեւ, որ այս համակարգը հնարավորություն է տալիս առանձին մուտքագրել դիմում-բողոքները եւ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր եւ էլեկտրոնային հարցումները, քանի որ դրանց պատասխանելու համար օրենսդրությամբ տարրեր ժամկետներ են սահմանված: Այս համակարգը ներդնելու արդյունքում քաղաքապետարանու լուծարվել են նամակների եւ քաղաքացիների ընդունելության եւ ընդհանուր բաժինները, փոխարենը ստեղծվել է քաղաքացիներին սպասարկող գրասենյակ: Այս համակարգը քաղաքացուն հնարավորություն է տալիս առանց միջնորդների դիմել Երեւանի քաղաքապետարան, դիմել մեկ տեղ եւ նույն տեղից էլ ստանալ գրավոր պատասխան: Այն զգալիորեն նվազեցրել է քաղաքապետարանի տարրեր աշխատակիցների հետ քաղաքացիների ողղակի կամ միջնորդավորված շփումները: Հանսկարգի ներլուման արդյունքում եռակի կրծատվել են քաղաքացիների միեւնույն հարցով կրկնակի դիմումները եւ հարցումները: Ի դեպ, քաղաքացին իր դիմումի կամ տեղեկություն ստանալու հարցման շարժին կարող է հետեւել տնից՝ քաղաքապետարանի ինտերնետային կայք [www.yerevan.am](http://www.yerevan.am) այցելելով եւ մուտքագրելով իրեն տրված ծածկագիրը:

 Արդյոք դիմողը պարտավո՞ր է հիմնավորել, թե իրեն ինչու է անհրաժեշտ պահանջվող տեղեկատվությունը:

- Ո՛չ: Որեւէ դիմողից չի կարելի պահանջել հիմնավորում: Ծիշը հակառակը: Պետական մարմինն է պարտավոր տեղեկատվության տրամադրությը մերժելու դեպքում գրավոր հստակեցնել մերժման պատճառները եւ օրենքով սահմանված հիմքերը:

 Արդյոք էլեկտրոնային ճանապարհով եկած հարցումները են ենթակա<sup>o</sup> են գրանցման:

- Այո՛: Այսօր արդեն որոշ պետական մարմիններում ներդրած էլեկտրոնային կառավարման համակարգերը հնարավորություն են տալիս գրանցել էլեկտրոնային ճանապարհով ստացված հարցումները, այնպես, ինչպես գրավոր հարցումները: Նման էլ. համակարգեր ներդրած չլինելու հանգանանքը չի կարող էլ. հարցումները չգրանցելու պատճառ դառնալ:

## Պե՞տք է արդյոք վճարել տեղեկատվություն տրամադրելու դիմաց

Առանցքային հարցերից է նաև տեղեկատվության տրամադրման դիմաց գանձվող վճարի հարցը: ՏԱ մասին օրենքը նախատեսում է վճարների գանձում: Ըստ այդ՝ գանձվող վճարի չափը չի կարող գերազանցել տրամադրման տեխնիկական թրի, տպիչի ներկի կամ այլ նյութի ծախսը:

**Վճար չի գանձվում միայն օրենքով սահմանված դեպքերում.**

1. բանավոր հարցումներին պատասխանելիս,
2. մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս,
3. տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս,
4. օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս: Դրանք այն տեղեկություններն են, որոնց հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:

Եթե մարմինը կամ կազմակերպությունը տրամադրել է ոչ հավաստի կամ ոչ լրիվ տեղեկություններ, ապա նա դիմողի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է անվճար տրամադրել ճշգրտված տեղեկությունը:

ԻԱ կենտրոնի հարցումներին մասնակից լրագրողների գերակշիռ մասը 93%-ը երբեւ չի վճարել տեղեկատվության համար: Սա թերևս պայմանավորված է այս հանգամանքով, որ գրավոր տեղեկությունները հիմնականում չեն գերազանցել 10 էջի սահմանը:

Գործնականում օրենքի այս դրույթի կիրառման հետ կապված որոշ դժվարություններ են ծագում: Մի դեպքում, եւ դա հատկապես հատուկ է տեղական ինքնակառավարման մարմիններին, սահմանվում են տեղեկություն տրամադրելու բարձր եւ չիմնավորված վճարներ: Օրինակ, մեկ էջի համար պահանջում են 100-500 դրամ, վկայակոչելով ավագանու որոշումը, մինչդեռ գանձվող վճարի չափը չի կարող գերազանցել տրամադրման տեխնիկական՝ թղթի, տպիչի ներկի կամ այլ նյութի ծախսը: Մյուս կողմից, եւ սա հատուկ է պետական կառավարման մարմիններին, գումար ընդհանրապես չեն պահանջում նույնիսկ այն դեպքում, եթե պահանջվող տեղեկության ծավալը գերազանցում է 10 էջը: Կարծում ենք, անհրաժեշտություն կա այս հարցում միասնական քաղաքականության եւ կարգի մշակման եւ ընդունման՝ հնարավոր սուբյեկտիվ գործելատից եւ սխալ իրավակիրառ պրակտիկայից խուսափելու նպատակով:

**Ներկայացնենք քաղաքացիների հարցումներին ընթացք տալու վերաբերյալ՝ ԱՐՏԻԿԼ 19 կազմակերպության մշակած մի քանի խորհուրդներ:**

**Ուղեցույց 1:** Հարցում ներկայացնողներին ընդունեք բարյացանորեն:

Ժողովրդավարական հասարակությունում պետական պաշտոնյաների դերը ժողովրդին ծառայելու է: Այդ պատճառով շատ երկրներում նրանք կոչվում են հանրային կամ քաղաքացիական ծառայողներ: Յուրաքանչյուր հարցում ներկայացնողի անհրաժեշտ է ընդունել՝ հաշվի առնելով հանրությանը ծառայելու այս սկզբունքը:

**Ուղեցույց 2:** Խորհուրդ տվեք եւ օգնեք նրանց հարցում ներկայացնելու ընթացքում:

Հարցում ներկայացնողներին անհրաժեշտ է օգնել եւ խորհուրդ տալ: Տեղեկատվություն հայցողները կարող են չիմանալ, թե ինչպիսի տվյալներ են նրանք փնտրում, որտեղ այն փնտրել եւ ինչպես գրել հարցումը:

Որոշակի քայլեր պետք է ձեռնարկվեն, որպեսզի տեղեկատվությունը մատչելի լինի բոլորին, օրինակ, նրանց, ովքեր չեն կարող գրել, կարդալ, կամ հաշմանդամների համար: Այս դեպքերում հարցումը գրավոր կազմելու խնդրում պետք է օգնել՝ հարցման թերթիկում նշելով ձեր անունը, պաշտոնը եւ այդ թերթիկի մեջ օրինակը տրամադրել հարցում ներկայացնող անձին:

#### **Ուղեցույց 3: Հարցում ներկայացնողներին անհրաժեշտ է ուղղողել՝ որտեղ վնատրել տեղեկատվությունը:**

Եթե տեղեկատվությունն արդեն հրապարակված է եւ մատչելի է հանրության համար (օրինակ, ինտերնետային էջում, հրապարակումներում, տարեկան հաշվետվության մեջ), պետք է հարցում ներկայացնողին տեղեկացնեք, թե որտեղ կարելի է գտնել այդ տեղեկատվությունը: Եթե չունեք հայցվող տեղեկատվությունը, ապա պետք է ուղղություն տար հարցում ներկայացնողին:

#### **Ուղեցույց 4: Հարցումներին պատասխանեք արագ եւ արդարացի:**

Տեղեկատվության տրամադրման մասին հարցումներին պետք է պատասխանել օրենքով դրա համար սահմանված ժամկետների խիստ պահպանմամբ: Տեղեկատվության տրամադրումը մերժելու պատճառները գրավոր պետք է տրվեն:

#### **Ուղեցույց 5: Այցելուներին տեղեկացրեք իրենց իրավունքների մասին:**

Տեղեկատվության ազատության իրավունքը պետք է նախատեսի տեղեկատվության տրամադրման մերժումների դեմք բերված բողոքները քննելու հնարավորություն՝ անկախ մարմնի կողմից: Եթե մերժում եք տեղեկությունների տրամադրումը, ապա հարցում ներկայացնողին պետք է տեղեկացնեք բողոքարկելու հնարավորության մասին:

#### **Ուղեցույց 6: Կարող եք մերժել անհիմն կրկնվող հարցումները:**

Օրինական է համարվում անհիմն կրկնվող հարցումների մերժումը:

#### **Ուղեցույց 7: Պահպանել հետադարձ կապ՝ հարցում ներկայացնողների հետ:**

Եթե տեղեկություն տրամադրելու մասին ներկայացված հարցմանը պատասխանելը որոշակի ժամանակ է պահանջելու, ապա հարցում ներկա-

---

յացրած անձանց անհրաժեշտ է տեղեկացնել ընթացքի մասին, օրինակ, եթե տեղեկությունը ներառում է մեծ քանակությամբ տվյալներ կամ բազմաթիվ փաստաթղթեր:

### Այսպիսով, որո՞նք են ձեր քայլերը հարցում ստանալու դեպքում.

- հարցում ներկայացնողին տալ ստացական հարցումը գրանցելու մասին,
- հարցում ներկայացնողին տալ հարցման գրանցման համարը, ինչը կհեշտացնի ընթացքին հետեւելը,
- բացատրել հարցմանը պատասխանելու ընթացակարգը (կարելի է հրատարակել տեղեկատվական թերթիկ, որտեղ կբացատրվի հարցումներին պատասխանելու ընթացակարգը),
- հարցում ներկայացնողին իրազեկել պատասխանի ընթացքի մասին, հատկապես, եթե այն պարունակում է մեծ ծավալի տեղեկատվություն, որը գտնելու համար ժամանակ կպահանջվի:

(պատրաստվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից)

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Մարմնի, կազմակերպության անվանումը  
Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը

Դիմողի անուն, ազգանուն, հայրանունը  
(Բնակության, աշխատանքի կամ ուսման վայրի հասցեն)

Հարգելի պրն/տկն -----,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ:

մասին:

(ինարավորինս հստակ ձեռակերպեք անհրաժեշտ տեղեկությունը)

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Սերժման դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել հիմքի մասին (հոդված 11) և ինարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

անուն, ազգանուն

ստորագրություն

ամսաթիվ

## **Ա. 6 Տեղեկատվության ազատության սահմանափակումները**

### **6.1 Տեղեկատվության ազատության սահմանափա- կումների միջազգային չափանիշները**

Եվրոպական չափանիշների համաձայն, որոնք հաստատվել են «Պաշ-  
տոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ» Եվրոպայի  
խորհրդի նախարարների կոմիտեի (2002)2 Հանձնարարականով.

«1. Անդամ պետությունները կարող են սահմանափակել պաշտոնա-  
կան փաստաթղթերի մատչելիության իրավունքը: Սահմանափա-  
կումները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով, անհրաժեշտ  
լինեն ժողովրդավարական հասարակության պայմաններում եւ  
նպատակամղված լինեն պաշտպանելու.

- i.** ազգային անվտանգությունը, պաշտպանությունը եւ միջազգային  
հարաբերությունները,
- ii.** հասարակության անվտանգությունը,
- iii.** քրեական գործողությունների կանխումը, հետաքննությունը եւ դա-  
տական կարգով հետապնդումը,
- iv.** անձի անձեռնմխելիությունը եւ մյուս օրինական շահերը,
- v.** առեւտրային եւ տնտեսական այլ շահերը՝ մասնավոր, թե հանրային,
- vi.** կողմերի հավասարությունը՝ կապված դատական վարույթների հետ,
- vii.**քննությունը,
- viii.**պետական իշխանությունների կողմից իրականացվող տեսչական  
ստուգումները, հսկողությունը եւ վերահսկողությունը,
- ix.**տվյալ պետության տնտեսական, դրամավարկային եւ արժութային  
քաղաքականությունը,
- x.**որեւէ հարցի ծառայողական նախապատրաստման ընթացքում պե-  
տական իշխանությունների ներսում կամ դրանց միջեւ վարփող  
խորհրդակցությունների գաղտնիությունը:

- 
2. Տվյալ փաստարդին հասու լինելը կարող է մերժվել, եթե պաշտոնական փաստարդում պարունակվող տեղեկությունների բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել 1-ին պարբերության մեջ նշված որեւէ շահի, բացառությամբ այն դեպքերի, եթե բացահայտման հարցում գերակայում է հասարակության շահը:
3. Անդամ պետությունները պետք է սահմանեն այնպիսի ժամկետներ, որոնց լրանալու դեպքում 1-ին պարբերության մեջ նշված սահմանափակումներն այլևս չեն գործի:
- Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը եւս սահմանում է տեղեկատվության ազատության սահմանափակման հիմքերը: Համաձայն 10-րդ հոդվածի՝ տեղեկատվության ազատությունը բացարձակ չէ: Կոնվենցիան հստակեցնում է, որ ցանկացած սահմանափակում պետք է անպայմանորեն բխի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ ամրագրված նայատակներից որեւէ մեկից: Պետությունն իրավունք ունի միջամտել ազատությանը միայն սահմանված դեպքերում (անկախ նրանցից, թե ինչ միջոցներով են արտահայտված կարծիքները, գաղափարները, տեղեկատվությունը):

10-րդ հոդվածի 2-րդ մասով արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության բույլատրելի սահմանափակումների հիմքերը բաժանվում են 3 խմբի.

1. հասարակական շահերի պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (ազգային անվտանգության, տարածքային ամրողականության, հասարակական անվտանգության, առողջության կամ բարոյականության պաշտպանության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու համար),
2. այլոց իրավունքների պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (հեղինակային, անձնական կյանքի եւ այլ իրավունքների պաշտպանություն),
3. դատական իշխանության հեղինակության եւ անկողմնակալության համար անհրաժեշտ սահմանափակումներ:

Սահմանափակումների այս շարքը կարող է խստ երկար թվայի: Բայց պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր սահմանափակում կիրառելու համար պետք է առկա լինի 3 կարեւորագույն հանգանաք: Եթե դրանցից թեկուց մեկը խախտվում է, ապա տեղեկատվության ազատության սահմանափակման կիրառումը կհանգեցնի 10-րդ հոդվածի խաթարման:

## Այսպիսով, յուրաքանչյուր սահմանափակում պետք է՝

- նախատեսված լինի օրենքով,
- ունենա օրինական նպատակ, մասնավորապես 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշվածներից մեկը,
- անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությանը վերը նշված նպատակներն իրագործելու համար. բացարձակ սահմանափակումն անընդունելի է:

Սահմանափակումը նախատեսված է օրենքով, եթե այն ձեռակերպված է հստակ և մատչելի է քաղաքացիներին:

Օրենքը պետք է երկակի մեկնարանությունների տեղիք չտա, որպեսզի հնարավոր լինի կանխատեսել այն հետեւանքները, որոնք կարող են առաջացնել կոնկրետ գործողությունը: Օրենքը պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր քաղաքացիներին, որպեսզի նրանք հնարավորություն ունենան կողմնորոշվել, թե նման դեպքերում ինչ իրավական նորմեր են գործում (Սանդի Թայման Շնորհման Սիացյալ Թագավորության, 1976թ. կետ 49):

- Սահմանափակումները պետք է «համոզի կերպով հիմնավորված» լինեն: Յուրաքանչյուր երկիր իր ներքին օրենսդրությամբ հստակ և հասկանալի պետք է սահմանի խոսքի ազատության շրջանակները, որպեսզի բացառվեն երկակի մեկնարանությունները:

Այսպիսով, առաջին պահանջի դեպքում յուրաքանչյուր սահմանափակում պետք է ամրագրվի օրենքով, որպեսզի լրագրողն իմանա, որ այս կամ այն կոնկրետ դեպքում ինքը անցնում է սահմանը, որի համար կարող է պատասխանատվության ենթարկվել:

- Երկրորդ անհրաժեշտ պայմանն է, որ սահմանափակումը նաև պետք է ունենա իրավաչափ նպատակ: Այս նպատակները թվարկված են 10-րդ հոդվածի 2-րդ մասում:
- Եվ վերջապես, երրորդ եւ ամենակարենոր պայմանն ասում է, որ խոսքի եւ տեղեկատվության ազատության սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակության համար: Սա վերջնական եւ որոշիչ նշանակություն ունեցող չափանիշ է, որը ենթարկում է, որ սահմանափակումը կիրառելու համար պետք է.
  - առկա լինի սոցիալական սուր պահանջ,
  - պետության միջամտությունը համաշափ լինի իրավաչափ նպա-

տակին հասնելու համար,

- պետության միջամտությունը արդյունավետ է եւ արդարացված:

Այսպիսով, համաձայն Հանձնարարականի, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի, սահմանափակումը կարող է կիրառվել, եթե այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությանը, որը նշանակում է, որ տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել, եթե պահանջվող տեղեկությունը հրապարակվելու դեպքում կարող է վնաս հասցել օրենքով պահպանվող շահերին, բացառությամբ այն դեպքերի, «երբ բացահայտման հարցում գերակայում է հասարակության շահը»:

Որպեսզի ճիշտ կիրառվեն վերոնշյալ սահմանափակումների հիմքերը, ԱՌՏԻԿԸ 19 միջազգային կազմակերպությունը իր կողմից մշակված Տեղեկատվության ազատության մասին նորեկային օրենքում առաջարկում է երեք մասից բաղկացած թեսք-ստուգում, որը պետք է կատարի պետական մարմինը՝ տեղեկատվության տրամադրումը մերժելուց առաջ:

Տերժումը կարող է արդարացված լինել, եթե պետական մարմինը կարողանա ապացուցել, որ տվյալ տեղեկատվությունը բավարարում է ներքոշարադրյալ շափանիշների.

1. տեղեկությունը պետք է վերաբերի օրենքում շարադրված նպատակներին,
2. տեղեկության տրամադրումը զգալի վնաս կհասցնի այդ նպատակին,
3. նպատակին հասցված վնասը կարող է շատ ավելի մեծ լինել, քան հասարակության հետաքրքրվածությունն այդ տեղեկատվության նկատմամբ:

Երկրի պաշտպանությունը, ազգային անվտանգությունը, արտաքին հարաբերությունները, օրինականությունը, անձնական կյանքի անձնունմխելիությունը եւ, ինչ-որ չափով, պետական մարմնի ներքին գործնքացները կարող են ՏՍ օրենսդրության բացառություն լինել: Օրինակ, Ըվեղիայի «Գ-աղտնիության մասին» օրենքում նախատեսված են 250-ի հասնող բացառություններ, որոնց մի մասն առնչվում է օրենքով պաշտպանվող շահերին, իսկ մյուսները՝ փաստարդերի որոշակի խմբերի: Բացառությունների մեծ մասը սահմանվում է որոշակի ժամկետով՝ 70-ից մինչեւ երկու տարի: Որոշ բացառություններ իրենց ուժը պահպանում են մինչեւ որոշակի դեպքի երեւան գալը:

## 6.2 Տեղեկատվության տրամադրման մերժումը, հիմքերը եւ կարգը

### Սերժման հիմքերը

ՏՍ Օրենքում հստակ սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերն ու կարգը՝ պաշտոնյաներին զրկելով կամայականութեան գործելու հնարավորությունից: Օրինակ, հետեւյալ հանգամանքները չեն կարող տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմք լինել.

- անհարմարություն կպատճառի պաշտոնատար անձին կամ գերատեսչությանը,
- գերատեսչությանը կներկայացնի ոչ շահեկան լույսի տակ,
- դիմողի գործը չէ,
- տրամադրվող տեղեկատվությունը կարող է բյուր ընկալվել դիմողի կամ ԶԼՄ-ի կողմից:

Սերժման օրինական հիմքերը սահմանվում են ՏՍ մասին օրենքով, 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

- ա)** օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում,
- բ)** տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են տեղեկատվության ազատության օրինական սահմանափակումները: Դա այն տեղեկությունն է, որը.

1. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
2. խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,
3. պարունակում է իրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (քժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
5. խախտում է հեղինակային եւ հարակից իրավունքները:

**Այսպիսով, տեղեկության տրամադրումը կարող է մերժվել, եթե դրա բացահայտումը վճարում է կամ կարող է վճարել վերոնշյալ կենսական շահերից որևէ մեկին:**

Սակայն այս սկզբունքը եւս բացարձակ չէ, եւ օրենքը նախատեսում է նաեւ դեպքեր, երբ տեղեկության տրամադրումն ընդհանրապես չի կարող մերժվել, նույնիսկ եթե այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք (8-րդ հոդվածի 3-րդ կետ): ‘Դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունը

**ա)** վերաբերում է քաղաքացիների անվտանգությանն ու առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային աղետներին եւ դրանց հետևանքներին,

**բ)** ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության, շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առեւտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը,

**գ)** տեղեկությունը չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Օրենքը սահմանում է նաեւ հարցումը մերժելու լրացուցիչ հիմքեր.

**Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝**

1. հարցմանը ներկայացվող պահանջները կատարված չեն,
2. պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են,
3. նոյն անձի կողմից նոյն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի (այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին սպառնացող վտանգը):

Կարող է մերժվել նաև տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարելու դեպքում:

Տեղեկատվություն տնօրինողը կարող է նաև չպատասխանել բանավոր հարցմանը, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է իր հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի (հասարակական անվտանգությանը, մարդու առողջությանը սպառնացող վտանգ):

## Մերժման կարգը

SU օրենքը սահմանում է, որ տեղեկատվության տրամադրման մերժումը պետք է լինի միայն գրավոր, որում պետք է հստակ հիմնավորված լինի մերժումը՝ հղում անելով օրենքով սահմանված կոնկրետ բացառությանը:

Գրավոր հարցումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողը 5-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև՝ բողոքարկման կարգը:

Օրենքը նաև սահմանում է, որ այն դեպքերում, եթե տեղեկատվության միայն մի մասը կարող է տրամադրվել, պետական մարմինները պարտավոր են տալ փաստարդի պատճենը, որից հանված է հրապարակման ոչ ենթակա հատվածը, եւ ոչ թե ընդիհանրապես մերժեն հարցումը:

SU մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ հոդվածի կետի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տնօրինողը պարտավոր է տեղեկություն տրամադրել մնացած մասի վերաբերյալ:

Այսպիսով, տեղեկատվությունը կարող է սահմանափակվել միայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Մերժումը պետք է լինի միայն գրավոր, հստակ հիմնավորված՝ դիմողին տեղեկացնելով հիմքերը՝ հղում անելով օրենքով սահմանված այն կոնկրետ բացառությանը, որին առնչվում է պահանջվող տեղեկատվությունը՝ նշելով համապատասխան օրենքի դրույթը:

Հիշե՛ք, մերժումը անպայման պետք է գրավոր հիմնավորված լինի, ինչը տեղեկատվություն տնօրինողի պարտականությունն է:

---

## Ա.7 Տեղեկատվության ազատության օրենսդրության իախտման վարչական եւ քրեական պատասխանատվություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կարեւոր դրույթներից մեկը մերժումը բողոքարկելու ընթացակարգն է: Այն նախատեսում է մի մեխանիզմ, որով տեղեկատվություն ստանալու իրավունքի անօրինական սահմանափակումները կամ ՏՍ այլ խախտումները կարող են դառնալ անկախ քննության առարկա: Առանց այս երաշխիքի ՏՍ օրենսդրության արդյունավետությունը խստ նվազում է:

Ինչպես սահմանվում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2002(2) հանձնարարականի 9-րդ բաժնում՝

հայցողը, ում պաշտոնական փաստարդից օգտվելու հայտը մասմբ կամ ամբողջովին մերժվել է, կամ չի ընդունվել, կամ չի քննարկվել սահմանված ժամկետում, պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգից՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ եւ անկողմնակալ ասյանում: Վերանայման ընթացակարգը պետք է լինի արագ եւ ոչ թանը:

Այս պահանջներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ ՏՍ օրենսդրության մեջ: Օրենսդրությամբ սահմանվում է պաշտպանության երեք ձեւ՝ վերանայում վերադասության կարգով, դատական, բողոքարկում եւ բողոքարկում պետական լիազորված մարմնին՝ մարդու իրավունքների պաշտպանին:

Որոշ պետական համակարգերում վերանայման ներքին ընթացակարգը համարվում է պարտադիր միջանկալ քայլ՝ նախքան դատարանում կամ այլ անկախ մարմիններում հարցը բողոքարկելը, որը հղվում է խախտումը թույլ տված մարմնի վերադասին: Քաղաքացիները կարող են բողոքել՝ պահանջելով ներքին կարգով վերանայել մերժումը: Եթե վերադասը ուժի մեջ է բողնում մերժումը, քաղաքացին, որպես հաջորդ քայլ, կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանին կամ ուղղակի դատարան: Ի դեպ, այս մարմիններին կարող է դիմել նաև առանց վերադասության կարգով բողոքարկելու:

Այսպիսով, բողոքարկման երկրորդ փուլը պետական լիազորված անկախ մարմնին դիմելն է:

ՀՀ-ում այդ լիազորություններով օժտված է օմբուլսմենը՝ մարդու իրավունքների պաշտպանը, որի լիազորությունների մեջ է նստնում քննել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ իմանարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները՝ համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի:

Ի դեպ, պաշտպանն ունի միայն խախտումը վերացնելու մասին առաջարկությամբ կամ միջնորդությամբ հանդես գալու լիազորություն: Առաջարկությունը, սակայն, չունի պարտադիր բնույթ (հոդված 15-րդ): Մարդու իրավունքների պաշտպանի արդյունավետ գործունեության համար պետք է նրան վերապահի նաև մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ մեղադրանք առաջադրելու լիազորություն: Ինչպես նաև, իր լիազորությունները արդյունավետ կատարելու համար մարդու իրավունքների պաշտպանը պետք է զերծ մնա քաղաքական ու տնտեսական ճնշումներից, ուստի պետք է քաղաքական եւ ֆինանսական իրական անկախություն ունենա: Որոշ երկրներում մարդու իրավունքների պաշտպանը կամ տեղեկատվության ազատության հանձնակատարը համարվում են տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման միակ եւ վերջնական օլովակ:

ՏՍ միջազգային պրակտիկան, այնուամենայնիվ, զարգանում է այն զաղափարով, որ տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտի գոյությունն անհրաժեշտ է այս իրավունքի պատշաճ պաշտպանության համար:

**Որպես այլբնորանք, բողոքարկման երկրորդ փուլը կարող է իրացվել դատական համակարգի միջոցով:**

Դատարանի վրա է դրված մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունը: Քանի որ ըստ Սահմանադրության մարդիկ ունեն իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հետեւաբար դատարան կարող են դիմել առանց պաշտպանության առաջին երկու ծեփն դիմելու: Որոշ երկրներում օմբուլսմենն իր հերթին իրավունք ունի բողոքն ուղարկել դատարան:

Նշենք, որ ՏՍ մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ մի քանի դատական նախադեպեր են սկիզբ առել ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Դատարան դիմել են և՛ հասարակական կազմակերպության կողմէ առաջին դիմումը դիմումագրության մասին:

յունները, ե՛ անհատ քաղաքացինները, ե՛ լրագրողները: Փորձը, սակայն, ցույց է տալիս, որ առաջմն դատական համակարգում այնքան էլ լավ չեն տիրապետում ՏԱ մասին օրենսդրության հիմնական դրույթներին, ինչը հանգեցնում է իրավունքի ոչ պատշաճ պաշտպանության: Դատարանի նկատմամբ վստահությունը եւ արդար դատարանի առկայությունը նարդու իրավունքների պաշտպանության բացառիկ երաշխիք են: Դատարանները պետք է քննադատաբար վերաբերվեն տեղեկատվության մատչելիությունը եւ լրահավաքության իրավունքը սահմանափակելու՝ պետական մարմինների պահանջներին: Ժողովրդավարական հասարակության մեջ դատական համակարգը ստուգող դեր է կատարում գործադիր եւ օրենսդիր մարմինների նկատմամբ, որպեսզի վերջիններս կանային չըրկեն մարդկանց տեղեկատվություն ստանալու հնարավորությունից եւ ազատությունից:

## 7.1 Պատասխանատվություն տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար

Տեղեկություն տրամադրելուց ապօրինի հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաև ՏԱ օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՀ Սահմանադրության 33.2. հոդվածի համաձայն.

«Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում քննապահանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար մեղավոր անձանց նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն:

- 2003թ. դեկտեմբերի 1-ին ընդունված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվություն է սահմանվում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար:

«Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար

անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տույզանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում, առաջանում է տույզանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

- ՀՀ Քրեական նոր օրենսգրքի 148 հոդվածով՝ «Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը» քրեական պատասխանատվություն է նախատեսվում պաշտոնատար անձանց կողմից տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար: Սահմանվում է.

«Անձին տեղեկություն ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքը ներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել, պատժվում է տույզանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից մինչեւ 400-ապատիկի չափով»:

«Տեղեկատվության պատության մասին» ՀՀ օրենքը եւս մեկ կարեւորագույն երաշխիք է ապահովում այս իրավունքի ապահովման համար: Օրենքը թեև սահմանում է հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները, սակայն միաժամանակ պաշտպանության տակ է առնում գաղտնիք պարունակող տեղեկատվության արտահոսք թույլ տված պաշտոնյաներին եւ բացառում է նրանց վարչական կամ քրեական պատասխանատվությունը, եթե այդ տեղեկատվության հրապարակմանք կարող են կանխվել հասարակությանը սպառնացող վտանգը, մարդկանց անվտանգությանն ու առողջությանը, շրջակա միջավայրին սպառնացող աղետները, մի խսքով՝ գաղտնիքի հրապարակումն օգուտ է բերում հասարակությանը:

- Համաձայն ՏՀ մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունների հրապարակումը վարչական կամ քրեական պատասխանատվության, ենթակա չեւ եթե.
  - Վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,

- 
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,
  - չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Օրենսդրությունը նաև հատուկ քրեական պատասխանատվություն սահմանող նորմ է պարունակում լրագրողի՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար:

- ՀՀ Քրեական օրենսգրքի 164 հոդվածով՝

«Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը» պատասխանատվություն է սահմանվում նրա գործունեությանը խոչընդոտելու դեպքում նվազագույն աշխատավարձի հիմնապատիկից մինչեւ հարյուրավատիկի չափով:

Եթե նույն արարքը կատարել է պաշտոնական անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ ենթակա է պատասխանատվության տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրավատիկից երկու հարյուրիխսնապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա:

# ԳԼՈՒԽ Բ. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

«Հանրային կապեր» հասկացությունը, իմաստը, խնդիրները

Հանրության հետ կապերը՝ կառավարման գործառույթների համակարգ է, որն իրականացվում է հաղորդակցության ապահովման և այն հետադարձ կապի միջոցով, որով շրջակա միջավայրն ազդում է տվյալ կազմակերպության գործունեության վրա»:

«Հանրային կապերի» հասկացության այս ձևակերպումը տվել է ամերիկացի նշանավոր տեսաբան Ռեքս Հառլոուն: Կա ևս մեկ շատ բնորոշ ձևակերպում, որը տվել է Արոք Մ. Չարլիֆը.

Հանրության հետ կապերը կառավարչական գործունեության այնպիսի տարատեսակ է, որը պատասխանատու է կազմակերպության և նրա գործունեության արդյունավետության կամ անարդյունավետության վրա ազդող հասարակական բազմաթիվ խմբերի միջև փոխչափավետ հաղորդակցության և հարաբերությունների հստակեցման, հաստատման և պահպանման համար»:

Այս բանաձևումները գրեթե ամբողջական պատկերացում են տալիս հատկապես պետական կառավարման համակարգում «հասարակայնության հետ կապերի» դերի և նշանակության մասին, որից և բխում են կառավարչական գործունեության այս ոլորտի հիմնական խնդիրներն ու նպատակները: Դրանք բնորոշագրելիս կարելի է առանձնացնել մի քանի խնդիր:

## Հանրության հետ կապերը.

- ուղղված են կազմակերպության և հասարակական շրջապատի փոխարժմարդութականությանը,
- հասարակական միավորումներին, խմբերին պետական կառավարման մասին տեղեկատվություն փոխանցելու և դրանց արձագանքն ստանալու, վերլուծելու, ամփոփելու միջոցների համակարգ է,
- պետական մարմինների համար առանձին-առանձին նպատակային լսարան(ների) հետ արդյունավետ հարաբերությունների, փոխգործակցության ձևավորման միջոց է:

---

«Հասարակայնություն» արտահայտությունը առանցքային նշանակություն է ձեռք բերում այս համատեքստում, որովհետև առաջին պլան է մղում պետություն-հասարակություն փոխառնչությունների հիմնահարցը և պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ծավալի և որակի հանգամանքը: Այլ խոսքով՝ այն ուղղակիորեն առնչվում է պետական կառավարման և այդ խողովակի միջոցով նաև պետական իշխանության նկատմամբ հասարակության վստահության մակարդակին:

## Բ.1 Հանրային կապերի կոմունիկացիոն տեսությունը


Հանրային կապերի կոմունիկացիոն տեսությունն առավել քան ամբողջական է ներկայացնում նրա դերը պետություն-քաղաքացի, պետություն-հասարակություն հարաբերությունների առանձնահատկությունները: Այս համատեքստում կոմունիկացիան հանդիս է զայիս որպես՝

- մտքերի արտահայտման և փոխանցման արվեստ,
  - տեղեկատվության փոխանցման մեխանիզմների ամբողջություն:
- Սակայն այս մեկնաբանություններն արտահայտում են միայն տեղեկատվության փոխանցման միակողմանի ուղղվածությունը՝ հիմնականում պետությունից դեպի հասարակություն: Այստեղ պետությունը հանդիս է զայիս որպես հաղորդակցության սուբյեկտ, իսկ հասարակությունը՝ օբյեկտ: Այսինքն չի կարևորվում և գնահատվում տեղեկատվություն ստացողի դերն ու նշանակությունը:

Երբ պետությունը և հասարակությունը դիտարկում ենք հավասար հարթության վրա, որտեղ երկու կողմերն ել հանդիս են զայիս թե՛ տեղեկատվություն փոխանցողի, և թե՛ սպառողի դերում, ակնհայտ է դառնում, որ հաղորդակցությունը բանակոր, գրավոր խոսքի կամ նշանների միջոցով տեղեկատվության կամ զաղափարների, գիտելիքների փոխանցման կամ փոխանակման համակարգ է: Այսինքն՝ նախ դա տեղեկատվության փոխանակման գործընթաց է, որտեղ հաղորդակցվող կողմերը դիտարկվում են որպես լիարժեք մասնակիցներ:

## Կոմունիկացիայի սխեման

Դասական հաղորդակցությունն իրենից ներկայացնում է մոտավորապես հետևյալ պատկերը.



Նշված բաղադրիչներից յուրաքանչյուրն էական նշանակություն ունի լի-արժեք հաղորդակցության կայացման համար:

Տեղեկատվություն փոխանցող՝ այն անձն է, ով ոչ միայն տիրապետում է համապատասխան տեղեկատվության, այլև այն փոխանցելու խնդիր է լուծում: Հաղորդակցության ժամանակ տեղեկատվության փոխանցողի դերում կարող են հանդես գալ մեկից ավելի սուբյեկտներ: Ընդհանրապես տեղեկատվություն փոխանցողի և ստացողի դերերը պարբերաբար փոխվում են՝ պայմանավորված իրավիճակից, տեղեկատվության տեսակից, դրված խնդիրներից:

- 
- **Կողավորում՝** լեզվական, նշանային այն միջոցներն են, որոնցով իրականացվում է տեղեկատվությունը:
  - **Տեղեկատվության կրիչ՝** այն ձևաչափն է, որով կատարվում է տեղեկատվության փոխանցումը: Այդ գործառույթը կարող են իրենց վրա վերցնել թե՝ պարզ բանավոր խոսակցությունը, թե՝ հեռախոսային խոսակցությունը, թե՝ նամակագրությունը, թե՝ հեռուստատեսությամբ տեղեկատվության փոխանցումը, թե՝ հեռախոսագրույցը, թե՝ տարատեսակ տեղեկատվական բնույթի սեմիհնարները, խորհրդակցությունները կամ տեղեկատվական թերթիկները, բուկետները և այլն:
  - **Տեղեկատվություն՝** այն ինֆորմացիան է, որ կողավորման միջոցով փոխանցողը ցանկանում է հասցնել ստացողին:
  - **Ապակողավորում՝** ստացողի մտավոր աշխատանքն է, որի ընթացքում ստացված տեղեկատվությունն ընկալվում, հասկացվում է:
  - **Ստացող՝** այն անձնավորությունն է, որին ուղղված է տեղեկատվությունը:
  - **Հետադարձ կապ՝** ստացողի հակադարձ արձագանքը կամ պատասխանը, որով նա ոչ միայն ցույց է տալիս, որ ստացել և ընկալել է տեղեկատվությունը, այլև պատասխանում է դրան: Այս փուլում հաճախ փոխառում են դերերը՝ ստացողը սկսում է հանդես գալ որպես փոխանցող:
  - **Խոչընդոտներ՝** բոլոր վերոնշյալ մակարդակներում ցանկացած բնույթի միջամտություններն են, որոնք հանգեցնում են տեղեկատվության սխալ փոխանցմանը կամ ընկալմանը: Արդյունքում տեղեկատվություն ստացողը ստանում է ոչ այն ինֆորմացիան, որ ուզում էր փոխանցել հաղորդակցություն սկսողը: Ընդունակությունը կարող են կապված լինել հաղորդակցության վերոնշյալ բաղադրիչներից յուրաքանչյուրի հետ: Այն հանգամանքից՝ որքանով է մարդը հասկանում, թե հատկապես ո՞ր բաղադրիչի հետ է կապված հաղորդակցության անարդյունավետությունը. կախված է դրանք վերացնելու հնարավորությունը: Հաղորդակցությունը արդյունավետ է, եթե փոխանցողի և ստացողի միջև պարտադիր փոխարժենում կա: Այլ կերպ ասած՝ հարկ է, որ նրանք խոսեն և մտածեն նոյն բանի մասին: Իսկ դա նշանակում է, որ խոչընդոտների ճիշտ ախտորոշումից է կախված պետության և հասարակության հետազա փոխարժենումը, հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ պրակտիկայում հանդիպում են այնպիսի խոչընդոտներ, որոնք առկա են պետական կառավարման մարմինների և հասարակական տարրեր խմբերի հետ հարաբերություններում:

**Խոչընդոտներ՝ կապված պետական կառավարման ոլորտում  
տեղեկատվություն փոխանցողի հետ**

### ● **Իմացարանական.**

Եթե տեղեկատվություն փոխանցողը պարզապես տեղյակ չէ, կամ լավ չի պատկերացնում իր պարտականությունները: Նման ամենատարածված խնդիրներից է, օրինակ, սահմանված կարգով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը չհրապարակելը, սահմանված ժամկետներում քաղաքացիների դիմում-բողոքներին չպատասխանելը և այլն:

### ● **Հոգեբանական կամ ստերեոտիպային.**

Եթե տեղեկատվություն փոխանցողը բուն փոխանցման գործառույթն ընկալում է իր սուրյեկտիվ պատկերացումների, սովորությների, շրջանակներում՝ առանց ըմբռնելու տեղեկատվության ազատության ապահովման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Այսպիսի դեպքերում, որպես կանոն, տեղեկատվություն տիրապեսողի կողմից բերվում են ամենատարրեր պատճառաբանություններ՝ «Ժամանակ չունեմ», «պետական կամ ծառայողական գաղտնիք է», «Ես իրավասու չեմ այդ տեղեկատվությունը տրամադրել»:

Այս բարդույթը հասուլ է իիմնականում բյուրոկրատական կառավարման մշակույթի կրողներին, կամ այն ոլորտների աշխատակիցներին, որոնք առնչվում են կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործոնների, տեղեկատվության հետ, և որոնց մտահոգությունները պայմանավորված են այդպիսի ռիսկերը քացահայտող փաստաթղթերը հրապարակելու հնարավոր հետևանքներով: Այդ մտավախությունը հաճախ տիրապետող և որոշիչ է լինում նույնիսկ այն դեպքերում, եթե պահանջվող տեղեկատվությունը, փաստաթղթերը նման ռիսկ չեն պարունակում:

## ● Կազմակերպչական.

Երբ ստեղծված չեն կամ չեն գործում տեղեկատվության կառավարման ներքին կառուցակարգերը: Այսինքն՝ երբ չեն գործում տեղեկատվության կառավարման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են տեղեկատվության տնօրինողի, մշակողի, օգտագործողի, փոխանցողի իրավահարաբերությունները, երբ կանոնակարգված չեն տեղեկատվության պատասխանատուների կարգավիճակը, ֆունկցիաները, մշակված չեն տեղեկատվության տրամադրման ուղիները: Այդ ամենը ներքին կոմունիկացիաների խնդիր է:

## Պրակտիկա

Պետք է նշել, որ հայաստանյան պետական կառավարման ոլորտում նման խոչընորտները ամենահաճախ հանդիպումներից են: Պետական կառավարման մարմինների աշխատակազմների հասարակայնության հետ կապերի ստորաբաժանմուների ղեկավարները իմնականում դժգոհում են այն բանից, որ հստակ կանոնակարգված չեն ներքին գործադրական այն հարաբերությունները, որոնք առնչվում են տեղեկատվության կառավարմանը, այնքան չեն գործում այնպիսի կարգեր, որոնք հնարավոր պիտի դարձնեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ամբողջական կատարումը:

Առանձին գերատեսառությունների ներկայացուցիչներ դժգոհում են, որ հստակ սահմանազատված չեն, օրինակ, հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման և նախարարի մամուլի քարտուղարի իրավասությունները, պարտականությունները և դրա հաճախ հանգեցնում է մամուլի քարտուղարներից հասարակայնության հետ կապերի ստորաբաժանմուների կախվածությանը, կամ շահերի ու հետաքրքրությունների բախմանը, ինչն էապես նվազեցնում է աշխատանքի արդյունավետությունը:

## ● Շահաջողական.

Երբ տեղեկատվության կրողը չի պատկերացնում հատկապես ուժ է ուղղված տրամադրվող ինֆորմացիան, որն է իր նպատակային լարանը, ինչ սպասելիքներ, խնդիրներ նա ունի: Այս խոչընդոտը հասուն է առավելաբար օրինաստեղծ աշխատանքին, երբ, օրինակ, իրականացվում է օրենսդրական որևէ նախաձեռնություն՝ առանց դրա շահառուների կարծիքը հաշվի առնելու կամ առանց հաշվարկելու, թե այդ տեղեկատվության հրապարակումն ինչպիսի ազդեցություն է ունենալու նրանց հետաքրքրությունների վրա:

## Պրակտիկա

2005թ. հունիսի 1-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը ստորագրում է հրաման Սյունիքի մարզի Ծիկահողի արգելոցի տարածքով անցնող 90 կմ-անոց ավտոճանապարհ կառուցելու մասին: Սակայն ընդամենը 8 օր անց, հունիս 9-ին, այդ որոշումը կասեցվում է՝ հանդիպելով հասարակական ուժեղ դիմադրության: Չնայած ճանապարհը կառուցելու համար ընտրվում է այլ ուղի, որը գրեթե շրջանցում էր Ծիկահողի արգելոցը, սակայն հասարակական այն ընդվումնը, որը եղավ որոշման մասին տեղեկատվության հրապարակումից հետո, հշիսանություններին ցույց տվեց, թե ինչպես չի կարելի աշխատել հանրային լսարանի և կոնվերտ խմբերի հետ: Նախագահի հրամանագիրն այնքան անակնկալ էր քնապահպանական կազմակերպությունների համար, որ ընդհանրապես փոխզիջման հնարավորություններ, միջավայր չստեղծեց:

Թե որքանով էր ՀՀ քնապահպանության նախարարությունը Ծիկահողի հետ կապված այդ պատմությունից դասեր առել երևաց ՀՀ Լոռու մարզի Թեղուտի քնապահպանական գոտում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից փիլոտի հանքի շահագործման աշխատանքային նախագծի շորջ առաջացած աղոյություն: Ի տարբերություն Ծիկահողի, այս անգամ նախագծի մշակման, հաստատման շորջ աշխատանքներն ուղեկցվեցին հասարակական մի քանի լուսմներով, քննարկումներով, ասուլիսներով, հաշվետվություններով և այլն: Չնայած նախագծի շորջ պահպանվող լարվածությանը, այն նույնպիսի հետևանքներ չունեցավ, ինչ նախորդ դեպքում և ավելի առարկայական դարձրեց պետություն-հասարակական կազմակերպություններ հարաբերությունները:

## Խոչընդոտներ՝ կապված կողավորման հետ

### ● Լեզվական անհամապատասխանություն

Եթք տեղեկատվությունը տրվում է ոչ այն լեզվով, որին տիրապետում է ստացողը, կամ թիրախային լսարանը: Այսպիսի խնդիր առաջանում է պետության և այլ երկրների, այլ լեզուների տիրապետող քաղաքացիների հետ առնչություններում: Խոսքը, սակայն, ոչ այնքան անհատական, որքան զանգվածային հաղորդակցության մասին է: Հատկապես առողջապահական, մարդկանց անվտանգության հետ կապված տեղեկությունները, իրազեկումները հարկ է մատուցել նաև միջազգային հաղորդակցման լեզուներով:

### Պրակտիկա

Այլպիսի խնդիր մշտապիս ունենում են ազգային փոքրանասնությունների ներկայացուցիչները, որոնք շատ սահմանափակ միջոցներ ունեն իրենց տրամադրության տակ՝ անհրաժեշտ տեղեկատվությունն իրենց հասանելի լեզվով ստանալու համար: Նույնը վերաբերում է նաև լսողության խնդիրներ ունեցող մարդկանց, որոնց տեղեկատվությունը հասու է միայն նշանային լեզուների, օրինակ՝ սուրբո-քարգմանության միջոցով: Այս խոչընդուրը ուղղակիորեն առնչվում է ՀՀ-ում գործող «Լեզվի մասին» օրենքի հետ, ըստ որի պաշտոնական լեզուն հայերենն է: Սակայն խոսքը ոչ թե պաշտոնական տեղեկատվությունը հայերենով չիրապարակելու մասին է, այլ այն՝ հայերենով և հասարակական համապատասխան խմբերին հասու լեզվական միջոցներով գուգորդված տրամադրելու, որը իրավական որևէ խնդիր չի առաջացնում:

### ● Լեզվառնական շփոթեցնող շարադասություն

Եթք տեղեկությունն այնպիս է տրվում, որ բոլորովին այլ իմաստով է ընկալվում սպառողի կողմից: Նման խնդիրներ առաջանում են այն դեպքերում, եթք տրամադրվող տեղեկատվության մեջ տեղ են գտնում մի քանի ինաստ ունեցող կամ փոխառնված միջազգային բառեր և բառակապակցություններ, որոնք, կախված տեղեկատվություն ստացողի ընկալողունակությունից, կամխատրամադրվածությունից, կարող են լուրջ տարրներցումների տեղիք տալ:

### Պրակտիկա

Լ.Դ. հարավից, հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքների մասին խսելիս ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանն օգտագործեց «օկուպացված» բառը: Չնայած նա նկատի ուներ այդ բառի ուղղակի թարգմանված, այն է՝ «զբաղեցված» բառի իմաստը, սակայն քաղաքական-հասարակական շրջանակներում այն ընկալեցին որպես հայկական կողմի հետաքրքրությունների ու շահերի դեմ ուղղված արտահայտություն:

## ● Տարածության և ժամանակի անորոշություն.

Երբ տեղեկատվության մեջ կիրառվում են բառեր, բառակապակցություններ, որոնք պարունակում են ընդգծված անորոշության գործոն: Որքան տեղեկատվությունը համեմվում է կոնկրետություն ենթադրող արտահայտություններով, այնքան այն ավելի արդյունավետ է: Այնպիսի բառեր, ինչպիսիք են «զուտով», «այսուեղ», «որոշ ժամանակով», «որոշ չափով» և այլն, կարող են տեղեկատվության հասցեատերերի կողմից ընկալվել ըստ հայեցողության, նախասիրության, տրամադրվածության:

## Խոչընդոտներ՝ կապված տեղեկատվության կրիչի հետ

### ● Կրիչի անարդյունավետություն.

Երբ սխալ է ընտրված այն միջոցը կամ ձևաչափը, որով տվյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է հասցնել նախատեսված լսարանին: Չնայած այն հանգամանքին, որ հանրության հետ կապերը նաև տեղեկատվության կրիչի ընտրության հարցում են ստեղծագործական մոտեցում պահանջում, այնուամենայնիվ պետք է մշտապես նկատի ունենալ՝ որքանո՞վ է ճիշտ և նպատակային տվյալ ինֆորմացիան այս կամ ձևաչափով մատուցելը: Այսինքն հատկապես այդ կրիչի միջոցով տեղեկատվությունը փոխանցելու դեպքում որքանո՞վ այն աղեկված կընդունեն հասարակությունը կամ կոնկրետ խմբերը: Օրինակ՝ սեմինարները չի կարելի օգտագործել լայն զանգվածների համար նախատեսված տեղեկատվությունը (կոմունալ ծառայությունների վարձավճարները փոփոխության ենթարկելու մասին և այլն) փոխանցելու համար: Կամ մարդկանց վերաբերող անձնական տեղեկատվությունը հրապարակել զանգվածային հաղորդակցության միջոցներով:

### ● Կրիչի անհասանելիություն.

Երբ կոնկրետ թիրախային լսարանն ի վիճակի չէ ապակողավորել կամ օգտագործել այնպիսի կրիչի միջոցով փոխանցված տեղեկատվությունը, որը նրան օբյեկտիվորեն և ֆիզիկապես հասանելի չէ: Օրինակ, հարկ է պարզել՝ որքանով արդյունավետ և նպատակային կինը սոցիալապես անապահով խմբերին ուղղված պետական ծրագրերը հրապարակել միայն ինտերնետային կայքերում: Արդյո՞ք ճիշտ չի լինի միջոցներ ձեռնարկել դրանք անմիջապես այդ սոցիալական խմբերին հասանելի միջոցներով՝ ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ, բուկլետների տարածում և այլն, մատուցել:

---

## Խոշընդուռներ՝ կապված տեղեկատվության ապակողավորման հետ

### ● Կանխատրամադրվածություն.

Երբ լսարանը ցանկացած դեպքում չի վստահում տեղեկատվության աղբյուրին և արժանահավատ չի համարում ստացված տեղեկատվությունը: Նման իրավիճակները հասուն են հասարակական-քաղաքական, սոցիալական ճգնաժամեր ապրող հասարակություններին, որտեղ դժգոհության հիմնական սկզբնաղբյուրը համարվում է իշխանությունը, նրա գործունեությունը: Իշխանության նկատմամբ անվատական հանգեցնում է պետական կառավարման համակարգի նկատմամբ անվատական հանգեցնում, և արդյունքում տեղի է ունենում պետություն-հասարակություն հարաբերությունների օտարում: Նման իրավիճակում չի գործում հետադարձ կապի մեխանիզմը և պետությունն ինքը ի վիճակի չի լինում համապատասխան կերպով արձագանքելու հասարակական գործընթացներին, պահանջներին ու հետաքրքրություններին:

### ● Տեղեկատվության բովանդակության և դրա փոխանցման անհամարժեքություն.

Երբ տեղեկատվության փոխանցումն ուղեկցվում է նշանների, ժեստերի, վերաբերմունքի այնպիսի դրսուրումներով, որոնք չեն համապատասխանում տեղեկատվության տրամադրությանը, ազդեցությանը: Այդպես մատուցված տեղեկատվությունը, բնականաբար, չի կարող համոզիչ լինել: Ընդհականակը՝ նպաստում է տեղեկատվության աղբյուրի նկատմամբ վստահության մակարդակի անկմանը: Օրինակ՝ երբ նյութական, մարդկային կորուստների մասին տեղեկատվությունը հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման մասնագետը կամ լրագրողը հեռուստաէկրանից փոխանցում են ժամանակակից կամ ազատ ոճի, սպորտային հազուստով կամ ակնհայտ անտարբեր կեցվածքով:

Այդպիսի տպավորություն է ստեղծվում նաև այն դեպքերում, երբ պետական պաշտոնյան լուրջ ծրագրերի իրականացման մասին ելույթ է ունենում կամ պարզաբանումներ է տալիս անվատահ, մատուցվող թեմայից անտեղյակության ակնհայտ դրսուրումներով, հոխորտալից տոնով, վերամբարձ ոճով կամ պարզապես, քիչ քչփորելով: Նման խոշընդուռների թվին կարելի է դասել նաև այնպիսի իրավիճակները, երբ կարևոր տեղեկատվությունը հայտնելու պարտականությունը դրվում է մի պաշտոնյայի վրա, ով մինչ այդ արդեն հասցրել է իր անվան շուրջ ոչ միանշանակ վերաբերմունք ստեղծել, հայտնի է իր անհավասարակշիռ վարքով կամ հասարակության մեջ ձևավորել է իր նկատմամբ անհարգալից, անբա-

բեհած վերաբերմունք: Այսինքն՝ շատ կարևոր է, թե ով և ինչպես է փոխանցում հրապարակվող տեղեկատվությունը, ինչպիսի հասարակական ընկալում և դիրք ունի: Զարգությունը կ մոռանալ, որ մարդկային հոգեբանությունը մշտապես հակված է անձնավորել պետական համակարգը:

### ● **Սուրյեկտիվ գնահատական տեղեկատվությանը.**

Երբ լսարանը կամ կոնկրետ անձն առաջնորդվում է սեփական դիրքորոշմամբ, տեղեկատվություն տրամադրողի հետ ձևավորված հարաբերությունների առանձնահատկություններով և կարող է ընկալել տեղեկատվության իրական իմաստը, բովանդակային նորությունը կամ նպատակը: Այսինքն՝ երբ սպառողը գիտի՝ մոտավորապես ինչ կարելի է սպասել տեղեկատվության տվյալ աղբյուրից և ելնելով դրանից՝ ջանք չի գործադրում խորամուխ լինել տեղեկատվության բուն բովանդակության մեջ: Այս խնդիրը հատուկ է հատկապես ԶԼՄ-ների հետ պետական մարմինների հարաբերություններին: Վերջիններիցս ստացած տեղեկատվությունը շատ դեպքերում այնքան շարլունային, ստանդարտ թեմաներով կամ խորագրերով է լինում, որ նիշայն վերնագրերը կամ տեքստի առաջին երկու նախադասությունները կարդալով՝ կարծիք է կազմում տեղեկատվության նշանակության, կարևորության մասին և նյութն ուղարկում աղբարկի: Այս խոչընդոտների հարթման առումով կարևորագույն գործն է տեղեկատվության աղբյուրի հանդեպ պատկառանքի և իրազեկության նկատմամբ վատահության ձևավորումը, վերականգնումը:

### Պրակտիկա

ԶԼՄ-ները հիմնականում պաշտոնական տեղեկատվությունը հրապարակում են ըստ այն սփոռողի հեղինակության՝ շատ դեպքերում առանց հաշվի առնելու, թե որքանով է դա հետաքրքրական հասարակությանը, որքանով է համապատասխանում նրա պահանջմանըներին ու սպասելիքներին: Արդյունքում, շատ էական իրադարձությունների, գործընթացների մասին այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունները դրիս է մղվում ԶԼՄ-ների ուշադրությունից: Կամ՝ առաջնորդվում են այն մոտեցմամբ, թե ինչպիսի՝ քաղաքական նշանակություն կամ հետևանք կարող է ունենալ տվյալ տեղեկատվությունը:

### ● **Գերծանրաբեռնվածություն**

Երբ աշխատանքի կամ տեղեկատվության բազմազան հոսքերին հետևելու, վերահսկելու ընթացքում տեղեկատվությունն անտեսվում, ոչնչացվում է առանց ուշադրություն գրավելու:

## Խոչընդոտներ՝ կապված տեղեկատվությունը ստացողի հետ

### ● Կարգավիճակային անվստահություն

Եթք տեղեկատվության սպառողն առաջնորդվում է դասակարգային, կարգավիճակային աստիճանավորմամբ՝ չվստահելով տեղեկատվության աղբյուրի՝ իր խնդիրներից տեղեկացվածությունը։ Կամ համարում է, որ տեղեկատվություն փոխանցողը իրավասու չէ իրեն հետաքրքրող ինֆորմացիան տրամադրելու համար։

### Պրակտիկա

Այս խոշընդուն առաջանում է հիմնականում այն պատճառով, որ մարդիկ տեղեկացված չեն լինում կոնկրետ տեղեկատվություն տնօրինողը պետսկան ո՞ր մարմինն է։ Շատ հաճախ նման անորոշություններից խուսափելու համար նրանք իրենց հետաքրքրող տեղեկատվությունը փորձում են ստանալ պետսկան իշխանության ամենավերին օրականերից։ Գործում է նաև այն մտայնությունը, որ իր խնդիրի լուծումը շատ ավելի հեշտ և արագ կլինի, եթե համապատասխան օրակաների նկատմամբ ճնշում գործադրվի «վերևներից»։ Դա է պատճառը, որ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը, իրենց հետաքրքրող ամենաստարբեր խնդիրների առնչությամբ դիմում է, օրինակ ՀՀ նախագահի կամ ՀՀ կառավարության աշխատակազմերին։

### ● Տեղեկատվության ընտրողականություն

Եթք սպառողը տրամադրված տեղեկատվությունից իմաստային առումով վերցնում է այն, ինչ կցանկանար ստանալ կամ լսել։ Կամ՝ վերցնում է այն, ինչը է ապացուցում է իր արդեն ձևավորված տպավորությունը, ստացած նախնական տեղեկատվության ճշմարտացիությունը, իր սկզբունքային դիրքորոշումը։ Հենց այսպիսի մոտեցման արդյունքում էլ տեղի է ունենում պաշտոնական տեղեկատվության կամ հաղորդագրության մտքի աղճատումը, առանձին մտքերի՝ կոնտեքստից կտրումը ու իբրև առանձին, լիարժեք միտք ներկայացնելը և այլն։ Այսինքն՝ այն, ինչ ԶԼՄ-ների և պետական մարմինների հարաբերություններում մշտապես խանգարող գործոն է եղել։

## Պրակտիկա

«Հետք» ինտերմետային պարբերականը մի անգամ հոդված տպագրեց այն մասին, թե ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահը Երևանի կամերային երաժշտության տան մոտ, կանաչ գոտու հաշվին հասարակական ժամանցի վայր է կառուցվում։ Չնայած այն բանին, որ ՀՀ ՔԾԽ-ի կողմից տրվեց այլ տեղեկությունների հրավանությանը շիամապատասխանելու մասին մեկնարանություն, «Panorama.am» ինտերմետային թերթի լրագրողներից մեկը դիմեց ՀՀ ՔԾԽ նախագահի մամուլի քարտուղարին՝ ցանկանալով ճշտել, թե որքանով է այդ տեղեկատվություննը համապատասխանում իրավանությանը։ Վերջինիս էլ տրվեց նույն պաշտոնական պատասխանը։ Նոյն օրը, սակայն, պարբերականի ինտերմետային կայքում հայտնվում է մի տեղեկատվություն, այն մասին, թե իբր ՀՀ ՔԾԽ նախագահ Մանվել Բաղդայանը իր մամուլի քարտուղարի միջոցով հայտնեց, որ եթե այդ հասարակական օբյեկտը պատկանում է իրեն, ապա մեծ սիրով նվիրում է ցանկացողներին։ Ավելին, հեղինակը կոչ էր արել լրագրողներին՝ շտապել օգտվել այդ «առատաձեռնությունից»։

---

## Բ.2. Լսարանների տեսակները, առանձնահատկությունները

### Հանրության հետ կապերի ձևերը

«Հասարակայնության հետ կապերի» տեսությունը «հանրությունը» բաժանում է մի քանի խմբերի՝ ըստ պետության կամ մասնավոր կազմակերպությունների գործառույթների և աշխատանքի արդյունավետության վրա ազդելու նրանց ակտիվության նակարդակների: Այս մոտեցման համաձայն՝ հասարակայնությունը բաղկացած է հետևյալ սեզմենտներից:

- ակտիվ (բոլոր հարցերի առնչությամբ),
- դիմադրողական,
- միաշափ (այսինքն ակտիվ միայն առանձին խնդիրների և շահերի համատեքստում),
- շարախինն (որի հետաքրքրության առարկան ԶԼՄ-ների՝ միայն տվյալ պահին ակտուալ հրապարակումներն են):

Սակայն պետական մարմինների գործունեության արդյունավետության ապահովման տեսանկյունից գոյություն ունի հանրության երկու տեսակ, որոնք իրենց հետ աշխատանքի տարրեր մոտեցումներ, մեթոդներ են ենթադրում, ունեն իրենց առանձնահատկությունները, ուղղված են տարրեր խնդիրների լուծման, հետապնդում են տարրեր նպատակներ:

#### Դրանք են՝ ընտրող և պատվիրատու հանրույթները:

- Ընտրող հանրույթն այն խումբն է, որն ազդեցություն է գործում հաստատությունների և բոլոր նրանց վրա, ում առջև տվյալ կազմակերպությունը պարտավորություններ ունի: Կազմակերպությունը, տվյալ դեպքում պետական մարմինները, տեղեկատվական ներկայություն են ապահովում պետական կառավարման այլ մարմիններում և այդ ռեսուրսի շնորհիվ փորձում նպաստել իրենց հետաքրքրությունների և պահանջների կատարմանը: Կամ փորձում է ազդել իրենց ներկայացրած մարմնի կենսական շահերին առնչվող օրինաստեղծ գործընթացների վրա: Այսինքն խոսքը վերաբերում է այն հանրությանը, որն ուղղակիորեն առնչվում է ներքին լորբինգին:
- Պատվիրատու հանրությունն այն խումբն է, որին պետական կառավարման մարմինները մատուցում են որոշակի ծառայություններ: Ցուրաքանչյուր կազմակերպություն որոշակի ուշադրություն է հատ-

կացնում իրեն շրջապատող աշխարհին, քանի որ այնտեղ կարող է գտնել օգտագործման ենթակա հնարավորություններ, ֆիքսել տրամադրությունները, վերաբերմունքը և վտանգներն ու մարտահրավերները: Սա կարևոր է հատկապես հանրային կառավարման ոլորտի համար, որովհետու ավելի շատ է իր վրա կրում արտաքին գործոնների ազդեցությունը, քան մասնավոր ոլորտի կազմակերպությունները: Հանրային ոլորտում են իրականացվում պետական ու լոկալ բնույթի ծրագրերը, որոնք ավելի տեսանելի են, շոշափում են լայն գանգվածների շահերն ու հետաքրքրությունները:

Պետք է հաշվի առնել, որ պետական կառավարման մարմինների կապը լայն հասարակության և առանձին խմբի հետ ինտերակտիվ է: Պետական պաշտոնյանները ձեռնարկում են քայլեր, որոնց նպատակն է խրախուսել ճիշտ հարաբերությունները նշյալ երկուսի հետ: Չատ հաճախ այս պատվիրատու խումբը կամ խմբերը նույնացվում են լայն հասարակության հետ: Հանրային կապերի ապահովման պրոֆեսիոնալ աշխատանքը պահանջում է հատակ պատկերացում թիրախային խմբերի, նրանց առանձնահատկությունների մասին: Սա չափազանց կարևոր է կոնկրետ խնդիրների, ծրագրերի իրականացման դեպքում հասցեականություն ապահովելու, գործընթացի իրականացումը վերահսկելու, կառավարելու և դրված խնդիրների իրականացման արդյունքները բացահայտելու, վերլուծելու համար: Հարկ է գիտակցել, որ նպատակային խմբերի հատակեցումն է պայմանագրում հաղորդակցության այն միջոցների, մերողների ընտրությունը, որոնք պետք է կիրառի հանրության հետ կապերի ապահովման ստորարաժանումը յուրաքանչյուր դեպքում: Իսկ դրա համար առաջնահերթորեն անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպիսի՞ հանրության հետ աշխատելու խնդիր է դրվում և ինչպիսի՞ մերողներով կարելի է որոշել այդ հանրությը: Ըստ այլք՝ տարբերակվում են պատվիրատու հանրության որոշման մի քանի մերողներ.

- **Ժողովրդագրական**. հանրության դասակարգում ըստ սեռատարիքային, մասնագիտական և ժողովրդագրական այլ ցուցիչների: Լայնորեն կիրառվում է սոցիալական բնույթի ծրագրերի, ակցիաների իրականացման դեպքում:
- **Աշխարհագրական**. հանրության դասակարգում ըստ տարածաշրջանի, մարզի, քնակավայրի, ընտրատեղամասի և այլն: Կիրառվում է հատկապես քաղաքական, մշակութային ակցիաների, միջոցառումների կազմակերպման դեպքերում:
- **Սպառողական**. դասակարգում ըստ մատուցվող ծառայություններից

---

օգտվողների (քաղաքացիներ, նաևնազիտ. ՀԿ-ներ, իրավաբանական անձինք և այլն), լրատվամիջոցների սպեցիֆիկ լարանների և այլն:

- **Հոգեբանական**. ըստ անհատականությունների, ոլորտների, որոնք ազդում են հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Այս մերողմերը, սակայն, ամբողջական լինել չեն կարող, որովհետև յուրաքանչյուր դրված նպատակ, խնդիր կարող է միայն դրան հատուկ մերողներ, կամ դրանց համադրում պահանջել:

Սակայն անկախ այդ մերողներից՝ պատվիրատու հանրության հետ հարաբերությունները կառուցվում են երկու շփումների միջոցով՝

- ուղղակի,
- անուղղակի:

## Բ.3 Հանրության հետ ուղղակի շփումների միջոցները

Ուղղակի են հանրարվում այն հարաբերությունները, որոնք ենթադրում են ուղղակի հաղորդակցություն տեղեկատվություն տևօրինողի, փոխանցողի և սպառողի միջև:

Ընդ որում ուղղակի հաղորդակցությունը ինչպես քաղաքացիների համար է պետությունից անմիջական տեղեկատվություն ստանալու հնարավորություն, այնպես էլ պետական մարմինների, պաշտոնյաների համար քաղաքացիների հետ ուղղակի հաղորդակցությունն է անհրաժեշտ տեղեկատվության ստացման միջոց:

Անմիջական շփման տարածված եղանակներից մեկը անմիջական հաղորդակցությունն է ծառայությունների մատուցման ընթացքում: Հաղորդակցվելու ստրատեգիական մոտեցումը պահանջում է ճիշտ որոշել, թե ո՞ր լարաններից և վայրերից կարելի է օգտակար և օրյեկտիվ տեղեկատվություն ստանալ, փոխանցել և թե ինչպիսի՞ն պետք է լինի հանդիպման ձևաչափը (երես առ երես, փոքր խմբերով, բաց ժողովներով և այլն): Առանձնացվում են հանրային ուղղակի հաղորդակցության մի քանի տարատեսակներ:

### ● Անհատական շփումներ քաղաքացիների հետ

Եթե ծառայությունների մատուցումը տեղի է ունենում պաշտոնյա-քաղաքի հաղորդակցությամբ: Բնականարար, անհատական մոտեցում է պահանջում կախված այն հանգամանքից՝ թե ինչ պահանջներ, ինչ խնդիրներ ունի քաղաքացին: Այստեղ ավելի շատ անհրաժեշտ են կոռունիկացին հնտություններ՝ ոչ միայն քավարելու համար դիմոնի պահանջներն ու հետաքրքրությունները, այլև նրան տրամադրելու պետական մարմինների հետ համագործակցության: Իհարկե, անմիջական առերես շփումները կարող են որոշակի կոռուպցիոն ռիսկեր պարունակել, հատկապես, եթե խոսքը վերաբերում է կոնկրետ ծառայությունների մատուցմանը: Այդ պատճառով ստեղծվել և ներդրվում են համակարգեր, որոնք հնարավորություն չեն տալիս պաշտոնյաներին ուղղակի հարաբերվել քաղաքացիների հետ, և ծառայության մատուցումը տեղի է ունենում ինտերակտիվ եղանակներով: Այսինքն՝ պաշտոնյան գործ է ունենում ոչ թե քաղաքացու, այլ նրա պահանջի, խնդիրի հետ: Ամեն դեպքում դա չի կարող նշանակել, որ ծառայության մատուցման որակը երկրորդական պլան է մղվում:

## Պրակտիկա

Աստիճանաբար իրեն արդարացնում է Երևանի քաղաքապետարանում ներդրված «Մեկ պատուհանի» խնտիլտուտը, որը նվազագույնի հասցնելով քաղաքացի-պաշտոնյա շփումը, միաժամանակ բարձրացրել է նաև քաղաքացիների հարցումներին, դիմում-բողոքներին ընթացք տալու, պատասխանելու գործընթացի օպերատիվությունը:

### ● Քաղաքացիների ընդունելության օրեր

Կազմակերպվում են քաղաքացիների հետ շփումները կանոնակարգելու, պարտադիր, աշխատակարգային բնույթի դարձնելու համար: Այս մեթոդը արդյունավետ է հատկապես քաղաքացիների մտահոգություններին արձագանքելու համար, եթե իրենց անհանգույթությունը հարցերի պատասխանները նրանք ստանում են առաջին դեմքից: Սովորաբար ընդունելության օրեր են նշանակում մարմինների դեկավարները կամ աշխատակազմերի դեկավարները: Սա արդյունավետ միջոց է նաև այն պատճառով, որ իրենց դեկավարած մարմնի կամ աշխատակազմի գրոծունելության որակի, արդյունքների և դրանց հասարակական ընկալման մասին դեկավարները տեղեկատվություն են ստանում անմիջապես սպառողներից, շահառուներից: Շատ հարցեր լուծում են ստանում հենց այն պատճառով, որ դրա համար պատասխանատվությունն անձանք իրենց վրա են վերցնում դեկավարները և վերահսկողություն սահմանում կատարման ընթացքի նկատմամբ:

Իրականում սա շատ արդյունավետ հաղորդակցության միջոց է, որը, սակայն, պահանջում է հասարակական իրազեկման պարտադիր իրականացում: Այսինքն, ընդունելության օրերը չեն կարող արդյունավետ լինել, եթե քաղաքացիները տեղյակ չլինեն, որ նախ՝ գործում է հաղորդակցության այդպիսի խողովակ և երկրորդ՝ այն գործում է արդյունավետ:

## Պրակտիկա

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում քաղաքացիների ընդունելությունը կատարվում էր առանց որևէ խոչընդոտի՝ օրվա յուրաքանչյուր պահի, եթե խորհրդի նախագահը, անդամները կամ աշխատակազմի ղեկավարը զբաղված չէին ընթացիկ աշխատանքով։ Սակայն հանրային ուղղակի կապերի այս միջոցի՝ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 21.07.2008թ.-ին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի համապատասխան հրամանով հաստատվեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդում քաղաքացիների ընդունելություն իրականացվում է ոչ պակաս, քան ամենը մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն, Խորհրդի վարչական շենքում՝ ք. Երևան, Տերյան 89 հասցեում։ ՀՀ ՔԾԽ նախագահը քաղաքացիների ընդունելություն կատարում է յուրաքանչյուր ամսվա վերջին հինգշաբթի օրը՝ ժամը 16.00-18.00։ Քաղաքացիների ընդունելություններն արձանագրվում են առանձին մատյանում։ Ընդունելության ժամանակ Խորհրդի նախագահի կողմից տրված քանակոր հանձնարարականներն արձանագրվում և ընդունելությանը հաջորդող օրն ուղարկվում են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին։

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում քաղաքացիների ընդունելության կազմի մասին իրազեկելու նպատակով այն փակցվել է Խորհրդի վարչական շենքի մուտքի մոտ, հրապարակվել է «Քաղաքացիական ծառայություն» շաբաթերում և տեղադրվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պաշտոնական կայքէջում։

- **Այցելություններ բնակավայրեր, աշխատավայրեր, բնակարաններ, կոնկրետ բիրախային լարաններին։**

Ի տարբերություն նախորդի՝ այս եղանակի առանձնահատկությունն այն է, որ հաղորդակցության նախաձեռնողը ոչ թե քաղաքացին է, այլ պետական մարմինը, վերջինիս ղեկավարը։ Եվ այս ղեաքում ոչ թե անհատական ընույթի խնդիրների լուծման նպատակ է հետապնդվում, այլ ընդհանրապես ողջ հանրությի, ավելի ճիշտ՝ կոնկրետ լարան։ Այցելությունները ոչ միայն տեղեկատցություն հաղորդելու նպատակ կարող են հետապնդել, ինչպես օրինակ՝ իրականացվելիք ծրագրերը հենց տեղում ներկայացնելը կամ բացատրելը, այլև ստացման։ Եթե պետական մարմինների ղեկավարները փորձում են հենց տեղում պարզե՛ ի՞նչ ընթացքի մեջ է ծրագրի իրականացումը, ինչպե՞ս են քաղաքացիները վերաբերում դրան, ի՞նչ դժգոհություններ, նկատառումներ ունեն, որպեսզի դրանք հաշվի առնվելն հետագա աշխատանքներում։ Այցելությունները որոշակի նախապատրաստական աշխատանք են պահանջում՝ կապված այն

հանգամանքից՝ թե հատկապես ինչ խնդիր է դրված: Օրինակ՝ անհրաժեշտ է որոշել՝ այցի մասին պոտենցիալ մասնակիցներին տեղեկացնել նախօրոք՝ թե դա անել հանպատրաստից: Եթե նպատակը փաստերի որոնումն է, նախօրոք տեղեկացնելը կարող է օգնել ավելի լավ պատրաստվելու և առավել շատ տեղեկություններ հավաքելու առումով: Եթե նպատակը քաղաքացիների կարծիքներու մոտեցումները հայտնաբերելն է, ապա հանպատրաստից այցը կօգնի ավելի ճշգրիտ տեղեկատվություն ստանալ:

### Պրակտիկա

Վերջին շրջանում այս մեթոդը հաջողությամբ իրականացնում է հատկապես ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ նպատակային այցելություններ կատարելով ոչ միայն մարզային քննակավայրեր, այլև նպատակային խմբերի, ինչպես օրինակ՝ աշակերտներին, գործարարներին և այլն: Հատկանշական է, որ առաջին անգամ Տիգրան Սարգսյանի պաշտոնավարման ընթացքում է ՀՀ-ում Կառավարության արտազնա նիստ կազմակերպվել, որը տեղի ունեցավ Շիրակի մարզկենտրոնում Գյումրիում:

#### ● Զանգվածային հավաքների անցկացում

Եթե կազմակերպվում է քաղմության հետ մեկանգամյա հաղորդակցության զանգվածային միջոցառում: Նպատակը պետք է որոշի նման հանդիպումների ձևաչափը, պարբերականությունը, հաճախ նաև բանախուին, թեմատիկան: Որոշ լսումներ ու հավաքներ անցկացնելը պահանջվում է օրենքով՝ իբրև օրինաստեղծ կամ քաղաքականության մշակման ընթացքի բաղադրիչ տարր, իսկ այլ դեպքերում ժողովներն ու լսումները անց են կացվում հիմնարկների նեկավարների հայեցողությամբ: Այն պահանջում է նախապատրաստական լուրջ աշխատանք, թե՛ բուն հանդիպման, հավաքի կազմակերպման, թե՛ դրա ընթացքում փոխանցվելիք տեղեկատվության կամ բանախոսի ելույթի տեքստի մշակման ուղղություններով: Առավել արդյունավետ հավաքներ անցկացնելու համար անհրաժեշտ է հետևել ուղեցույցին.

ա) պարզել հանդիպման նպատակները, լսարանը,

բ) ընտրել օրը, ժամը և վայրը,

գ) համապատասխան ձևերով (նամակներ, հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, հայտարարություններ, քույցիկներ և այլն) լսարանին տեղեկացնել հավաքի կամ հանդիպման մասին,

դ) հավաստիանալ, որ անցկացման վայրը պատրաստ է,

- 
- սահմանել օրակարգը,
  - պարզել հանդիպման ընթացակարգը և կանոնները,
  - որոշել բանախոսին և նրա խոսքի՝ ելույթի հիմնական շեշտադրումներն ու թեմատիկան,
  - անցկացնել հանդիպումը՝ ըստ պլանի և սցենարի,
  - եզրափակել հանդիպումը և նախանշել հետագա քայլերը:

## Ասելիքի բովանդակության համառոտագրի կազմում

Ելույթի նախապատրաստման աշխատանքները պետք է կատարվեն երկու մակարդակով: Առաջինը՝ ինքնավստահության զարգացման, և երկրորդը՝ ելույթի պլանավորման ուղղությամբ: Նախնական պլանի կազմումը օգնում է ուշադրությունը կենտրոնացնել հատակ խնդիրների վրա և խուսափել ժամանակի կրոստից: Պլանը կամ համառոտագիրը կազմվում է ըստ ելույթի թեմաների: Պետք է խուսափել թեման այնքան նեղ կազմելուց, որ դժվար լինի որոշել՝ այն ավելի շատ հետաքրքիր կլինի կազմակերպիչների<sup>9</sup>ն, թե<sup>10</sup> ունկնդիրներին: Որպեսզի համոզվածություն լինի, որ ելույթը կենտրոնացված և ուղղորդված է ունկնդիրներին, համառոտագիրը կազմելիս պետք է հետևել ուղեցույցներին.

### ● Նախնական տեղեկատվության մշակում

Ելույթի բովանդակության նախագիծը չպետք է կառուցել որպես կատարվելիք աշխատանքների նկարագրություն կամ հետաքրքրող հարցերի համառոտագիր: Պետք է գրել ելույթի կարևոր նաև այն պետք է բացատրել մեկին, ով ընդհանրապես տեղյակ չէ թեմայից:

### ● Կատարել գրառումներ

Պետք է մտածել ենթակետերի շուրջ, որոնց մասին ունկնդիրները կցանկանային լսել: Եթե արդեն որոշված է թեման, ուրեմն պետք է այնպես կառուցել խոսքը, որ ունկնդիրներին հնարավորին չափ օգտակար և արժեքավոր տեղեկություն տրամադրվի, այնպես որ նրանք տարրերություն զգան մինչ ելույթը և ելույթից հետո իրենց ունեցած կարծիքի և վերաբերունքի մեջ:

### ● Սկզբանական օրինակի կազմում

պետք է այնպես անել, որ ելույթը շատ մատչելի, ընկալելի լինի: Սակայն գրառումները պետք է լինեն կազմակերպված և համառոտագրված:

Դրանք չեն կարդացվում, այլ կոչված են ելույթ ունեցողին մշտապես ուղղ դրդելու ասելիքի հարցում: Հաճախ անհրաժեշտ է լինում խոսել միանգամից տարբեր իրողությունների, թեմաների շուրջ: Նման դեպքերում հաճառոտագիրը կազմվում է այնպես, որ անցումը մյուս թեմաներին սահման լինի, տրամարանական կապեր ստեղծի դրանց միջև: Պետք է պարզել, թե ո՞ր հարցերը կարող են հետաքրքրել ունկնդիրներին, ինչի՞ն մասին պետք է խոսել առաջին հերթին, և կանխատեսել ի՞նչ հարցեր կարող են առաջանալ:

### ● **Գրել նախարանը և վերջարանը**

Սրանք ելույթի այն մասերն են, որոնք անհրաժեշտ են գրել և կարդալ թղթից: Նախարանի համար կարելի է օգտագործել հումոր, անեկդոտներ կամ ուշադրությունը գրավող տեղեկատվություն:

### ● **Վերանայել և խմբագրել սկզբնական օրինակը**

Ինչ-որ ժամանակ անց կարելի է ավելի քարա՞մ հայացքով նայել ելույթի տերասին, սկզբնական օրինակը՝ մտքում պահելով նախարանը և վերջարանը: Չի քացանվում, որ պլանավորվածից որոշ հատվածներ փոխելու կամ վերածնակերպելու կարիք զգացվի: Մշտապես պետք է փորձել կենտրոնացնել ելույթը բուն թեմայի շուրջ:

### ● **Պլանավորել գոնե մեկ կրկնություն**

Պետք է մտածել, թե ինչպես պետք է այն ներկայացվի: Ուշադրություն պետք է դարձնել ունկնդիրների հետ խոսակցությունների անցկացմանը: Նոյնական է, որ կարիք կամ քանի հարյուր հոգի են, կարելի է լինել ամենահաջողը, եթե հաջողվի համոզել ունկնդիրներին, որ ելույթը իրենց անհանգստացնող թեմայի շուրջ էր:

### ● **Հաճառոտագիրը կազմել հատուկ լեզվական ոճով**

Ելույթի որոշ մասեր պետք է գրել կարճ ձևով, նշելով հիմնական կետերը: Հիշել, որ կարիք կա գրելու միայն նախարանը և վերջարանը, թեև օգտակար կարող է լինել նաև կարևոր մասերը կամ մի քանի կարևոր կետեր գրելը: Սա շատ օգտակար է: Պետք է հուշել բանախոսին՝ խուսափել ընդամենը տեքստը կարդալուց, որովհետև այն շեղում է ուշադրությունը թեմայից դեպի նախադասությունը:

### ● **Գրել ուրվագծի վերջնական տարրերակը**

Վերը նշված քայլերը անցնելուց հետո նախագծելով և վերանայելով՝ կարելի է ելույթի ուրվագիծը հանձնել քրթին: Մինչ այդ պետք է մտածել և որոշել, թե ի՞նչ է նպատակահարմար օգտագործել՝ քութը, ծոցատեսը, թե՝

քարտեր, դրանցից ո՞րն է ավելի հարմար գրառումները պահելու համար:

● **Չվերանայել համառոտագիրը մինչև ելույթի պահը**

Համառոտագիրը մինչ ելույթի օրը նպատակահարմար չէ վերանայել: Նախապատրաստվող հանդիպման մասին պետք է մտածել միայն դրական առումով, ինքնավստահություն ձեռք բերելու համար:

**Համառոտագրի կառուցվածքը.**

**նախարան,**

**հիմնական հարցեր,**

**խնդիրներ,**

**լուծումներ,**

**վերջաբան:**

**Հանգատրաստից ելույթներ**

Կարող է լինել այնպես, որ ժամանակ չինի ելույթ նախապատրաստել: Որոշ մարդիկ հանգատրաստից ելույթների տաղանդ ունեն, մյուսները՝ օժտված չեն այդ շնորհով: Դժվար է իմանալ՝ քանախոսն ունի՞, թե՞ չունի ննան տաղանդ, քանի դեռ առիթ կամ հնարավորություն չի եղել: Նման իրավիճակն ունի մեկ առավելություն: Ժամանակ չի լինում լարվելու և անհանգստանալու ելույթի համար: Ինչպես այն կանցկացվի՝ կախված է միայն քանախոսի փորձառությունից: Նրան պետք է ստորեցնել հիմնականում խոսել այն թեմաների շուրջ, որոնք ավելի լավ է պատկերացնում:

● **Փաստարկների ուսումնասիրություն.**

Անփորձները ոչ միայն դժվարություն են ունենում ասելիքը որոշելիս, այլև դրանում տեղեկատվություն ներառելիս: Առաջին հայացքից թվում է, թե լավ ելույթը պետք է լի լինի մեջքերումներով և վիճակագրական տվյալներով, սակայն ունկնդիրներն ավելի շատ գնահատում են քանախոսի անձնական մոտեցումները: Օրինակ՝ նրա դիտողությունները և մտքերը, փորձը, գիտելիքները: Ելույթը շատ հետաքրքիր է դառնում, երբ քանախոսը հիմնվում է իր փորձի վրա: Հաջող ելույթի համար անհրաժեշտ է համակցել փորձը, դիտողությունները և գիտելիքները:



## ● Հակադիմության պլանավորում.

Ելույթում տրված տեղեկությունը կարող է հակառակ լինել ավանդական մտածելակերպին և նոյնիսկ կարող է զայրացնել ունկնդիրներին: Մարդիկ հակված են դիմադրել փոփոխություններին և երբ առաջարկված մտքերը հակառակ են իրենց սովորույթներին, ակնկալիքներին, թշնամական վերաբերմունք կարող են ցուցաբերել: Բանախոսը հակադիմության հանդիպում է ոչ քե անհատ ունկնդիրների կողմից, այլ ողջ խմբի: Ուստի եթե ունկնդիրները հաստատ են իրենց տեսակետներում, ապա բանախոսը պետք է ձգտի ոչ քե հակառակը պնդել, այլ ցույց տալ, որ իր դիտարկումը անկեղծ է և հասկանում է նրանց տեսակետը: Այդ խնդիրը լուծելու ուղղությամբ պետք է առաջարկել կառուցղական մտքեր: Շատ հաճախ բանախոսը բավարար ժամանակ չի ունենում հաղթահարելու համար իր դեմ ուղղված թշնամանքը, որը կարող է շատ անակնկալ դրսորովել: Բայց եթե նրա ելույթն անկեղծ է և ազնիվ, պարունակում է ունկնդիրներին անհրաժեշտ տեղեկատվություն, ապա ելույթը հաջողությամբ կավարտվի:

## Ելույթ ունեցողի և ունկնդիրների միջև փոխազդեցությունը

Պետք է որոշակիորեն տեղյակ լինել ունկնդիրների հետ փոխազդեցության մակարդակի վերաբերյալ: Փոխազդեցության մակարդակը խոսունի և ունկնդիրների միջև մեծ է, երբ ելույթը փոքր խմբի առջև է և փոքր է կամ ընդհանրապես գոյություն չունի, եթե խումբը մեծաքանակ է:

Սեկ անձ	Փոքր խումբ	Մեծ խումբ
Փոխազդեցության բարձր մակարդակ		Սահմանափակ կամ դեկավարելի փոխազդեցություն
Ելույթ ունեցողը տեսնում է ունկնդիրների արձագանքը		Արձագանքը տեսանելի չէ
Ելույթ ունեցողը դիմում է անհատների		Ելույթ ունեցողը դիմում է որպես մեկ ամբողջության
Երկխոսությունը բնական ընթացք է	Երկխոսությունը սահմանափակ է	Երկխոսություն գոյություն չունի
Անցումները հսկվում են	Հսկման մակարդակը տարբեր է	Ելույթ ունեցողն է հսկում

## ● Ընթացակարգի ուսումնասիրում

Որպեսզի պարզվեն ունկնդիրների հետաքրքրությունները, պետք է ուսումնասիրել ելույթների ընթացակարգը. ինչպիսի՞ վիճակում են ունկնդիրները, մինչև ընդմիջո՞ւմն է խոսելու բանախոսը, թե՝ հետո, նա՞ է ասելու բացման խոսքը, թե՝ ոչ:

Կախված այս իրողություններից՝ կարող են լինել խնդիրներ, որոնք պետք է հաշվի առնել մինչ ելույթը:

## ● Ունկնդիրների հետ կապ

Հաջող և անհաջող ելույթ ունեցողների միջև տարրերությունն այն է, որ հաջող ելույթ ունեցողը շատ լավ գիտի ունկնդիրների պահանջները: Գիտի, թե ինչ են ցանկանում նրանք լսել: Եվ եթե բարձրանում է ամբիոն, ունկնդիրներին փոխանցում է այն, ինչ-որ նրանք ուզում են: Մյուս կողմից ամբիոնը ուժեղ գործիք է սեփական մտքերը մյուսների հետ կիսելու և առաջնորդի դեր ստանձնելու համար: Այս դերում կարելի է կարծիքներ փոխանակել, իսկապես օգնել մարդկանց խնդիրներ լուծել: Որպեսզի այդ խնդիրը լուծվի, առաջին հերթին պետք է ստեղծել հաճելի մրնուրս և ուղղակի կապ հաստատել ունկնդիրների միջև: Առաջնահերթ խնդիրը բանախոսի և ունկնդիրների միջև կապի ստեղծումն է: Դա կարելի է անել անեկդոտների, կատակների կամ հետաքրքիր վիճակագրական տվյալներ ներկայացնելու միջոցով: Ելույթի ներածական մասում բանախոսը պետք է ունկնդիրներին բացատրի, թե ինչո՞ւ է հատկապես ինքը ելույթ ունենում, ինչքանո՞վ է իրագել ու պատրաստ՝ այդ խնդիրների մասին խոսելու և որքանով է հիմնավորված իր կարծիքը:

## ● Ելույթի մասերը

Հաջող ելույթի նախադրյալներ են՝ պարզությունը, համառոտությունը, կենտրոնացվածությունը, մատշելիությունը և աշխատությունը:

Պարզ ելույթներն ավելի լավ են ընդունվում ունկնդիրների կողմից, ընդունուած չանակություն չունի՝ ինչ թեմայի վերաբերյալ են դրանք: Ունկնդիրը սովորաբար պասիվ է և չի ցանկանում հանդիպել բարդ մտքերի, և ջանք գործադրել դրանք հասկանալու համար:

Երկար ելույթները չեն համարվում հաջողված: Ընդհակառակը դրանք շատ ծանծրապի են: Պետք է կարողանալ նյութը բացատրել հնարավորինս կարճ ժամանակում: Ելույթ ունեցողները հաճախ փորձում են մեկնարանել հարցեր, որոնք հեռու են քննարկվող թեմայից: Արդյունքում,

Ելույթը դասնում է կտրտված, անկազմակերպ:

Հարկ է գիտակցել, որ ունկնդիրները ցանկություն կունենան լսելու ելույթը միայն այն դեպքում, եթե այն ուղղված է իրենց: Ունկնդիրները լսվ են արձագանքում այն բանախոսներին, ովքեր հասկանում են, թե ո՞վքեր են իրենք, ինչի՞ համար են եկել հավաքին, ի՞նչ խնդիրներ ունեն:

Աշխույժ և խանդավառ ելույթ ունեցողը թիշ ջանքերի շնորհիվ կզրավի ունկնդիրների ուշադրությունը և համակրանքը: Եթե բանախոսը ներդնում է իր անհատականությունից ինչ-որ բան և կարողանում է հետաքրքիր ելույթի միջոցով աշխուժությունը փոխանցել ունկնդիրներին, առաքելությունը կարելի է հաջողված համարել:

### Նախարած

Առաջնահերթ խնդիրը բանախոսի և ունկնդիրների միջև կապի ստեղծումն է: Ելույթի ներածական մասում բանախոսը պետք է ունկնդիրներին բացատրի, թե ինչո՞ւ է հատկապես ինքը ելույթ ունենում, ինչքանո՞վ է որ ակավորված այդ խնդիրների մասին խոսելու և ինչո՞ւ կոնկրետ հարցերի հետ կապված ունի այդպիսի կարծիքներ:

### Միջնամաս

- Բուն հատվածում անհրաժեշտ է խոսափել պաշտոնական ոճից: Դրական է ընկալվում, եթե բանախոսն իր վորձը և նկատառումները փոխանակում է ունկնդիրների հետ:
- Կարելի է շափի սահմաններում օգտագործել տերմինարանություն: Ամենակարևորը՝ չտատանվել կարծիքների արտահայտման մեջ և ներողություն չխնդրել կարծիքի համար:
- Բացի դրանից, ելույթի ոճը պլանավորելիս միշտ պետք է հաշվի առնել ունկնդիրների ժամանակը և հետաքրքրությունները:
- Որոշ մարդիկ ելույթը շատ հետաքրքիր են սկսում, իսկ հետո շեղվում են թեմայից և զարմանում, թե ինչո՞ւ ունկնդիրները չեն լսում ուշադրությամբ: Պետք է մշտապես մնալ թեմայի շրջանակներում:
- Ունկնդիրները սիրում են խոսելառի բազմազանություն: Անհրաժեշտ է օգտագործել վիզուալ և ոչ ուժեքսիվ հաղորդակցության հնարավոր բոլոր միջոցները՝ դադարներ, ժեստեր և ծայնի բարձրության փոփոխություններ, տեմրը: Դրանք մշտապես օգնում են պահպանել ունկնդիրների ուշադրությունը:
- Եթե ելույթի ընթացքում մի բանի հարցեր են քննարկվելու, ապա մեկ

հարցից մյուսին անցումը պետք է կատարել սահուն:

- Խոսրի բազմատոնությունն ապահովելու համար կարելի է քննարկում-ներին հարցերի կամ վարժությունների միջոցով ներգրավել ունկնդիրներին:
- Պետք է խորհուրդ տալ բանախոսին՝ ելույթը համեմել տեղին և հետաքրքիր դեսպերի, հիշողությունների ներկայացմամբ:

### Վերջարան

Որքան կարևոր է ելույթի նախարանն ու միջնամասը ճիշտ կազմակերպելը, նույնքան կարևոր է այն հաջողությամբ եզրափակելը:

- Անպայման պետք է ասել ունկնդիրներին, որ ելույթն ավարտվում է: Դրանով բարձրացվում է նրանց ուշադրությունը:
- Պետք է խոսափել շարլոնային ձևակերպումներից՝ «Եզրափակելով...», «Վերջում...», կամ ասենք՝ «Վերջում կցանկանայի նորից նշել այն հիմնական հարցերը, որոնք այսօր քննարկեցինք»: Եթե արդեն տրվել է վերջացնելու ազդանշան, ապա դա պետք է անել անմիջապես: Կարելի է նշել հիմնական կետերը և փակել ելույթը: Պետք է գտնել դրական որևէ բան՝ ելույթի վերջում ասելու համար:
- Զանուար է մոռանալ շնորհակալություն հայտնել ելույթի վերջում: Դա քաղաքավարության կանոն է նրանց հանդեպ, ովքեր, չնայած ամեն ինչի, լսեցին ելույթը:

### **Օգնող միջոցների ճիշտ օգտագործումը**

Պետք է հոգ տանել նաև ելույթի և ընթանրապես ողջ հանդիպման ընթացքում օժանդակ նյութերի, տեխնիկական միջոցների ներգրավման, օգտագործման նախն: Դրա համար անհրաժեշտ է այդ նյութերը նախօրոք ուղարկել ելույթի վայրը, հավաստիանալ, որ անհրաժեշտ սարքավորումները կան և պատրաստ են օգտագործման համար: Կարելի է մտածել նաև ունկնդիրներին նշումների համար բղբեր բաժանելու, ինչպես նաև հանդիպման ընթացքում քննարկվող թեմատիկայի, դրանց վերաբերյալ կազմակերպիչների դիրքորոշումները հակիրճ ձևով ամփոփող տեղեկատվական թերթիկների, բուկլետների բաժանման նախն:

Նախօրոք հոգ է տարվում նաև առաջին հայացքից ոչ այնքան կարևոր, սակայն հանդիպման արդյունավետության վրա ազդող, մանրութ թվացող հարցերի լուծման մասին, ինչպիսիք են դասինդում լուսավորության, օդափոխության ապահովումը, բոլոր ունկնդիրների համար տեսողական

լրացոցիշ միջոցներից օգտվելու հնարավորությունների ապահովումը: Տեսդական օգնող միջոցները՝ լուսապատկերներ և պատառներ, օգտագործվում են որպես երկրորդական միջոցներ: Դրանք պետք է ձևավորել հրապուրիչ, հետաքրքրաշարժ միջոցներով:

### Մի քանի գործնական խորհուրդ

#### Անհրաժեշտ է.

- ա. լինել առաջնորդ,
- բ. միշտ խոսել ունկնդիրների հետ,
- գ. հիշել ելույթի հիմնական նպատակը,
- դ. լինել պարզ և հակիրճ,
- ե. գտնել լավագույն տեղը կանգնելու համար,
- զ. շշարաշահել ժամանակը և ունկնդիրների համբե-րությունը:

#### Կոնտակտային հեռախոսակապ

Դասական հաղորդակցության ամենատարածված ձևերից մեկը հեռախոսակապն է: Այն լայնորեն կիրառվում է նաև կառավարման ոլորտում ոչ միայն ներքին, աշխատանքային բնույթի խնդիրներ կարգավորելու, այս կամ այն պայմանագրածորյունները ձեռք բերելու, ինչ-որ հարցերում համաձայնությունների հանգելու համար, այլև լայն զանգվածների հետ անմիջական շփումներ հաստատելու՝ ընդ որում, թե՛ անհատական բնույթի, թե՛ համընդիանություն: Ըստ դրվագ խնդիրների և շփման նպատակների հեռախոսային շփումների մի քանի առանձնահատկություն նշենք.

#### 1. Անհատական հեռախոսազրույց

Եթե համապատասխան պարտականություններով օժտված պաշտոնյայի և քաղաքացու միջև տեղի է ունենում հեռախոսային զրույց, վերջինիս հետաքրքրող կամ նրան ուղղակիրեն առնչվող խնդիրների լուծման, փոխադարձ տեղեկատվության հաղորդման համար: Ի տարբերություն գրավոր տեսադրի միջոցով պատասխանների՝ հեռախոսագրույցը գրեթե միշտ ոչ պաշտոնական բնույթ է ունենում և պատասխանատվության առումով ավելի քիչ վերահսկելի է: Այլ խնդիր է, եթե լրագրողներն իրենց հետաքրքրող հարցի պատասխանը պաշտոնյաներից ստանալիս ճայնագրում են բուն հեռախոսազրույցը, որն օգտագործում են որպես փաստ, հիմնավորում: Այնուամենայնիվ, անկախ նրանից՝ ճայնագր-

վում, արձանագրվում է հեռախոսագրույցը, թե ոչ, պաշտոնյաների խնդիրն է մշտապես ճշմարիտ, պաշտոնական տեղեկատվության շրջանակներից դուրս չգալ, ինչպես նաև պահել չափը և էթիկայի տարրական կանոնները:

## 2. Ընտրանքային հեռախոսակապ

Եթե կապ է հաստատվում ոչ թե մեկ, այլ մի քանի մարդկանց հետ՝ ընտրանքային կամ պատահական ընտրության միջոցով: Բնականաբար, այստեղ անհատական մոտեցման մասին խոսք լինել չի կարող և պետական մարմինների կողմից բոլորովին այլ նպատակներ են հետապնդվում: Մասնավորապես՝ որևէ հարցի կամ հարցերի շուրջ հասարակական կամ կոնկրետ խմբի ներկայացուցիչների կարծիքն ուսումնասիրելը:

## 3. Հրապարակային հեռախոսակապերի հաստատում

Եթե էլեկտրոնային ՁԼՄ-ների եթերում, կամ թերթերի միջոցով պաշտոնատար անձանց հետ «ուղիղ կապ» է հաստատվում: Այս շփման տարբերակը կիրառելի է այն ժամանակ, եթե կան կուտակված, պարզաբանած ենթակա հարցեր, և մի քանի հրապարակային հեռախոսազանգերի միջոցով տրված այդ հարցերին հնչում են սպառիչ, մատչելի պատասխաններ և պարզաբանումներ՝ ի գիտություն ողջ հասարակության: Ընդ որում այդ հեռախոսազանգերը կարող են լինել և նախօրոք պատրաստված, կազմակերպված, և հանպատրաստից:

## 4. «Թեժ գծերի» ստեղծում

Եթե գերատեսչություններն առանձնացնում են կոնկրետ հեռախոսահամարներ՝ քաղաքացիների հրատապ ահազանգերին օպերատիվ արձագանքերու համար:

### Պրակտիկա

2006-07թթ. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2 անգամ կազմակերպեց «Թեժ գծ» ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի հետ: Զնայած անվանմանը՝ այս միջոցառումը ոչ թե քաղաքացիների առաջարկած օպերատիվ խնդիրներին արձագանքելն էր, այլ քաղաքացիական ծառայության համակարգին առնչվող հասարակությանը մտահղող հիմնահարցերի վերաբերյալ Խորհրդի նախագահի բացատրությունները, մեկնարանությունները ներկայացնելը: Դրանցից մեկը կազմակերպեց «Ազգ» օրաթերթի միջոցով և ողջ ծավալով գետեղվեց թերթում և պարբերականի ինտերնետային կայքում, երկրորդը՝ «Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթի միջոցով: Եթե առաջինի դեպքում ակտիվություն էին դրսերում քաղաքացիները, ապա երկրորդի դեպքում՝ քաղաքացիական ծառայողները՝ իրենց հետաքրքրող կոնկրետ խնդիրներով:

Հեռուստատեսային, ծայնային կամ արբանյակային կամուրջներ

Երբ որոշակի խմբերի ներկայացուցիչների հետ կապ է հաստատվում հեռահաղորդակցության ժամանակակից միջոցներով: Դրա անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ շահառուները գտնվում են հեռավորության վրա և հնարավոր չեն այլ միջոցներով կապ հաստատել նրանց հետ: Այս եղանակից օգտվում են հատկապես գիտաժողովներ, կոնֆերանսներ, ինստրակտիվ կլոր սեղաններ կազմակերպելիս: Այն բավականին ծախսատար է և պետական մարմիններից պահանջում է լուրջ ֆինանսական ներդրումներ: Դա է պատճառը, որ այն որպես հսկողութակցության միջոց տարածված չէ: Զնայած՝ այս եղանակն ապահովում է օպերատիվության բարձրագույն մակարդակ:

## Հետադարձ կապի ապահովում ինտերնետի միջոցներ

Տարածված է պաշտոնական կամ կորպորատիվ կայքերում, արդյունավետությունը կապված է բարձացման հաճախականությունից, ենթադրում է ինտենսիվ հաղորդակցություն ինտերնետից օգտվող, ենթադրաբար՝ ավելի ինտենսիվ հանրություն:

## Գրավոր նյութերի տարածում

Հանրության հետ ամենաարդյունավետ ուղղակի կապերի տարատեսակներից է: Կախված թիրախային լարանից և հարցի բովանդակությունից, հաղորդակցության նյատակից՝ կիրառվում են գրավոր նյութերի տարատեսակներ՝ օգտագործելով լեզվանական համապատասխան միջոցներ: Գրավոր նյութը ինքնին փաստ է, հետևաբար առանձնահատուկ կերպով չի կարող կեղծիք, անշշուրջուն պարունակել: Այդ հանգամանքը էլ ատիպում է սահմանափակվել պաշտոնական տեղեկատվությամբ՝ անկախ նյութի շարադրանքի, ոճի ազատության չափից: Դրանք պետք է գրվեն պարզ, հասկանալի ոճով՝ անհրաժեշտության դեպքում թվային փաստարկումներով, որոնք չպետք է այնքան շատ լինեն, որ շփորեցնեն ընթերցողներին:

Կան գրավոր նյութի տարատեսակներ.

- Սասնավոր դիմում-բղոյների, հարցումների պատճախաններ հասցեական նամակների տեսքով.

Երբ գրավոր նյութը ուղղված է գերատեսչությանը դիմած կոնկրետ քաղաքացու հարցման, դիմումի, բողոքի բավարարմանը: Սա ևս անհատական հաղորդակցության տարատեսակ է՝ որը հստակ հասցեականություն ունի:

թյուն է պահանջում: Պետական պաշտոնյաները պետք է ուշադրության կենտրոնում պահեն նամակի բովանդակությունը, բառապաշարը, շարադասությունը, գրելու տոնը, նպատակը և այլն: Պաշտոնյաներին խորհուրդ է տրվում գրելիս հիմնվել այն ենթադրության վրա, որ հանրությունը թե գրագետ է, բայց անպայման չէ, որ հասկանա տեխնիկական կամ խիստ պաշտոնական ոճը:

### ● Ուղերձներ.

ուղղված են կոնկրետ լսարանին կամ ազգաբնակչությանը բանավոր, հիմնականում՝ գրավոր տեսքով.

կիրառվում է հասարակական հնչեղություն ունեցող կոնկրետ խնդրի(ների) վերաբերյալ պետության կամ տվյալ գերատեսչության դիրքորոշումը, մեկնարանությունների մերկայացնելիս: Ուղերձները, ըստ տակարդական խնդիրների լինում են երեք տեսակի. հարձակողական, պաշտպանական և նախազգուշացնող: Շնորհագորական կամ ցավակցական ուղերձները սովորաբար գրվում են վերաբարձ ոճով:

### ● Հաշվետվություններ.

տարեկան կամ կիսամյակային կտրվածքներով՝ ըստ կատարված աշխատանքի ծավալների: Լայն լսարանին ուղղված հաշվետվությունները ներառում են բոլոր այն ոլորտները, որոնք հետաքրքրում են հանրությանը՝ բյուջե, դրված ծրագրերի իրականացում, աշխատակիցների քանակ, աշխատավարձերի չափ, գործունեության առանձնահատկություն, արդյունքների միտումներ և այլն: Պետական կառավարման համակարգում գործում են հաշվետվությունների ներկայացման՝ օրենսդրությունը կարգավորված կառուցակարգեր: Սակայն դրանք ներքին սպառման համար են և պարունակում են ձևակերպություններ, տերմիններ, վիճակագրական տվյալների վերլուծություններ, որոնք ըմբռնելու առումով հասու են միայն նեղ մասնագիտական շրջանակների: Իսկ հանրության համար նախատեսված հաշվետվությունները շատ ավելի պարզ ու հեշտ ըմբռնելի լեզվով են գրվում, որտեղ նշվում է միայն հիմնական և առավելապես կարևոր տեղեկատվությունը: Դրանք գետեղվում են պաշտոնական կայքերում, առանձին դեպքերում՝ պաշտոնական ԶԼՄ-ներով: Այն դեպքերում, եթե մեծ հաշվետվությունները մեծ քանակի բվային տվյալներ են պարունակում, դրանք պետք է կամ համակարգված քննույթ կրեն, և մտովի հաշվարկի համար նատչելի, կամ ներկայացվեն միայն հիմնական բվերը, որոնք կարող են հետաքրքրել հանրությանը:

## ● Տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ

Ոչ օպերատիվ կամ սենսացիոն քննույթի, համեմատաբար մնայուն տեղեկատվություն պարունակող թերթիկներ: Դրանք լինում են կամ ընդհանուր քննույթի, կամ խիստ որոշակի ոլորտների վերաբերյալ: Կարող են, օրինակ, լինել համապատասխան մարմնի գործունեության ոլորտի առանձնահատկությունների, մատուցվող ծառայության(ների), վճարովի տեղեկությունների, ծառայությունների ցանկերի, գերատեսչության պատմության, նպատակների մասին և այլն:

Կարող են որպես տեղեկատվական թերթիկներ տպագրվել նաև հաշվետվությունները, եթե դրանք ծավալուն չեն: Թերթիկները բաժանվում են գերատեսչություն այցելող քաղաքացիներին, ըստ անհրաժեշտության՝ թիրախային այլ լսարանների, կամ այլ միջոցառումների ժամանակ տրամադրվում են տեղեկատվական փաթեթների շրջանակներում: Բաժանվում են նաև լրագրողներին՝ նրանց համար կազմակերպված և ընդհանրապես հրապարակային քննույթի միջոցառումների ժամանակ: Առավել արդյունավետ են լուսանկարներով, գունային և ոճային հետաքրքրական լուծումներով թերթիկները, որոնք ավելի ուշագրավ են: Դրանք նպաստում են տվյալ գերատեսչության մասին ավելի լայն և համակողմանի տեղեկատվություն ստանալուն, ԶԼՄ-ների հրապարակումների որակին և համակողմանիությանը: Այդ առումով շատ արդյունավետ են հատկապես լրագրողների հետ աշխատանքում:

## Բ.4 Հանրության հետ անուղղակի կապեր

### Տեղեկատվության փոխանցման միջոցները

#### ● Հեռուստառադիմության բողարկում

Հեռուստացոյցի և ռադիոյի առկայությունը գրեթե բոլորի տներում և դրանց էական ազդեցությունը հաղորդակցությունը դարձնում են առավել արդյունավետ:

Կառավարությունը հնարավորություն ունի այս կամ այն հարցի վերաբերյալ քառացնել հասարակության տեղեկացվածությունը՝ մեկ կամ նոյնիսկ մի քանի հեռուստառադիմությունների միջոցով: Արդյունավետ է հատկապես հանրային ծառայությունների մասին հայտարարությունները իրապարակելիս: Պրոֆեսիոնալ հանրային ծառայության հայտարարությունների բողարկումը և տարածումը որպես կանոն թանկ է: Սակայն, առանձին դեպքերում միակ ամենաարդյունավետ տարրերակն է:

#### ● Ֆիլմեր և տեսանյութեր

Պետական կառավարման մարմինները նկարահանում են հանրության համար արժեքավոր ֆիլմեր, որոնք առնչվում են անվտանգության ապահովման, արդարադատության, բնապահպանական խնդիրներին և այլն: Տեսանյութերի ձևաչափը բույլ է տալիս, որ դրանք դիտվեն անհատների կամ փոքր խմբերի կողմից իրենց համար հարմար ժամանակ և վայրում: Օրինակ, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը կարող է իր գործունեության, քաղաքականության մասին տեղեկատվությամբ տեսանյութերը, ֆիլմերն ուղարկել տնտեսվարող սուբյեկտներին: Այդպիսի ֆիլմերը կամ տեսանյութերը նախընտրելի են նաև հեռուստարմներությունների համար: Նրանք գովազդային սկզբունքներով ընդունում են հեռարձակելու, սակայն հավելյալ ժամանակ և միջոցներ չեն ծախսում ստեղծման համար:

#### ● Համակարգիչներ և համակարգչային սկավառակներ

Համակարգչային սկավառակներով տարիներով պահվում են մարդահամարների և տնտեսական տվյալներ և այլ տեղեկություններ: Ներկայումս, լայնածավալ տեղեկատվություն է ամփոփված ինտերնետային էջերում կամ լազերային սկավառակների վրա: Դրանք ավելի հասանելի և օգտագործելի են քաղաքացիների համար, քան լրատվության էլեկտրոնային միջոցները: Պետական կառավարման մարմինների գործունեության, ինչպես նաև կառավարական ընթացիկ ծրագրերի մասին տեղեկություններ կարելի է ստանալ ինտերնետային էջերից: Գործում են

նաև on-line հանդիպումներ, որոնք հնարավորություն են տալիս տեղեկություն փնտող անձանց գրութելու առցանց ռեժիմում: Հետազոյւմ, նման պրակտիկան պետք է ընդլայնվի և հասարակության լայն զանգվածներին հնարավորություն ընձեռի բարձրացնել իրենց հարցերն ու խնդիրները:

### ● **Գերատեսչական պարբերականների հրատարակում**

Զարողության իրականացնան ամենաարդյունավետ միջոցներից է, որը կարևորվում է ոչ միայն արտաքին, այլև ներքին սպառման համար: Դրանք նաև յուրատեսակ շրջաբերականների դեր են կատարում: Սակայն պարբերականի հրատարակումը բավական քանի հաճույք է, որովհետև առնչվում է խմբագրություն ստեղծելու, նյուրատեխնիկական միջոցներ կենտրոնացնելու, վարձատրելու և այլ խնդիրների հետ: Բյուջետային պետական մարմինների համար չափազանց դժվար է նման խնդիր լուծել: Որպես կանոն, գերատեսչական պարբերականները հրատարակվում են միջազգային ծրագրերի հրականացման շրջանակներում:

### ● **Հայտարարությունների տարածում**

Հայտարարությունները, հանրային իրազեկման համար են՝ նախատեսված նոր ծառայությունների, դրանց փոփոխությունների, միջոցառումների իրականացման և այլնի մասին իրազեկելու համար: Հայտարարությունները հրապարակվում են ԶԼՄ-ների միջոցով, սակայն շատ հաճախ դրանք գետեղվում են ցուցատախտակների վրա՝ քաղաքացիների համար տեսանելի վայրերում:

## *Պրակտիկա*

Քաղաքացիական ծառայության ոլորտում իդեալական որակի է հասցել համակարգում ընդգրկված բափոր պաշտոնների գրադեցման մասին հայտարարությունների հրապարակման գործընթացը, որն օրենքի պահանջ է և ենթակա է պարտադիր կատարման: Այս ընթացակարգի ներդրման արդյունքում քաղաքացիներն ազատ կարող են տեղեկանալ, թե պետական կառավարման ոլորտի մարմիններում քաղաքացիական ծառայության որ բափոր պաշտոնների գրադեցման համար է հայտարարություն տրվել, ինչ պահանջներ են առաջադրված մրցույթին մասնակցելու համար, երբ և որտեղ են դրանք անցկացվելու և այլն: Այս ընթացակարգը էապես բարձրացրեց կառավարման ոլորտում բափոր պաշտոնների գրադեցման գործընթացի հրապարակայնությունը և, որ ավելի կարևոր է, պաշտոնների մատչելիության համահավասարությունը:

## **Հանրության հետ անուղղակի շփման միջոցները**

Հաղորդակցության այս միջոցները միջնորդի դեր են կատարում մի կողմից պետության, պետական մարմինների, մյուս կողմից՝ հասարակության միջև։ Այդ առանձնահատկությունն էլ հստակեցնում է այն սուբյեկտների շրջանակները, որոնք իրենց վրա են վերցնում «միջնորդի» դերը, որում սովորաբար հանդես են գալիս կամ հասարակական կազմակերպությունները, կամ զանգվածային լրատվության միջոցները։ Դրանցից յուրաքանչյուրն առաջադրում է իր հետ աշխատանքի յուրահատկությունները, սկզբունքները։

**Հանրության հետ անուղղակի հաղորդակցություն հաստատելիս պետք է հաշվի առնել.**

1. Անկախ նրանից՝ այդ հաղորդակցությունն ինչպիսի միջոցներով է իրականացվում, մշտապես պետք է դրանք դիտարկել ԶԼՄ-ների մասնակցության հնարավորության տեսանկյունից։ Այսինքն՝ թե որքանո՞վ է հնարավոր կամ նպատակահարմար ապահովել ԶԼՄ-ների մասնակցությունը։ Որպես կանոն՝ հնարավորության շրջանակներում, պետք է ապահովել հրապարակայնությունը, այսինքն, նախատեսել նաև ԶԼՄ-ների ներկայությունը։
2. Դրված նպատակն է որոշում, թե թիրախային որ լսարաններն են լինելու միջոցառումների հիմնական մասնակիցները։
3. Դրված նպատակն ու խնդիրներն են որոշում, թե միջոցառումներից հատկապես որոնք են նպատակահարմար կազմակերպել։

Կան հանրության հետ անուղղակի հաղորդակցության մի քանի արդյունավետ եղանակներ։

### **ՍԵՍԻՆԱՐՆԵՐ**

**Կազմակերպչական հմտություններ**

- Առաջին խնդիրը սեմինարի նպատակները և խնդիրները հստակեցնելն է և կոնկրետ ձևակերպելը։ Այսինքն պետք է ի սկզբանե պարզել՝ ինչին է այն ուղղված և ինչ արդյունքներ պետք է ակնկալել։
- Սեմինարները հնարավոր չեն պատկերացնել առանց հիմնական խոսնակների։ Պետք է պարզել, թե տվյալ թեմայի, դրված խնդրի շրջանակներում որ պաշտոնյաներն են ավելի իրավասու, ովքեր կարող են լուծել այդ խնդիրը։ Հստակեցվում են նրանց անունները, գրադարանը պաշտոնները, տվյալները։

- Այսուհետև հատակեցվում են այն տեղեկատվական և տեսաձայնային օժանդակ միջոցները, որոնք անհրաժեշտ է օգտագործել սեմինարի ընթացքում՝ այն ավելի տպավորիչ, համոզի անցկացնելու համար (միլրոֆոններ, սինխրոն բարգմանության սարքեր, լազերային ցուցիչներ, Powerpoint և այլն):
- Ամենակարևոր խնդիրներից մեկը սեմինարների մասնակիցների և հյուրերի շրջանակը հատակեցնելն է: Անձինք, որոնք իրենց գրադերած պաշտոնների, գործունեության դրույի, պատասխանատվության աստիճանի բերումով առնչվում են սեմինարի թեմատիկային: Կարող են լինել թե պետական կառույցների, թե ՀԿ-ների, թե տնտեսվարող սուբյեկտների, թե ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Մասնակիցների շրջանակը պարզելուց հետո նրանց ցուցակները կազմելու անհրաժեշտություն է առաջանաւ: Ընդ որում այնպիսի ցուցակներ, որտեղ նշվում են նրանց անունները, կոնտակտային տվյալները, ներկայացրած գերատեսչությունները կամ կազմակերպությունները:
- Հատ սեմինարի ծավալների, տևողության, մասնակիցների թվի, օգտագործելիք օժանդակ միջոցների, նյութատեխնիկական միջոցների՝ կազմվում է սեմինարի բյուջեն և հաստատվում:
- Դրանից հետո հոգ է տարվում լրագրողների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների հրավիրման ուղղությամբ: Սակայն այն չի սահմանափակվում զուտ հրավիրմամբ: Մինչ այդ անհրաժեշտ է նախատեսել տեղեկատվության և դրանց կրիչների շրջանակները, որոնք պետք է տրամադրվեն լրագրողներին և սեմինարի մասնակիցներին: Դրանք են՝ մարդ հաղորդագրությունները, սեմինարի օրակարգը, խոսնակների տվյալների ցուցակը, մասնակիցների ցանկը, տեղեկատվական թերթիկները, բուկետները և այլն):
- Միաժամանակ հատակեցվում է սեմինարի անցկացման վայրը և ժամը՝ հաշվի առնելով խոսնակների, մասնակիցների պահանջմունքները և այլն: Որպես կանոն՝ ընտրվում են հյուրանոցների խորհրդակցական դահլիճները, սակայն դա կախված է սեմինարի ընդգրկումից: Օրինակ, երկարատև, մեծ օրակարգ ունեցող սեմինարների համար նախընտրելի են քաղաքից դուրս վայրերը:
- Այսուհետև սահմանվում է սեմինարների անցկացման սցենարը, մշակվում է օրակարգը.
- Համագործակցություն ենթադրող սեմինարների ժամանակ կարելի է նախատեսել գինեձաների կամ ժամանցային ծրագրերի անցկացում,

որոնք մասնակիցներին ավելի անմիջական շփումների հնարավորություններ են տալիս:

- Նախապատրաստական աշխատանքներից հետո սկսվում է բուն կազմակերպչական փուլը: Պատրաստվում են մասնակիցների հրավերքի նամակները, որոնք պետք է ամփոփ ներկայացնեն սեմինարի թեման և ծրագրը, խոսնակների անունները և պաշտոնները, հասցեն, անցկացման ժամը, կազմակերպիչների կոնտակտային տվյալները:
- Ապա նամակները Ֆաքսի, e-mail-ի միջոցներով ուղարկվում են հասցեատերերին: Որոշ ժամանակ անց, նայած թե ինչքան ժամանակ ունի իր տրամադրության տակ կազմակերպիչը, հեռախոսազանգերի կամ նոր նամակների միջոցով փորձ է արփում հավաստիանալ, հասե՞լ են դրանք հասցեատերերին, թե՝ ոչ:
- Իսկ մի փոքր ավելի ուշ կամ նախորդ քայլին գուգահեռ հեռախոսազանգերի միջոցով ճշտվում է, թե իրավիրքածր որքանով է հակված մասնակցելու սեմինարին: Ուղղակի հարց է հնչում՝ մասնակցելո՞ւ են, թե՝ ոչ:
- Եվս մեկ զանգ կատարվում է սեմինարի նախօրեին՝ միջոցառման մասին վերջին անգամ հիշեցնելու և մասնակցության համաձայնությունը ստանալու նպատակով: Դա անհրաժեշտ է նաև տեղեկատվական թերթիկները վերջնական տեսքի բերելու համար:
- Նախընտրելի է, որ սեմինարի անցկացման օրը կազմակերպիչները և աշխատակիցները կրեն «քեյջ»-եր: Դրանցից պատրաստվում նաև մասնակիցներից յուրաքանչյուրի համար, որպեսզի անձանորները առանց դժվարության կարողանան շփվեն:
- Այնուհետև խոսնակների և մասնակիցներից յուրաքանչյուրի նստատեղի առջև, սեղաններին դրվում են նախօրոր պատրաստված ցուցանակներ: Դա օգնում է մասնակիցներին ոչ միայն առանց ավելորդ խնդիրներ ունենալու գոտել իրենց հատկացված տեղերը, այլև խոսադրած ճանաչելի է դարձնում նրան:
- Սեմինարը սկսելուց 15 րոպե առաջ մասնակիցները գրանցվում են: Նախընտրելի է, որ այդ գործում ներգրավվեն երկու աշխատող: Սեղը գրանցում է մասնակիցներին՝ նախատեսված եղանակով, մյուսը տրամադրում է տեղեկատվական փաթեթը: Նախագահության, հնարավորության սահմաններում նաև մասնակիցների, սեղանին պետք է

դնել սովորական կամ հանքային ջուր, բաժակներ:

- Սեմինարի ողջ ընթացքում պետք է հետևել օրակարգի պահպանմանը:
- Միջոցառումից հետո շնորհակալագրեր են ուղարկվում բոլոր մասնակիցներին:
- Անհրաժեշտության դեպքում պետք է նախատեսել մինի միջոցառում նաև ԶԼՄ-ների համար՝ բրիֆինգ խոսնակների, մասնակիցների հետ և այլն:

### Դրակոնիկա

ՀՀ ՔԾԽ-ն իր ներկայացուցիչների, հիմնականում Խորհրդի նախագահի մակարդակով ակտիվություն մասնակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների նախաձեռնած այն սեմինարներին, որոնք առնչվում են պետական կառավարմանն ընդիմանապես և քաղաքացիական ծառայությանը մասնավորապես, ինչպես նաև պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Առանձին դեպքերում միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ՀՀ ՔԾԽ-ն ինքն է սեմինարներ, խորհրդակցություններ նախաձեռնում, որոնց նպատակը համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված խնդիրների, հեռանկարների քննարկումն է: Այդպիսի սեմինարներից մեկը DFID-ի օժանդակությամբ կազմակերպվեց 2005թ. Հայաստանի գրողների միության՝ Ծաղկաձորի հանգստյան տանը: Հիմնական մասնակիցները համակարգում ընդգրկված կառույցների աշխատակազմերի դեկավարներն էին: Քննարկվում էին համակարգում առկա մի քանի խնդիրների լուծման հնարավորությունները, մեխանիզմները: Այն աշքի ընկալ մեծ արդյունավետությամբ և կարևոր նշանակություն ուներ աշխատակազմների դեկավարների ատեսավորումների առումով:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարող են խրախուսման, հասարակական կարծիքի ձևավորման նպատակ հետապնդել. տոնական օրերը, ակնառու գործիչների հոբելյանները նշելը և այլն:

### Պրակտիկա

2007թ հունվարի 5-ին լայնամասշտաբ ընդունելություն կազմակերպվեց ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի ձևավորման և համակարգի ներդրման առիթով: Այն հաջորդեց նոյն առիթով հրավիրված ՀՀ քօն հանդիսավոր նիստին, որին մասնակցեց նաև ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Թե նիստին, թե դրան հաջորդած մեծ ընդունելությանը մասնակցում էին պետական կառավարման մարմինների ղեկավարներ, աշխատակազմների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների ղեկավարներ կամ ներկայացուցիչներ: Այս միջոցառումների հիմնական նպատակը նորիրդի 5 տարիների գործունելության ամփոփումն էր:

### ԲԱՆԱՎԵճԵՐ

#### ԼՍՈՒՄՆԵՐ

#### ԿԼՈՐ ՄԵՂԱՍՆԵՐ

#### ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

Նախապատրաստման, անցկացման սկզբունքները և մեխանիզմները գրեթե նոյնն են: Դրանք հիմնված են քննարկումներ անցկացնելու, քննարկվող թեմատիկայի առումով մասնագիտական շրջանակների, փորձագետների կարծիքները հստակեցնելու, առաջադրված որոշակի գաղափարներ հաստատելու համար: Կիրառվում են գրեթե նոյն հմտությունները, ինչ սեմինարների կազմակերպման դեպքում: Կոնֆերանսները, սակայն, լինելով ավելի մասշտարային, ավելի ծավալուն և մասրակրիտ աշխատանք են պահանջում:

### ԾՈՐՀԱՆԴԵՍ

Նոր գրեթի, հրատարակությունների, հեռուստածրագրերի, ինտերնետային կայքերի, նոր ծառայությունների, նոր մարմնի ստեղծման, նորարարությունների, բացահայտումների տեխնիկական հագեցվածության և այլնի ցուցադրություն՝ ներկայացում:

Այս դեպքում էլ գործում է կազմակերպման գրեթե նոյն սխեման, ինչ սեմինարների դեպքում: Պետք է հաշվի առնել, սակայն, որ այս դեպքում

մասնակիցներն ավելի շատ ունկնդիրների կարգավիճակում են: Պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել ԶԼՄ-ների ներկայացուցիչների տեղեկատվական պահանջմանը բավարարելու համար. մամլո հաղորդագրություններ, տեղեկատվական թերթիկներ, բրիֆինգի կազմակերպում խոսնակների հետ և այլն:

### Պրակտիկա

ՀՀ ՔԾ Խորհրդի համար ամենակարևոր շնորհանդեսներից մեկը կազմակերպվել 2008թ. սկզբին, որի ընթացքում ներկայացվեցին 5 հասարակական կազմակերպություններից կազմված մոնիթորինգային ցանցի՝ քաղաքացիական ծառայության մրցույթների և ատեսավորումների մոնիթորինգի արդյունքները: Առանձնահատկությունն այն էր, որ ներկայացվում էր ըստ էռության պետական մարմնի և հասարակական կազմակերպությունների խմբի համագործակցության արդյունքը, որը զնահատվել է նաև միջազգային դրամոր կազմակերպությունների կողմից: Նման հաջորդ պրեզենտացիան, որը դարձյալ պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության խոսուն վկայություն էր, կազմակերպվել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից համատեղ՝ ներկայացնելու համար տեղեկատվության պաստորյան որոշում քաղաքացիական ծառայողների վերապատրաստման մշակված և իրեն պարտադիր հաստատված ծրագիրը:

### Միջոցառումներ ԶԼՄ-ների համար. հաղորդակցություն լրագրողների հետ

Լրագրողների հետ աշխատանքը որոշակի առանձնահատկություններ է ենթադրում: Այն ավելի շատ աշխատանք է լրագրողների միջոցով անհրաժեշտ տեղեկատվությունը հրապարակելու և այդ ճանապարհով հանրության իրազեկելու համար: Ընդ որում, որոշ նրբերանգներով կոնկրետ լրագրողների հետ անհատական աշխատանքը տարրերում է ԶԼՄ-ի, կամ վերջինիս դեկավարության, խմբագրի հետ աշխատանքից: Վերջինիս հետ հաղորդակցությունն ուղղված է լինում կազմակերպչական խնդիրների լուծմանը:

Ըստ այդմ կարող ենք հստակեցնել, թե ինչ աշխատանքներ են տարվում լրագրողների հետ անհատապես, և ԶԼՄ-ների հետ ընդհանրապես:

## 1. Լրագրողների հետ անհատական աշխատանք.

- բացառիկ հաղորդումների և հոդվածների պատրաստում,
- մամլո ասուլիսներ,
- ճեպագրույցներ,
- սենյանարներ՝ հատուկ լրագրողների համար,
- անհատական վերաբերմունքի արտահայտում:

Պետական ծառայողները պետք է ընդունեն, որ նորությունների ծրագրերը, լրագրողների պահանջներն ու ոճերը տարբեր են, և այդ պատճառով նրանց հանդեպ կիրավող ռազմավարությունը նույնպես պետք է տարբեր լինի: Խորհուրդ է տրվում ճշտել, թե ո՞վ է լրագրողը, ի՞նչ նորություններ է նա հաղորդում, թե ո՞ր հեռուստաալիքը կամ գործակալությունն է ներկայացնում, ինչ թեմաների վրա է աշխատում և ո՞րն է նյութի տրամադրման վերջնաժամկետը: Լրագրողներից շատերը գերադասում են իրենք ներկայանալ: “Եսաքեր են լինում, երբ պետական պաշտոնյաները առանց ճշտելու լրագրողների ինքնությունը, պատասխանել են նորը հարցերի և միայն հաջորդ օրը հայտնաբերել իրենց մեկնարանություններն ու կարծիքները առանձին շահագրգիռ խմբերի թերթերում: Լավագույն միջոցը լրագրողի անունը, կազմակերպությունը, նյութի թեման և վերջնաժամկետը ճշտելն է: Այդ հարցերի պատասխանները ի հայտ կը բերեմ, թե ինչ տեղեկատվություն է պահանջում նա, ի՞նչ նպատակով և որքա՞ն արագ:

Այնուհետև, պաշտոնյաները պետք է պարզեն, թե ի՞նչ յուրահատուկ հարցեր կտրվեն: Լավագույն խորհուրդը միայն տրված հարցերին պատասխանելն է: Եթե հարցի իմաստը պարզ չէ կամ կասկած է հարցուցում, ապա պաշտոնյան պետք է խնդրի լրագրողին կրկնել կամ ճշգրտել այն: Սա ոչ միայն պաշտպանում է պաշտոնյային սխալ հասկացված լինելուց, այլ նաև նրան լրացուցիչ ժամանակ է ընձեռում պատասխանը ձևավորելու համար:

Հայտ դեպքերում, հարցերին կարելի է արագ և դյուրին պատասխանել հեռախոսով: Եթե պաշտոնյաները վստահ չեն որևէ փաստերի կամ այդ հարցերին պատասխանելու իրենց իրավասության մեջ կամ հավելյալ ժամանակի կարիք ունեն, նրանք պետք է ճշտեն, թե երբ է նյութը լրագրողին հարկավոր և խնդրեն հետո զանգահարել: Որոշ հարցագրույցներ բարդ է անցկացնել հեռախոսով, մանավանդ, երբ լրագրողը տվյալ հարցի կամ խնդրի վերաբերյալ նախնական տեղեկությունների կամ գիտե-

լիքների չի տիրապեսում: Նման դեպքերում պաշտոնյաները պետք է առաջարկեն անցկացնել երես առ երես քննարկում և հանդիպում նշանակեն: Գործադիր պաշտոնները գրադենող պաշտոնյաները պետք է տեղեկատվություն հաղորդեն հաստատության քաղաքականության և աշխատակազմի վերաբերյալ: Տեխնիկական և մասնագետ աշխատողները պետք է պատասխանեն միայն իրենց իրավասության տակ գտնվող հարցերին: Մեկ այլ որոշում վերաբերում է տրամադրվող տեղեկատվության լնտրությանը: Նախապես պատրաստված փաստերն ու հայտարարությունները պետք է տրամադրվեն տպագրված տեսքով: Հանրային ոլորտի դեկավար պաշտոնները գրադենողները կարող են փշացնել իրենց հարաբերությունները լրագրողների հետ, եթե արհամարհանքով են վերաբերվում այն տեղեկատվությանը, որը լրագրողի կարծիքով առկա է: Ստեղծ պրոֆեսիոնալ տեսանկյունից անընդունելի է և տակտիկապես անհմաստ:

Պետք է նաև տեղյակ լինել լրագրողական նորմերին և սովորույթներին: Պետական պաշտոնյաները պետք է բազային կանոններ մշակեն հարցազրույցից, ինչպես նաև նույր հարցերին պատասխանելուց առաջ: Հաճախ լրագրողը կարող է սխալ ենթադրություններ անել իրավիճակի վերաբերյալ կամ կազմակերպությունը կարող է ստիպված լինել կոնֆիդենցիալ տեղեկատվություն տրամադրել անմեղ աշխատողներին պաշտպանելու և անցանկալի վիճակում հայտնվելուց խոսափելու նպատակով: Նման դեպքերում, լրագրողներն ու խմբագիրները կարող են ցանկություն հայտնել պաշտպանելու այդ աղբյուրներն ու տեղեկատվությունը, պահանջվող տվյալները ստանալու համար հաստատել ոչ պաշտոնական աղբյուրներից ստացված դիտարկումները:

**Նորությունների լրատվության ուսումնասիրությունը ընդգրկում է  
հետևյալը՝**

- Հուսալի տեղեկատվության տեղակայում:
- Նորությունների աղբյուրների հավաքագրում և պաշտպանություն:
- Տեղեկատվական նյութի դիտում և ձայնագրում:
- Զայնագրությունների և տեսագրությունների պահպանում:
- Հավաքված տեղեկատվության գնահատում և ստուգում:

Եթե բղթակիցը հարցազրույցից առաջ համաձայնում է, որ տեղեկատվությունը չձայնագրվի, ապա նա կարող է չիրապարակել կամ հեռուստատեսությամբ այն ցույց չտալ: Զայնագրությունից դուրս, գրույցի ընթացքում

տրված տեղեկության հրապարակումը համարվում է ժուռնալիստական երիկայի կոպիտ խախտում: Այնուամենայնիվ, լրագրողն ազատ կարող է այն ստուգել անկախ աղբյուրների միջոցով: Լրագրողները կառավարության և գործարարների կողմից լրելու նպատակով «ձայնագրումից դուրս» մոտեցման օգնությանը դիմելը համարում են անքարեխղճություն: Եթե պետական պաշտոնյան խնդրում է լրագրողին՝ նյութին վերաբերվել որպես հատուկ տեղեկության, ապա լրագրողը կարող է այն հրապարակել կամ ցուցադրել, բայց չփաստել կամ վերագրել այն այլ աղբյուրի: Այդ դեպքում պատկերացում է ստեղծվում, թե լրագրողը ինքնուրույն է ձեռք բերել այդ տեղեկատվությունը: Սակայն, չնայած այդ ամենին, նշված լրագրողական մոտեցումները երթեմն արդյունավետ միջոց չեն պաշտպանվելու հարցում: Կառավարության, գործարար և հասարակական դորոտների դեկավարների շրջանում նկատվում է համեմատական զգուշացնություն:

Խաղի կանոններով շարժվելը, անշուշտ, կարևոր է, սակայն ինչպես մարքերինգում, հանրային ոլորտի պաշտոնյաները պետք է առաջարկեն այնպիսի արտադրանք, որը վերջին հաշվով մեծ պահանջարկ ունի: Այդ պատճառով, լրատվամիջոցների հետ լավ հարաբերություններ հաստատելու համար հարկավոր է հասնել արդյունավետ կառավարման համակարգի ստեղծման:

Ազնվությունը մեկ այլ, շատ կարևոր գործոն է: Կոմպետենտության հետինակություն վայելող կազմակերպությունները, որոնք ակտիվորեն առնչվում են լրատվության և հանրության հետ, ավելի քիչ հավանականություն ունեն խոցվելու լրատվության կողմից:

Նորությունների լրատվությունը տեղեկատվության կրող է: Պաշտոնյաներն ակտիվորեն հետևում են լրատվանումներին՝ հանրային ծառայությունների հանդեպ քաղաքացիների կարծիքին ծանրանալու համար, ինչպես նաև տեսնելու, թե ինչո՞վ է զրադիմական հասարակությունը:

**Անկախ լրագրողների հետ աշխատանքային հաղորդակցության այս ձևերից, պետք է նշել, որ գրեթե բոլոր լրագրողներին հետաքրքրում են հարցերի, տեղեկատվության մոտավորացնելու շրջանակները.**

- Մանրամասներ՝ անունների, փաստերի, թվերի վերաբերյալ, դրանց ստուգում այլ աղբյուրների միջոցով:
- Հակասություններ՝ այլընտրանքային տեսակետների որոնում, հակադրում տարբեր աղբյուրների հետ:

- 
- Քաղաքական որոշումների դեպքում՝ ճշտելու համար, թե ո՞ւմ վրա է տարածվում հաստատության կողմից ընդունված որոշումը, որա վրա ազդող գործուները և թե ինչպես ու է ընդունվել:

## Աշխատանք ԶԼՄ-ների և խմբագիրների հետ

Համագործակցությունը հետևյալ հարցերի շորջ է.

- առանձին հաղորդումների, հաղորդաշարերի պատրաստում,
- առանձին հրապարակումների պատրաստում,
- խորագրերի, էջերի պատրաստում թերթերում,
- հավատարմագրում:

## Սեմինարներ՝ հատուկ լրագրողների համար

Հավատարմագրված կամ համապատասխան ոլորտում մասնագիտացած լրագրողների հետ պարբերաբար պետք է ուղղորդիչ սեմինարներ անցկացնել: Դա երկու նպատակ է հետապնդում.

1. Բարձրացնել լրագրողների տեղեկացվածության մակարդակը, ծանրացնել նոր ծառայություններին, պետական մարմնի կողմից իրականացվող քաղաքականության մեջ կատարված փոփոխություններին և փորձել հասնել դրանց ըմբռնմանը:
2. Զարգացնում է հարաբերությունները լրագրողների և պաշտոնատար անձանց միջև, ինչը նպաստում է պաշտոնատարների նկատմամբ լրագրողների չեզոք վերաբերմունքի ձևավորմանը:

Գործում է սեմինարների կազմակերպման նույն սխեման: Այս դեպքում դրանք կարող են նաև ուսումնական նյութական հետապնդել: Այդ պատճառով նրանց հետ կարելի է անցկացնել նաև կլոր սեմաններ՝ օգտագործելով ուսուցման ժամանակակից բոլոր մեթոդները:

## Անհատական վերաբերմունքի արտահայտում.

Այն հոգեբանական նշանակություն ունի՝ զարգացնելու համար միջանձնային հարաբերությունները լրագրողի և հասարակայնության հետ կապերի մասնագետների միջև: Այն ենթադրում է հնարավորության սահմաններում լրագրողների ծննդյան օրերի, տոների՝ կանանց պարագայում հատկապես մարտի 8-ի, ապրիլի 7-ի, Ամանորի շնորհավորում քայլիկներով, ինտերնետային հասցեներով և այլն:

## **Մամլո ասուլիս կազմակերպելու մեթոդիկան**

- նպատակների և խնդիրների հստակեցում,
- հիմնական թեմատիկայի կոնկրետ ձևակերպում,
- խոսնակների անունների, գրադեցրած պաշտոնների ֆիքսում, նրանց խոսքի համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների հստակեցում,
- ասուլիսի սցենարի մշակում և նախապատրաստում. (օրը, ժամը, վայրը, տևողությունը, օժանդակ մասնագետների ապահովում. լուսանկարիչ, օպերատոր, թարգմանիչ, սրահի ձևակերպում, վարողի հստակեցում),
- մասնակից ՁԼՄ-ների ցուցակագրում և հաստատում,
- հրավիրատոմսի մշակում (լուսաբանվող թեմայի կարճ ներկայացումնվ, ծանուցում),
- ծանուցման նպատակով տեղեկացում հեռախոսազանգի միջոցով,
- եւս մեկ հեռախոսազանգ ասուլիսի նախօրեին՝ հիշեցման նպատակով,
- մամլո հաղորդագրության նախապատրաստում,
- տեղեկատվական փաթեթի նախապատրաստում. ներառում է. (խոսնակների ցուցակը, ասուլիսի ծրագիրը, տեղեկատվական թերթիկներ, բուլլետներ և այլն),
- խոսնակների խոսքի պատրաստում,
- հնարավոր առավել բարդ հարցերի կանխատեսում,
- թեմայի կամ խոսքի նկատմամբ լրագրողների հնարավոր ռեակցիայի կանխատեսում,
- աշխատակիցները պետք է կրեն բեյզեր,
- սրահի նախապատրաստում,
- լրագրողների գրանցում՝ նրանց կոորդինատների ֆիքսմամբ,
- ասուլիսի օպտիմալ ժամանակահատվածն է 40 րոպե, որից 15-ը՝ պրեզենտացիայի համար,
- ավարտից հետո մամլո հաղորդագրության տարածում այն խմբագրություններ, որոնք չեն ներկայացել ասուլիսին,
- բոլոր հրապարակումների ի մի բերում,

- ասուլիսի կամ դրա ընթացքում արծարծված թեմայի վերաբերյալ հրապարակումների վերլուծություն, եզրահանգումներ,
- ըստ արձանագրված թերությունների՝ հետագա աշխատանքների պլանավորում:

### Դրակտիկա

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը մինչև 2006թ. մեկ տարվա մեջ առնվազն չորս անգամ կազմակերպում էր Խորհրդի նախագահի մասնությ ասուլիսը: Այսպիսի պարբերականությունը պայմանավորված էր նրանով, որ համակարգը, նոր էր, երիտասարդ, սկսված նոր գործընթացները մեծ հետաքրքրություն ունեին և պահանջում էին առավելագույն թափանցիկություն: Ներկայում մեկ տարվա կտրվածքով կազմակերպվում են 2-3 ասուլիս՝ կախված այն հաճախանքից, թե ինչպիսի և ինչ ծավալի նոր ասելիք է կուտակվել: Խորհուրդը ենում է այն սկզբունքից, որ ասուլիսները հանրային կապերի ապահովման ոչ թե հիմնական, այլ ընդամենը մի մասն են, տարատեսակը և արդյունավետ են, երբ զուգորդվում են հանրային կապերի այլ միջոցներով:

### Նորությունների կառավարում

Այս գործընթացը պակաս կարենոր չէ, որովհետև շատ դեպքերում հենց նորությունների ճիշտ կառավարումից է կախված աշխատանքի արդյունավետությունը: Այն ենթադրում է հետևյալ միջոցառումները:

- Տեղեկատվության տրամադրման մեխանիզմների ներդրում և գործարկում. ենթադրում է, որ պետք է ստեղծված լինեն ներքին փաստաթրաշրջանառության հատակ մեխանիզմներ, որտեղ հրապարակման ենթակա տեղեկատվությունը պետք է ամփոփվի և դասակարգվի հանրության հետ կապերի ստորաբաժանումներում:
- Պետք է հստակ լինի, թե ովքեր են կոնկրետ խնդիրների պարզաբանման համար ամենակոմպետենտ պաշտոնյաները, որոնք կունենան նաև լրագրողների հետ շփոմների որոշակի հմտություններ:
- Լրագրողներին պետք է ապահովել նախնական նյութերով, մասնագիտական հրապարակումներով, հաստատության կամ ընկերության մասին պաշտոնական փաստաթրերով:
- Տեղեկատվական նյութի դիտում և ձայնագրում:
- Զայնագրությունների և տեսագրությունների պահպանում:
- Հավաքված տեղեկատվության գնահատում, վերլուծություն:

- 
- Առանձին հարցերի շուրջ լրատվություն:
  - Առանձին հարցերի շուրջ լրատվությունը ենթադրում է թեմաների կամ իրադարձությունների լուսաբանում տվյալ թեմատիկ բնագավառում կամ պայմաններում (օրենսդրություն, սպառողների հարցեր և այլն):
  - Նպատակն է զարգացնել թեմայի վերաբերյալ խորը գիտելիքներ և տրամադրել այնպիսի աղբյուրներ, որոնք նոր տեսակետներ կհաղորդեն՝ ներառելով նեղ թեմաներն ավելի լայն ենթատերսություն:

### ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԵՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ


Հասարակական կարծիքի ուսումնասիրման պետք է լինի մշտական գործընթաց, առանձնապես կոնկրետ ծրագրերի իրականացման ընթացքում և դրանից հետո:

#### Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակները

- Բացահայտել տվյալ գերատեսչության կողմից մատուցվող ծառայությունների որակի, արդյունավետության նկատմամբ քաղաքացիների վերաբերմունքը:
- Բացահայտել առկա խնդիրները, հաղորդակցական խոչընդոտները և վերացնել դրանք:
- Պարզել լայն հանրության կամ կոնկրետ խմբերի սպասելիքներն ու իրական պահանջները, կարիքները:
- Նոր ծառայությունների պահանջարկի հայտնաբերում:
- Բարձրացնել քաղաքացիների իրազեկությանը մակարդակը՝ ծրագրերի վերաբերյալ:
- Գտնել հնարավորություններ և հանրությանը ներգրավել հանրային հակավարման գործընթացում:

---

## ՀԱԴՈՐԴԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Փոփոխություններով)

Հնդումվել է 05.07.1995

### Հոդված 27.

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել իրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը:

### Հոդված 27.1.

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## Տեղեկատվության ազատության մասին

Հնդունված է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին

**Հոդված 1.** Սույն օրենքի կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:
2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական իինարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

**Հոդված 2.** Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը

1. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:
2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

**Հոդված 3.** Սույն օրենքում օգտագործվող իիմնական հասկացությունները  
Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ իիմնական հասկացությունները.

**Տեղեկատվության ազատություն՝** տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

**Տեղեկություն՝** անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձու-

թյան, եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)։

**տեղեկատվություն տնօրինող՝** տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական իշխանակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությաններ եւ դրանց պաշտոնատար անձինք։

**հանրային նշանակության կազմակերպություն՝** ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ դրույներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ։

**հարցում՝** տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում։

**հրապարակում՝** տեղեկությունը մամուի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այնուհետեւ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնել եւ մատչելի դարձնել։

**Հոդված 4.** Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները

Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

1) տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը։

2) տեղեկությունները փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը։

3) տեղեկությունները տրամադրելու մատչելության ապահովումը։

4) հրապարակայնությունը։

**Հոդված 5.** Տեղեկատվությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը

---

Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

#### **Հոդված 6. Տեղեկատվության ազատության իրականացումը**

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմանը դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:
2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:
3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

#### **Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը**

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում բոլորի համար տեսանելի տեղում:
2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեռով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու քարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:
3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները。
  - 1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.

- 
- 2) բյուջեն.
- 3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.
- 4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.
- 5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.
- 6) շրջակա միջավայրի վրա ներգրծությունը.
- 7) հասարակական միջոցառումների ծրագրերը.
- 8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.
- 9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).
- 10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.
- 11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.
- 12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղյուրները.
- 13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:
4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:
5. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձեռվ, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում նաև եւ դրանով:
6. Հանրային նշանակության, ինչպես նաև բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները եւ դրանց փոփոխությունները:

#### **Հոդված 8. Տեղեկատվության ազատության սահմանափակումները**

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ

---

մասով սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.
  - 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիքությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
  - 3) պարունակում է իրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
  - 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (քժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
  - 5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:
2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:
  3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝
    - 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.
    - 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
    - 3) չորամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային գարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

#### **Հոդված 9. Հարցումը ներկայացնելու եւ քննարկելու կարգը**

1. Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաս-

տատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

2. Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենտդրությամբ սահմանված կարգով գործավարության մյուս ձեւերից առանձին:
3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝
  - 1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.
  - 2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.
  - 3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, քացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:
4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:
5. Բանավոր հարցմանը դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը: Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝
  - 1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել այնտական հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու քարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը.
  - 2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.
  - 3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:
6. Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմանը դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին:

- 
7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.
- 1) Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
  - 2) Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
  - 3) Եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմոցին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմոցին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:
8. Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:
9. Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմանը դիմոցին իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:
10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դրւու է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմոցին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:
11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմոցին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրի-

նողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

#### **Հոդված 10. Տեղեկությունների տրամադրման պայմանները**

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:
2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.
  - 1) բանավոր հարցումներին պատասխաննելիս.
  - 2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.
  - 3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.
  - 4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխաննելիս.
  - 5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.
  - 6) տեղեկության տրամադրումը մերժելիս:
3. Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:
4. Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

#### **Հոդված 11. Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը**

1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

- 
2. Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի իմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեսպերի:
  3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկետվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմումի՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկ մաս կարգը:
  4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմնի կամ դատարան:

**Հոդված 12.** Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունները

Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

- 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը.
- 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.
- 3) տեղեկություններ փնտողը անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.
- 4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.
- 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

**Հոդված 13.** Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի դեկավարը:
2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- 
- 1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.
  - 2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձևերը:
  - 3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

**Հոդված 14.** Պատասխանատվությունը տեղեկատվության ազատության խախտման համար

1. Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:
2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

**Հոդված 15.** Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

**Ո. Զոշարյան**

2003թ. հոկտեմբերի 22

Երեսան

ՀՕ-11-Ն

## ՀՀ քրեական օրենսգիրը

**Հոդված 144.** Անձնական կամ ընտանեկան կյանքի նասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը

Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվորյան միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով՝

պատմվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

**Հոդված 145.** Բժշկական գաղտնիքը հրապարակելը

1. Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների նասին տեղեկություններ հրապարակելը՝

պատմվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրանցնելու կամ որոշակի գործունեությամբ գրանդելու իրավունքից գրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք անզգությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ՝

պատմվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրանցնելու կամ որոշակի գործունեությամբ գրանդելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Հոդված 146.** Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը

1. Քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցություն-

ների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

#### **Հոդված 148.** Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը

Անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող եւ սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ հյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վճառ է պատճառել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

#### **Հոդված 164.** Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդունելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը՝

1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդունելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրիհանապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տա-

թի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադվելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

### **Հոդված 169. Որդեգրման գաղտնիքը հրապարակելը**

Որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ հրապարակելն այն անձի կողմից, ով որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք, կամ այդ գաղտնիքն այլ անձի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը՝

պատմվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադվելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

### **Հոդված 278. Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թարցնելը**

1. Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծող դեպքերի, իրադարձությունների, փաստերի կամ երեւությների վերաբերյալ տեղեկություն թարցնելը կամ աղավաղելը, որը կատարվել է քննակշռյանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից՝

պատմվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսիարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադվելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

### **2. Նույն արարքները, որոնք՝**

- 1) կատարվել են պաշտոննեական դիրքն օգտագործելով,
- 2) անզգությամբ վնաս են պատճառել մարդու առողջությանը կամ առաջացրել են մարդու մահ կամ այլ ծանր հետեւանքներ՝

պատմվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյու-

---

բապատիկից հինգիարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից գրկելով՝ մինչեւ երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

**Հոդված 282.** Ծրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ բարցնելը կամ դրանք դիտավորյալ աղավաղելը

1. Պաշտոնատար անձի կողմից բնակչությունից մարդկանց կյանքի եւ առողջության համար վտանգավոր ռադիոակտիվ, թիմիական, մանրեաբանական կամ այլ կենսաբանական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ այլ վտանգավոր տեղեկություններ բարցնելը կամ այդպիսի աղտոտման վերաբերյալ դիտավորյամբ ակնհայտ կեղծ տեղեկություններ հաղորդելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգիարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից գրկելով՝ հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անզգությամբ պատճառել է մարդու մահ, մարդկանց զանգվածային հիվանդություններ, կենդանիների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետեւանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

---

## ՀՀ ՕՐԵՆՔԸ

# Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հնդունված է 2003 թվականի դեկտեմբերի 1-ին

### Հոդված 1.

1. «Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով»:

# Եվրոպայի խորհուրդ Նախարարների կոմիտե Հանձնարարական Rec (2002)2

Նախարարների կոմիտեից՝ անդամ պետություններին

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ

ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից՝  
փոխնախարարների 784-րդ նիստում, 2002թ. փետրվարի 21-ին

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15ր հոդվածի համաձայն՝

**նկատի ունենալով**, որ Եվրոպայի խորհրդի նպատակը իր անդամների միջեւ առավելագույն միաբանության հասնելը, նրանց ընդհանուր ժառանգություն հանդիսացող սկզբունքների եւ իդեալների պահպանումն ու իրազրծումն է,

**հաշվի առնելով**, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 19-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եւ իհմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 8-րդ եւ 10-րդ հոդվածները, ՍՍԿ-ի՝ Տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության եւ բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության կոնվենցիան (ընդունված Օրիուսում, Դանիա, 1998թ. հունիսի 25-ին), Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության՝ 1981թ. հունվարի 28-ին ընդունված կոնվենցիան (ETS No. 108), 1982թ. ապրիլի 29-ին ընդունված՝ Արտահայտման եւ տեղեկատվության ազատության մասին հոչակագրը, ինչպես նաև՝ Խորհրդի «Պետական իշխանությունների մոտ պահպող տեղեկատվության մատչելիության վերաբերյալ» R (81) 19 հանձնարարականը, «Պետական մարմինների մոտ պահպող անձնական տվյալների՝ երրորդ անձանց փոխանցման վերաբերյալ» R (91) 10 հանձնարարականը, «Վիճակագրական նպատակներով հավաքված եւ մշակված անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ» R (97) 18 հանձնարարականը, ապա նաև՝ «Արխիվների մատչելիության հարցում համաեվրոպական քաղաքականության վերաբերյալ» R (2000) 13 հանձնարականը,

**նկատի ունենալով** բազմակարծիք, ժողովրդավարական երկրներում պետական կառավարման քափանցիկության եւ հանրության համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկատվության

դյուրամատչելիության նշանակությունը,

**համարելով**, որ պաշտոնական փաստաթղթերի՝ հավասարության եւ հստակ գործող կանոնների վրա հիմնված լայն մատչելիությունը՝

- **բոլոր է տալիս հանրությանը՝ համարժեք տեսակետ ունենալու քննադատական կարծիք ձեւավորել իրենց ապրած հասարակության մեջ տիրող իրավիճակի եւ իրենց դեկավարող իշխանությունների մասին՝ ընդունին խրախուսելով հանրության մասնակցությունը համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրներին,**

- **խթանում է կառավարման մարմինների կատարողականությունն ու արդյունավետությունը եւ նպաստում նրանց պարկեշտության պահպաննը՝ հնարավորություն տալով հեռու մնալ կոռուպցիայի վտանգներից,**

- **նպաստում է կառավարման մարմինների՝ իբրև պետական ծառայության տեսակների, օրինականության հաստատմանը եւ հասարակության կողմից պետական մարմինների հանդեպ վստահության ամրապնդմանը, ըստ այդմ՝**

*Ակատի առնելով*, որ անդամ պետություններն առավելագույն ջանք պետք է գործադրեն՝ ապահովելու հանրության համար պաշտոնական փաստաթղթերում պարունակող տեղեկությունների մատչելիությունը՝ մնալով մյուս իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության դիրքերում,

*ընդգծելով*, որ ստորեւ ամրագրված սկզբունքները նկազագույն չափանիշներ են ներկայացնում, եւ որ դրանք չպիտի ընկալվեն ի վես տվյալ երկրի այն օրենքների ու կանոնակարգերի, որոնցով արդեն խև վերապահված են պաշտոնական փաստաթղթերին հասու դառնալու ավելի լայն իրավունքներ,

*հաշվի առնելով*, որ սույն հանձնարարականը հիմնականում անդրադառնում է պաշտոնական փաստաթղթերից օգտվելու վերաբերյալ մարդկանց ներկայացրած հայտերին, պետական մարմինները պետք է պարտավորվեն իրականացնել ակտիվ հաղորդակցման քաղաքականություն՝ նպատակ ունենալով հանրությանը մատչելի դարձնել ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգտակար դիտվել բաց, ժողովրդավարական հասարակության համար,

*առաջարկում է անդամ պետությունների կառավարություններին՝ իրենց օրենսդրության մեջ եւ գործնականում առաջնորդվել սույն հանձնարարականում ամրագրված սկզբունքներով:*

## I. Սահմանումներ

Սույն հանձնարարականի նպատակներով՝ «Պետական մարմիններ» նշանակում է.

- i. Կառավարությունը եւ կառավարման մարմինները՝ համազգային, շրջանային կամ տեղական մակարդակում,
- ii. Փիզիկական կամ իրավաբանական անձինք, որքանով որ նրանք կատարում են պետական գործառույթներ կամ իրականացնում վարչական իշխանություն՝ տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված կարգով,

«Պաշտոնական փաստաթուղթ» նշանակում է ցանկացած ձեւով գրառված այն տեղեկատվությունը, որը կազմվել կամ ստացվել է պետական մարմինների կողմից, պահպում է նրանց մոտ եւ առնչվում է այս կամ այն պետական կամ վարչական գործառույթին՝ բացառությամբ նախապատրաստման փուլում գտնվող փաստաթղթերի:

## II. Տարածելիությունը

1. Սույն հանձնարարականը վերաբերում է միմիայն պետական մարմինների մոտ պահպող պաշտոնական փաստաթղթերին: Այդուհանդերձ, անդամ պետությունները պետք է իրենց երկրի օրենսդրության եւ գործող կարգի համաձայն քննեն ու պարզեն, թե որքանո՞վ են սույն Հանձնարարականի սկզբունքները կիրառելի օրենսդրի մարմինների եւ դատաիրավական իշխանությունների մոտ պահպող տեղեկատվության նկատմամբ:
2. Սույն հանձնարարականը որեւէ կերպ չի ազդում Անձնական տվյալների ավտոմատ մշակման դեպքում անհատների պաշտպանության կոնվենցիայով նախատեսված՝ մատչելիության իրավունքի կամ մատչելիության սահմանափակումների վրա:

## III. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության ընդհանուր սկզբունքը

Անդամ պետությունները պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը՝ հայտ ներկայացնելու դեպքում ստանալ պետական մարմինների մոտ պահպող պաշտոնական փաստաթղթերին: Այս սկզբունքը պետք է կիրառվի առանց որեւէ (այդ թվում՝ ազգային պատկանելության) խտրականության:

---

## IV. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության հնարավոր սահմանափակումները

1. Անդամ պետությունները կարող են սահմանափակել պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքը: Սահմանափակումները պետք է հստակ ամրագրված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակության պայմաններում եւ նպատակամղված լինեն պաշտպանելու.
  - i. ազգային անվտանգությունը, պաշտպանությունը եւ միջազգային հարաբերությունները,
  - ii. հասարակության անվտանգությունը,
  - iii. քրեական գործողությունների կանխումը, հետաքննությունը եւ դատական կարգով հետապնդումը,
  - iv. անձի անձեռնմխելիությունը եւ անձի մյուս օրինական շահերը,
  - v. առեւտրային եւ տնտեսական այլ շահերը՝ մասնավոր, թե հանրային,
  - vi. կողմերի հավասարությունը՝ կապված դատական վարույթների հետ,
  - vii. քննությունը,
  - viii. պետական մարմինների կողմից իրականացվող տեսչական ստուգումները, հսկողությունը եւ վերահսկողությունը,
  - ix. տվյալ պետության տնտեսական, դրամավարկային եւ արժութային քաղաքականությունը,
  - x. որևէ հարցի ծառայողական նախապատրաստման ընթացքում պետական մարմինների ներսում կամ դրանց միջեւ վարվող խորհրդակցությունների գաղտնապահությունը:
2. Տվյալ փաստաթղթի տրամադրումը կարող է մերժվել, եթե պաշտոնական փաստաթղթում պարունակվող տեղեկությունների բացահայտումը վնասում է կամ կարող է վնասել 1-ին պարբերության մեջ նշված որևէ շահի, բացառությամբ այն դեպքերի, եթե բացահայտման հարցում գերակայում է հասարակության շահը:
3. Անդամ պետությունները պետք է նտածեն սահմանելու այնպիսի ժամկետներ, որոնց լրանալու դեպքում 1-ին պարբերության մեջ նշված սահմանափակումներն այլևս չեն գործի:

## **V. Պաշտոնական փաստաթղթերի ստացման հայտերը**

1. Պաշտոնական փաստաթղթն ստանալու հարցումը հայցողը պարտավորված չենք է լինի հիմնավորել:
2. Թղթաբանությունը պետք է հասցվի նվազագույնի:

## **VI. Պաշտոնական փաստաթղթերի ստացման հայտերի մշակումը**

1. Պաշտոնական փաստաթղթն ստանալու հայտը պետք է քննարկվի պետական այն մարմինը, որի մոտ պահպում է տվյալ փաստաթութը:
2. Հայտերը պետք է քննարկվեն հավասարության սկզբունքի հիման վրա:
3. Հայտը պետք է քննարկվի շուտափույթ կարգով: Այդ հարցով որոշումը պետք է կայացվի, ըստ պատկանելույն փոխանցվի եւ իրազործվի որոշակի ժամանակահատվածում, որը կարող է նախապես սահմանված լինել:
4. Եթե պահանջվող պաշտոնական փաստաթութը տվյալ պետական մարմնի մոտ չի պահպում, ապա վերջինս պետք է, որքանով որ հնարավոր է, հայցողին ուղղորդի հաճապատասխան պետական մարմնի:
5. Գերատեսչությունը պետք է հնարավորինս օգնի հայցողին՝ գտնելու պահանջվող պաշտոնական փաստաթութը, սակայն այն պարտավորված չէ բավարարել հայտը, եթե այն վերաբերում է մի փաստաթղթի, որը հնարավոր չէ գտնել:
6. Հայտը կարող է մերժվել, եթե այն ակնհայտորեն անհիմն է:
7. Հայտն ամրողությամբ կամ մասամբ մերժող պետական մարմինը պետք է ներկայացնի մերժման հիմքերը:

## **VII. Պաշտոնական փաստաթղթերի տրամադրման եղանակները**

1. Պաշտոնական փաստաթղթի տրամադրման հնարավորություն տալու դեպքում պետական մարմինը պետք է թույլատրի բնօրինակի մատչելիությունը կամ տրամադրի դրա պատճենը՝ հնարավորության սահմաններում հաշվի առնելով հայցողի արտահայտած ցանկությունը:

- 
- Եթե պաշտոնական փաստաթղություն եղած տեղեկատվության մի մասի վերաբերյալ կա որենէ սահմանափակում, ապա գերատեսչությունը պետք է, այդուհանդերձ, հնարավորություն ընձեռի ծանրանալ դրանում պարունակվող մնացած տեղեկություններին: Ցանկացած բացքողությունը պետք է հստակորեն մատնանշվի: Այնուամենայնիվ, եթե փաստաթղի մասնատված տարրերակն ապակողմնորշող է կամ անիմաստ, ապա նման թույլտվությունը պետք է մերժվի:
  - Պետական գերատեսչությունը կարող է պաշտոնական փաստաթուղթը տրամադրել հայցողին՝ ուղղորդելով դեպի այլնտրանքային դյուրամատչելի աղբյուրները:

## **VIII. Պաշտոնական փաստաթղերի տրամադրման համար գանձվող վճարները**

- Պաշտոնական փաստաթղերի բնօրինակներին տեղում ծանրանալը պետք է սկզբունքորեն լինի անվճար:
- Պաշտոնական փաստաթղի պատճենի դիմաց հայցողից կարող է գանձվել վճար, որը պետք է լինի ողջանտության սահմաններում եւ չպետք է գերազանցի պետական մարմնի կողմից կատարված իրական ծախսը:

## **IX. Վերանայման կարգը**

- Հայցողը, ում՝ պաշտոնական փաստաթղից օգտվելու հայտը մասմբ կամ ամրողապես մերժվել է կամ չի ընդունվել, կամ չի բնարկվել VI սկզբունքի 3-րդ կետում նշված ժամկետների շրջանակում, պետք է հնարավորություն ունենա օգտվել վերանայման կարգի՝ դատարանում կամ օրենքով սահմանված մեկ այլ անկախ եւ անկողմնակալ ատյանում:
- Հայցողը պետք է մշտապես հնարավորություն ունենա օգտվելու վերանայման շուտափույթ եւ ոչ քանի արարողակարգից, որը ենթադրում է կամ տվյալ պետական մարմնի կողմից հայտի վերաբնարկում, կամ վերանայում՝ ըստ 1-ին պարբերության մեջ նշված կարգի:

## **X. Լրացուցիչ միջոցառումներ**

- Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի
  - հանրությանը տեղեկացնեն պաշտոնական փաստաթղերի մատ-

- 
- չելիության իրավունքի եւ այդ իրավունքից օգտվելու եղանակների մասին,
- ii. ապահովեն պետական ծառայողների պատրաստվածությունը՝ այդ իրավունքի իրագործմանն առնչվող իրենց պարտականությունների եւ պարտավորությունների հարցում,
  - iii. ապահովեն հայցողների՝ իրենց իրավունքից օգտվելու հնարավորությունը:
2. Այդ նպատակով, պետական մարմինները հատկապես պետք է.
- i. պատշաճ կարգով վարեն իրենց փաստաբերը, որպեսզի դրանք դյուրամատչելի լինեն,
  - ii. կիրառեն հստակ եւ հաստատված կանոններ՝ իրենց փաստաբերի պահպանման ու ոչնչացման համար,
  - iii. հնարավորության սահմաններում մատչելի դարձնեն իրենց պատասխանատվության տակ գտնվող հարցերի կամ գործունեության տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը, ասենք՝ կազմելով իրենց մոտ պահպող փաստաբերի ցանկեր կամ մատյաններ:

## **XI. Պետական մարմինների նախաձեռնությամբ իրապարակվող տեղեկատվությունը**

Պետական գերատեսչությունը պետք է սեփական նախաձեռնությամբ եւ ըստ նախատակահարմարության անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ հրապարակելու իր մոտ պահպող տեղեկատվությունը, եթե նման տեղեկությունների տրամադրումը ծառայում է պետական կառավարման քափանցիկության եւ կառավարման մարմինների կատարողականությունը խրանելու գործին կամ կարող է նպաստել հանրության համար հետաքրքրություն ներկայացնող խնդիրներում հասարակության իրազեկված մասնակցությանը: